

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել **ԱՆՎՃԱՐ**:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте *Электронной библиотеки Арцаха*, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать **БЕСПЛАТНО**.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - *Artsakh E-Library* website, where you can find and download for **FREE** scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlb.am/>

E-mail: info@artsakhlb.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlb.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhelibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

Memoranda
Study



Ueber die Bedeutung der
 Geschichte für die Gegenwart
 von Heinrich Heine
 Leipzig 1840

Մարտի
Միջին

ԱՆՆՈՒԵԼԻ
ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ



ԵՐԵՎԱՆ
«ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐԱԴ»
1990

Հրատարակվում է հայոց Մեծ եղեռնի 75
և բանաստեղծի ծննդյան 65-ամյակի առթիվ

Սևակ Պ. Ռ.
Ս 411 Անլուելի զանգակատուն: Պոեմ (Պարույր Սևակ.—Եր.:
Խորհրդ. գրող, 1990.— 256 էջ

Գրքում զետեղված են «Անլուելի զանգակատուն» հանրահայտ
պոեմը և Սևակի «Դիմանկարի ամբողջացման համար» հողվածը՝
նվիրված Մեծն Կոմիտասին:

4702060201 (31) — 22
705(01)89

ԳՄՂ 842Դ5

ISBN 5—550—00556—5

© «Խորհրդային գրող»
Ճնափորման համար, 1990

44830

Յ Ա Յ Գ Ա Լ Ո Ւ Յ Ս Ի Հ Ա Մ Ա Զ Ա Ն Գ՝

Ղ Ո Ղ Ա Ն Զ Ա Վ Ե Տ Ի Ս Ի

Հազար ութ հարյուր վաթսունին թվին
Հայոց այգիներն ի՞նչ պտուղ տվին.
Հայոց արտերում ի՞նչ բերք էր հասել,—
Դժվար է ասել:

Սակայն այդ թվին Մայր Հայաստանի
Արզանդը եղավ սրբորեն բեղուն:
Մի մանուկ ծնվեց Լոռվա Դսեղում...
Նա հետո պիտի դառնա պատանի,
Եվ երիտասարդ, և այր իմաստուն,
Անբախտ Մարոյին լացով սպանի,
Մեր հառաչանքը հասցընի Աստծուն:
Մրմուռից դաղված նրա բերանով
Սարոյի նանը պիտի ողբ ասի,
Մարա զորքի հետ Դավիթը խոսի,
Գիջորը կանչի. «Էստի՛ համեցեք...»:
Նա պիտի երգի՝ ինչ է կամեցել
Իր մոխրակալած-հրակեզ հոգին
Եվ՝ որքան տրտում—նույնքան կենսագին՝

Տարիներ հետո նա պիտի դառնա
Մի ծողողորդի ազնիվ կենսագիր...
Ինչու՞ն է թվին, Լոռուց շատ հեռու՝
Անաստույր լավար խորքերում



Մեկ ուրիշ մանուկ լուս աշխարհ եկավ:

Մինչ հայրը նրա՝ Գևոն կոչկակար,

Գոգնոցը հանեց, արխալուղ հագավ,

Հարևան-դրկից՝ մի-մի շիշ օղով՝

Նրա տուն մտան՝ աչքալուսանքի:

Հետո հերթն եկավ կանանց հոսանքի.

Մի թաս խավիժով կամ ձվածեղով՝

Ծննդկանի շուրջ նստեցին նրանք՝

Որդուն մաղթելով արևշատություն,

Նորատի մորը՝ շուտ ապաշխարանք,

Աղվորիկ մի հարս,

Բարի տատություն...

.....
.....

Երևի այդօր—

Եթե ոչ մարդկանց,

Գեթ ամենալուր և ամենագոր բնության համար—

Տոն էր անսովոր.

Չէ որ նա գիտեր, թե ում է ծնել,

Լուս էր չէ որ,

Թե ինչ նվագներ և ինչ անհամար,

Ինչ հայաշխարհիկ երգեր են հնչում

Այդ երկու թխլիկ նորածինների

Դեռ ոչինչ չասող առաջին ճիչում...

Երևի այդօր ցերեկը ձգվեց՝

Քնից նոր զարթնած կտրիճի նման,

Իսկ սովերները՝

Հարված սպասող շնիկների պես պոչերը քաշած՝

Լուռ կծկվեցին...

Երևի ահեղ ջրվեժներն այդօր

Հոսեցին անձայն, ինչպես նկարում,

Եվ լուսը երգեց,

Քարը պար եկավ...

Անատուլուի ավազուտներում երևի այդօր

Մարդիկ—քնի մեջ—ըմպեցին զովք Լոռվա ձորերի,

Ջահել այրու պես ծարավ արտերը և այգին պապակ

Հագուրդ ստացան կրքոտ Դևբեդի շրից անապակ...

Իսկ Լոռվա ձորում քուն մտած մարդկանց

Երազ այցելեց,

Մի հրաշալի՛ց-անսովոր՝ երազ.

Հարավից չված հազարան մի հավք,

Սոխակի ճայնով-ուժով անգըղի,

Աքլորների հետ լուսայգ շեփորեց կտուրներն ի վար,

Հետո դարավոր կաղնու փչակը կտցով քչփորեց

Եվ—մե՛կ էլ հանկարծ—

Իր կտցի վրա այնտեղից հանեց

Ծողեր ծալծըլված,

Ծողեր դարսիդարս՝

Օձունի վանքի Ծարակնոցի պես:

Մինչ այդ շողերը, ծալ-ծալ բացվելով,

Հենց այն է պիտի—ծլընգ հա՛ ծլընգ—զնգային կարմիր,

Հազարան հավքը հրթիռվեց-զնաց՝

Վերև սուրացող ասուպի նման,

Եվ... թառե՛ց արդյոք Լուսաստղի վրա,

Թե՛ ինքը դարձավ Լուսաստղը մի նոր...

...Երևի այդօր—քանի՛ դար հետո—

Երկինք ու երկիր հաշտվեցին նորից...

...Երևի այդօր—քանի՛ դար հետո—

«Հայաստան» բառից պոկվեցին-ընկան

«Ռուսա»-ն ու «Տաճկա»-ն...

ՂՈՂԱՆՋ ՈՐԲՈՒԹՅԱՆ

Իր ժողովրդի զավակն իսկական
 Ժողովրդի պես ինքն էլ որք մնաց.
 Նա նույնիսկ չկար և մի տարեկան,
 Երբ... մայրը գնաց:

Ա՛խ, եթե գնաց՝
 Նրա լույս հոգին թող որ համբառնա,
 Արժանի դառնա
 Իր հավատացած երկնային գահին:

Բայց ինչո՞ւ գնաց Հայոց Թագուհին:

Մնար
 Ու ծիծ տար
 Իր Սողոմոնին—մեր Կոմիտասին:
 Մնար
 Ու հոգար
 Մեր միևուճարի— իր որդու մասին:

Մնար ու նրան մայրություն աներ.
 Հուսահատության, տրտմության պահին,
 Նրա ճակատի ամպերը վաներ,
 Նախ՝ նրա ոտի
 Ու հետո՝ սրտի
 Փշերը հաներ:

Մնար, որ հետո,
 Շա՛տ ու շա՛տ հետո,
 Երբ որդին քայլեց մույթ արահետով,
 Որ անդարձ եղավ ու եղավ անել,
 Թերևս նա իր մայրական սրտով
 Իր միևուճարի ու մեր հանճարի
 Սև ցավը տաներ...

Մնար,
 Որ նրան մի ողջ ժողովուրդ
 «Մեծ Մա՛ր» անվաներ,
 «Վեհամա՛ր» կոչեր.
 Մի ողջ ժողովուրդ սուրբ ձեռքը նրա
 Իր բերնին տաներ,
 Փեշերը պաշեր...

Մնար... Չմնաց:

Գեթ հայրը մնար...
 Բայց հայրն էլ գնաց,
 Երբ որդին չկար տասը տարեկան:
 Իր ժողովրդի զավակն իսկական՝
 Ժողովրդի պես նա որբուկ մնաց:
 Նա մնաց անտուն, մնաց բնավեր:
 — Տո լա՛ճ տնավեր...
 Եղավ անդադար, եղավ բնավեր:
 — Տո լա՛ճ տնավեր...

Գրկանոց հասակ, վիրավոր սրտիկ,
 Աչքերում՝ արցունք, ճակատին՝ քրտինք,
 Աշնան պաղ քամուն ու ձմռան ցրտին
 Որբուկն ո՛ր մնա, որբուկն ո՛ր գնա,
 Որտե՛ղ տաքանա, ո՛ւմ թոնրան շրթին:
 — Տո լա՛ճ տնավեր...

Որբուկի սիրտը՝ ապակի փշուր,
Ա՛խ, դրսից կարմիր— ներսից փուշ մասուր,
Որբը՝ մոլոր գառ, աշխարհքը՝ մսուր,—
Ո՛վ նայի վրան կամ ո՛վ տա նրան
Մի պատառ ժպիտ, շոյանք մի փշուր:
— Տո լա՛ճ տնավեր...

Գունեղուտ երգեց— ձայնը՝ կլկլան,
Բերանն էր կերգեր, իսկ աչքը կուպար,
Գունչիկից կեկներ ծխի տաք քույան,
Մրտիկն էր երվում, սրտիկ սնավո՛ր,
Ցավերն էին փուքս, անձիկն էր քուրան...
— Տո լա՛ճ տնավեր...

Երկու ձիգ տարի նա այսպես պիտի
Ման գա երգելով ու շուրջը դիտի
Մի հացի հույսով կամ մի հավկիթի,
Միտքը՝ հազար տեղ, աչքը՝ մի կետի...
Սկիզբը խոց էր, վերջը՝ ո՛վ գիտի...
— Տո լա՛ճ տնավեր...

ՂՈՂԱՆՋ ՑՆԾՈՒԹՅԱՆ

Գևոն չթողեց որդուն ապարանք,
Ոչ էլ Թագուհին թողել էր գանձեր,
Բայց ինչ ունեին-չունեին նրանք՝
Իրենց որբացած որդուն էր անցել

Իսկ ի՞նչ ունեին: Լոկ ձայն կլկլում.—
Մերթ այնպես մեղմիկ,
Ասես թե գինով լցնում են կույան.
Մերթ այնպես գնգուն,
Ասես թե կիրձում հովն է շնկշնկում.
Մերթ այնպես խաղաղ,
Կաքավն է ասես սաղմոսում «կղզա».
Մերթ այնպես հորդուն,
Ասես ընկել ես ջաղացի ջրտուն...

Նրանք գիտեին իրենց Կուտինան՝
Անատուրի խավար խորքերում:
Բայց նրանք, դիցուք, և գիտենային,
Թե իրենց պապի պապին ու քեռուն
Գաղթի ճամփան է բերել հասցրել
Ինչ-որ Տղնայից այս Կուտինային:

Այսքանը թեկուզ և գիտենային:
Ո՛վ պատմեր սակայն, որ գյուղն այդ Տղնա
Եվ Մասյաց փեշը Գողթանն է չքնաղ:

Արդեն կիսակուր՝ տաճկախավարից,
Ո՛վ պատմեր նրանց Գողթան գավառից,
Գողթան գավառի երգասաններից՝
Վիպոդ-վիպասան մեր գուսաններից:

...Փանդիոը գրկած ու վինը ծնկան,
Իրենք իրենցով ու դիցով լեցուն՝
Դուռ-դարպասների սալքարին նստել,
Երգել են նրանք վեպը Մաթինկան,
Աչքերն են գովել Ալանաց դստեր,
Եվ խոսքը խելոք, և մեջքը բարակ,
Եվ Արտաշիսի սիգալը արագ՝
Չեղքին շիկափոկ-ոսկեօղ պարան...
Իսկ Արտավա՛զըը, որին և տարան
Քաջքերը ի վեր Ազատն ի Մասիս...
Իսկ հապա հպարտ Տրդատի՛ մասին,
Որ սեզ սիգալով՝
Իր հուժկու քայլով
Գետերի թմբեր և ամբարտակներ
Ավիրեց տարավ...
Իսկ Շամիրա՛մը պագշոտ
Ու տաքշող,
Գեղեցիկ ապրած-գեղեցիկ մեռած
Գեղեցիկ Արա՛ն...

Հաճախ կուր ծնված, անուս ու թերուս,
Բայց միշտ ողողված կրակով ներքին,
Իրենց յոթնադի տավիղը ձեռքին՝
Նրանք են երգել ծնունդն այն աստձո,
Որ հուր հեր ուներ, բոց ուներ մորուս,
Երբ երկնում էր ծով, երկիր ու երկին,
Երբ ծովս էր ելնում եղեգան փողից,
Երբ բոց էր ելնում եղեգան փողից...

Երգի է են նրանք մեր պտղած հողից,
Գինուց, խաղողից,
Մեր սրտի դողից,
Երգել են նրանք մեր ցորեն հացից,
Մեր խինդ ու լացից,
Մարտում ընկածից.
Խորհել՝ երգելով,
Նվագով ցավել,
Երգել ձեռքերով՝
Պարել-կաքավել...

Ո՛վ է մեզ տվել, եթե ոչ նրանք,
Փող ու թմբուկին խաղացող մատներ,
Լեռն ի վար վարգող եղնիկի ոտներ,
Եվ նավասարդյան թարմ առավոտներ,
Եվ առավոտներ վառ Վարդավառի,
Եվ ծովս ծխանի՝ հայրենի կրակ, —
Ո՛վ է մեզ տվել, եթե ոչ նրանք՝
Վիպասանները Գողթան գավառի:

...Ու՛մ մտքով կանցներ, թե Գողթնից գաղթած,
Գերանը ջարդած ու սյունը խախտած
Ինչ-որ տնակի կիսախավարում,
Գողթնից շատ հեռու՛, մի խորթ գավառում,
Որտեղ վարակը օտար շարավի
Ուտում էր մարմին ու հոգի կրծում, —
Ո՛ւմ մտքով կանցներ, և ո՛վ էր կարծում,
Թե պիտի շողա Գողթան շատավիղ,
Պիտի բոցկլտա Գողթան պայազատ՝
Նույնքա՛ն հարագատ,
Նույնքան հա՛յ ազատ,
Որքան և նրանք.
Արժանի ժառանգ
Գողթան գավառի հայ գուսանների,

Փողիար փանդոահար վիսպասանների՝
Օտարի շնչից զանազանելի,
Այդքանով՝ նաև անհասանելի...

Ո՛վ է հասկացել քմայքը բախտի,
Եվ այն էլ... հայոց.
Հանկարծ կեռմանը ազգավեր գաղթի՝
Կաթանը վայոց,
Դառնում է ճամփա համահավաքման,
Խոյանք է դառնում թոփչքը անկման...

Ո՛վ է հասկացել քմայքը բախտի,
Եվ այն էլ... հայոց:

ՂՈՂԱՆՋ ՀՈՒՍՈ

Ութսունմեկ թիվ: Վաղարշապատ: Էջմիածին:
Միրգ ու փոշի: Անխիղճ արև:
Շողամրցում Մասիսների, Արագածի:
Սրբագործված հին-հին քարեր:
Եվ Մայր Արաքս: Եվ Մայր Տաճար:
Տաճարի շուրջ՝ սուրբ-սուրբ վանքեր,
Հնչող,
Շնչող,
Կանչող զանգեր...

Եվ ճեմարան՝ մտքի կաճառ:

Ճեմարանի բակում արձակ,
Որտեղ էլ որ աչք ես ածում՝
Զարմանալի հավաքածու
Խոսվածքների, տարազների:
Ու բոլորի դեմքի վրա՝
Վա՛խ, սպասո՛ւմ, անքնություն,
Խոսուն հետքեր երազների:

Ամեն մեկը՝ մի գավառից,
Եվ բոլորը՝ դեռ աղվամազ:
Ամեն մեկը խիտ խավարից՝
Երազում է լույսի մի մաս,
Նույնն է ուզում.
Ուտ՛ում, ուտ՛ում...

Եվ նրանց մեջ՝ սրան նայիր,
 Հագին տարազ տաճկահայի.
 Կարմիր շապիկ, կանաչ վարտիք՝
 Վրան պնդած մազե գոտիկ,
 Նախշուն գուլպա՝ վրան զոլեր,
 Ու պոչավոր մաշված սոլեր:
 Դեմքը՝ զունատ, բայց խորոտիկ,
 Իսկ հալացքը՝ քելե՛ր-ցոլե՛ր...

Ամենքն՝ իրար մոտիկ-մոտիկ,
 Իսկ նա՝ անվերջ մեն ու մենակ:
 Թե զարնեին արտին դանակ՝
 Մի պուտ արյուն դուրս չէր հոսի:
 Ո՞նց չմնա նա մեկուսի,
 Ո՞նց խառնըվի, ասի-խոսի,
 Թե... հայերեն վատ է խոսում:
 Բայց նա, մեկ էլ աստված գիտի,
 Թե ինքն ինչպե՛ս, ոնց է ուզում
 Ուսո՛ւմ, ուսո՛ւմ:

Սակայն նրան

Ո՛վ կընդունի, այն էլ... որտե՛ղ—
 Մի հոգևոր ուսումնարան,
 Որի սանը մի օր պիտի
 Հագնի սքեմ վարդապետի:
 Իսկ նա...

Եվ նա վաղը պիտի

Երգի ի լուր և ի վճիռ
 Համայն Հայոց Հայրապետի...

ՂՈՂԱՆՋ ՆԵՐՄԱՆ

Եվ նա սկսեց... թուրքերեն երգել:

Մանկական ծայնը՝ սկզբում կերկեր,
 Վայրկյաններ հետո ինքն իրեն գտավ,
 Հունի մեջ մտավ
 Ու զնա՛ց-զնա՛ց:

Կաթողիկոսը մթազնեց մնաց:

Մինչ հանկարծահաս զայրույթի ծնած
 Կրակը վառվեց ծեր աչքերի մեջ՝
 Հենց նոր սկսվող ժպիտը հանգավ:
 Առաջի՛ն անգամ,
 Առաջի՛ն անգամ

Ա՛ստ՝ Վեհարանի հին պատերի մեջ,
 Սրբապղծորեն թուրք երգ է մխում...
 Ա՛ստ՝ հայոց հոտի այս սուրբ փարախում,
 Հովվապետն ինքը ականջ է կախում
 Ինչ-որ մի մանկան անօրեն երգի...
 Ա՛ստ, ուր հնչել են մեղեդիք ոսկի՝
 «Հայր մեր», «Միայն սուրբ»,
 «Արեգակն աբդար»,
 «Ով զարմանալի»
 Կամ «Լսոք հուր խոթի ն»,
 Որ գրաբարն է հնչել դարեդար
 Եվ շարականն է հուզել բոլորին,—
 Ա՛ստ՝ Վեհարանի հին պատերի մեջ,

Առաջի՛ն անգամ,
 Առաջի՛ն անգամ
 Սրբապղծության մանանեխ ընկավ...
 Բայց Վեհափառը իր վեհ դերի մեջ՝
 Ինչպես վայել է՝ անայլալ մնաց:

Իսկ մանկան ե՛րզը... թա՛փ առավ զնաց:
 Գնա՛ց-բարձրացա՛վ,
 Եկա՛վ, ցածրացա՛վ,

Զարեքար ընկավ, պատեպատ խփվեց,
 Եվ հետո՝ կրկին պոկվե՛ց ու զնա՛ց,
 Մի վայրկյան օդում կախ ընկավ մնաց,
 Մի անտես թելով կարծես թե կապվեց
 Եվ, մի պահ հետո, հանկարծ ցած թափվեց,
 Թափվեց՝ նշենու ծաղկաթերթի պես,
 Հին վանքի ծեփի ճաքած շերտի պես...

Բառե՛րը... եղո՛ւկ: Իսկ ձա՛նը... զուլա՛ն,
 Այդպես լեռնային վտակն է կարող
 Զարերի վրա ծիծաղել ու լալ:
 Բառե՛րը... եղո՛ւկ: Իսկ ձա՛նը... գերո՛ղ.
 Մերթ բողոքում է ու զանգատ անում,
 Մերթ՝ դառնում այնպես վսեմ ու բարի,
 Կարծես հինավուրց այս Մայր Տաճարի
 Երկինք խոյացած զանգակատընում
 Կախել են մի նո՛ր-անլեզվա՛կ մի զանգ՝
 Մի համակ հուզանք...

Թվաց՝ ամպերն են բացխուփիկ խաղում,
 Թվաց՝ երկինքն է կապույտ ծիծաղում,
 Թվաց, թե շոգը հանկարծ կոտորվեց,
 Թվաց, թե մի հին երգում կատարվեց...

44890

Կաթողիկոսը մի պահ մոռացավ,
 Թե ինքը որտե՛ղ և ի՛նչ է անում,
 Ովքե՛ր են շուրջը՝ իր Վեհաբանում, —
 Եվ այդքանի մեջ,
 Ասես քնի մեջ,
 Նա դանդաղ ժպտաց
 Աչքերով իր թաց:
 Հետո ժպիտը սկըսեց հալվել
 Ու հետզհետե անհետ վերացավ,
 Մինչդեռ աչքերի թացն ավելացա՛վ,
 Թացն ավելացա՛վ ու ավելացա՛վ...

Փղձկացող Վեհը հազիվ բարբառեց.
 — Որդյա՛կ իմ, ո՛րք իմ...
 Ու ձայնը մարեց:



ԳՈՂԱՆՋ ԱՐԹՆՈՒԹՅԱՆ

Եվ վարանումից, վեճերից հետո,
Իբրև եզակի մի բացառություն,
Կանոնագրքի մի զանցառություն,
Անհայտ օրենքի չգրված կետով՝
Լոկ ծայնի՝ համար
Համարվեց նա սան:

Այդ կիզիչ ամառ
Նոր բոթեր-հասան:

Սուլթան Համիդը, ի փառս ալլահի,
Ի նշան ահի
Ամեն մի հայի
Եվ ի գիտություն
Իր երկար քթով ամեն տեղ մտնող
Այդ Եվրոպայի,—
Սուլթան Համիդը տարավ ու բերեց
Եվ—
Ապտակի տեղ,
Ապտակի նման—
Շրը՛խկ՝
«Հայաստան» բառը արգելեց,
Լեզվից, քարտեզից, գրքերից քերեց.
— Ջնջում եմ, չկա՛,
Ալլա՛հը վկա:
Եվ չի՛ էլ եղել,

Եվ չի՛ լինելու.
Քանդողը ես եմ,
Ո՛վ է շինելու...

Իսկապես, քանդածն ո՛վ պիտի շիներ,
Թե Ալեքսանդրը ցարն էլ իր հերթին՝
Սուրբ խաչելության նշանը սրտին,
Քրիստոնեական ժպիտը շրթին՝
Իր «ամենագույթ» ձեռքով ցարական
Հայոց պատմությունն, իբրև առարկա.
Արգելեց բոլոր հայ դպրոցներում.
— Չկա՛, չի՛ եղել...

Սուլթանն ու արքան
Չեղք ձեռքի տվին
Միևնույն թվին...

Իսկ ճեմարանում...
Թուրքախոս սանի կարոտ բերանում,
Անուշ մրգի պես, բայց չհավելով,
Ի՛նչ բառեր էին հիմա քաղցրանում,
Անհայտությունից հանկարծ բարձրանում
Քաջն Հայկ, Արամ,
Տիգրան Մեծ, Արա,
Մաշտոց, Եղիշե,—
Ո՛ր մեկին հիշել...

Եվ չժանգոտած հին բանալիքը մեսրոպյան տառի,
Նախ դժվարությամբ,
Բայց հետզհետե մի լուրջ բարությանբ,
Ուրախ զնգոցով անվերջ պտըտվեց կողպեքում բառի.
Ու բացեց դռներ՝
Մխրագործության,
Դարպասներ բացեց՝

Ահեղ փորձության,
Եվ զարմանալի՛, անհավատալի՛, ծջմարի՛տ դեպքեր՝
Սահադարձության...

Իր այդ բանալուն հավետ պարտական՝
Ընկել էր տղան մի կախարդական,
Մի հեքիաթային վիթխարի դղյակ,
Որին մինչև այդ ինքն էր անտեղյակ:

Ե՛վ սերտարանում, և՛ իր պաղ խցում,
Ազոտ լույսի տակ իր նավթավառի,
Մինչևիսկ եթե ականջն էր խցում՝
Փանդին էր հնչում Գողթան գավառի
Մարտ ու սեր երգող Ճայնեղ գուսանաց.

Ե՛վ խրախձանքը հին Վարդավառի,
Ե՛վ մեհյաններում մորթվող տավարի
Բառաչը խոպոտ, բոռոցը հորդուն
Տարածայնում էր արդեն կուսանաց
Ջրիստոսասեր թախժոտ մեղեդուն.
Հետո խուժում էր, մեղեդուն խեղդում
Վարի աղմուկը վարի քուշանաց,
Դոփ ու տրոփը բարբարոս հոնաց

Ու քաղաքակիրթ —

Նույնքան բիրտ —

Հունաց...

Թե՛ խժածայն սույլ հոռվմեական մարտափողերի,
Թե՛ բույթ խոխոռոց պարսից ահավոր մարտափողերի,
Թե՛ սելջուկական սրերի շառաչ,
Թե՛ կտրիճների մահազդու հառաչ,
Թե՛ մոնղոլական աղեղից պոկված երկաթե նետեր՝
Ասես թշնամու հեռավոր մատեր,
Որ աչք են հանում մի աջ ու մի ձախ.
Թե՛ վահանների ծնծղան անձիծաղ,

Թե՛ շեփորումը զորապետերի,
Խոլ ելևեջը արյան գետերի,
Հրդեհի ձեռքում հողմերն անսահման, —
Արձագանքում են նրա ականջում,
Եվ ինքնամոռաց՝ «Մարե՛ ջան, ամա՛ն», —
Տեղից ցատկելով ականա կանչում,
Ճչում է Ճայնով փոքրիկ գազանի
Եվ արթնացրնում մի քնած սանի,
Որ վեր է թռչում, նույնպես վախեցած,
Աչքերն է ճմլում, մազերն է խառնում,
Վերակացուի անվամբ սպառնում
Եվ, մինչև անգամ իր տված հարցի
Պատասխանի դեմ ականջը խցած՝
Հակում է նորից իր գլուխը ցած՝
Մագնիսի նման ձգող չոր բարձին...

ՂՈՂԱՆՋ ՀՍԿՄԱՆ

Ամիսներն են դանդաղ հոսում,—
Ու կարդում է նա Մանրուսում:

Թո՛ղ օրերը տրվեն վազքի,—
Նա զննում է մեռյալ Խազգիրք:

...Գանձե՛ր, գանձե՛ր՝ փականքի տակ,
Իսկ գանձերի տերն՝ անգիտակ:

Անբանալի-զոց գանձարան...
Կյանքըդ լինի թող տանջարան,
Թեկուզ մեռնես, բայց ման արի,
Փնտրիր, գտիր այդ բանալին:

Եվ աչքերն է ցավով թարթում:
— Տարիները թող որ վազեն:
Աչքերի դեմ, ջուն թե արթուն,
Զվերձանված խազե՛ր, խազե՛ր,—

Մեղեդիներ ու սաղմոսներ՝
Ոչ թե մինչև վանքի գմբեթ
Սուրբ խորանից երկարացած,
Այլ բրածո և քարացած.

Աստվածային վեսմ «Տաղ»-եր,
Որ ծալքերում մագաղաթի
Ժամանակն է փոշով թաղել.

Գանձի նման անգին «Գանձ»-եր,
Բայց ի՞նչ զգուտ, երբ չեն կարող
Կիզել անձեր,
Հոգի խանձել.

Արձանացած-անշարժ «Փ ո խ»-եր,—
Ինչպե՛ս շարժել, տեղից փոխել.

Դիակնացած «Զարոզ» ու «Ծառ»,—
Ինչպե՛ս գտնել հարության ճար.

«Ե ղ ի ց ի»-ներ, «Ա վ ե տ ի ս»-ներ,—
Ա՛խ, թե նրանց հնչող տեսներ...

Տարիներն են նորից հոսում,
Իսկ նրա դեմ՝ միշտ Մանրուսում,
Իսկ նրա դեմ՝ անվերջ Խազգիրք,—
Շո՛ւնչը, հոգի՛ն, տրո՛փն ազգի,
Որ դարձել է խազ ու նշան,
Մագաղաթի թերթեր խշշան:

Կարծես թե մարդ հանկարծակի
Ընկել է լուռ մի շիրմատուն,
Ու լեզվագուրկ շիրմաքարեր
Նախանձով են նաչում մարդուն:

Շիրմաքարե՛ր, շիրմաքարե՛ր, շիրմաքարե՛ր,
Եվ մամուռի ու փոշու տակ՝ շիրմազրե՛ր,
Եվ ի՛նչ խոսուն շիրմազրեր,—
Արժիվ, Աղավնեկ, Բագե, Վարուժնակ,
Տանուտրակ, Թիժեռն ու Տիրոցի ձագ.
Յուրաքանչյուրը ինչպե՛ս է ճախրել,
Եվ ո՛ր է իջել, ինչպիսի՞ թևով...
Աղաչանք, Հիվանդ, Տճգույն ու Լավկան.

Յուրաքանչյուրը ինչպե՛ս է տխրել,
 Ինչպե՛ս հառաչել, լացել ի՞նչ ձևով,
 Դարբին ու Երկաթ.
 Ինչպե՛ս էր զնգում,
 Ինչպիսի՞ սալի,
 Ինչպե՛ս էր մարդու հոգին պար ածում...
 Հովիվ ու Ոչխար.
 Ո՞նց էր շնկշնկում,
 Ի՞նչ քար ու սարի,
 Ի՞նչ շշուկով էր հոտը արածում...

Եվ նա վիրավոր աչքերն է թարթում:
 — Թո՛ղ ժամանակը անշտապ վազեր:
 Իսկ աչքերի դեմ՝ քնած թե արթուն՝
 Նորի՛ց բերանփակ խազեր ու խազեր:
 Խազեր Չայնուսի.
 Աստված չի՛ հուշի...
 Խազեր Բանալի.
 Ի՛նքըղ ման արի...
 Խազեր Կոչական ու Կետաղըրող.
 Մի՛ հուսահատվիր,
 Կարո՛ղ ես, կարո՛ղ...
 Խազեր Կիսանիշ և Ամանակի.
 Կարիք ես զգում
 Լոկ... ժամանակի՛...

ՂՈՂԱՆՋ ՄԵՂՍԱԿԱՆ

Իսկ ժամանակը իրենն էր անում:

Ամիսներն ամսին՝ անցնում են տարիք,
 Եվ զգում է նա... այդ ինչի՞ կարիք...

Դեղնած գրքերի փոշին բերանում՝
 Նա դուռն է բանում իր խոնավ խցի
 Ու դուրս է գալիս՝ փոքր-ինչ օդ ծծի:

Կանաչ բնավից անվայել թռնում
 Եվ այգիների ճամփան է բռնում:

Ճամփան տանում է դեպի Արարատ,
 Դեպի Մայր Արաքս՝ ճոխ դաշտի միջով:

Գարուն է գալիս:
 Օդը՝ անարատ,
 Բույրով ու թույրով, լույսով է առատ
 Ու նրա ջահել սրտի պես՝ ճիշով:

Գարուն է գալիս:

Չներն են լալիս,
 Որ առու-առու՝
 Կրքից պղտորված՝
 Իրար գիրկ վազեն:

Բացվող զարնան հետ վերադառնալիս՝
Զույգեր են կազմում տատրակը, բազեն:

Ծառեր ու խոտեր ծաղիկ են տալիս,
Որ բնագրական-բուսական սիրով
Իրար փոշոտեն:

Որսի դուրս գալիս՝
Զիչ է մնում թե գազաններն անգամ
Իրար հոշոտեն:

Իսկ սի՛րտը, սի՛րտը...
Իսկ սիրտը մարդու,
Սիրո հովերից ալլըս արթուն,
Գարնան գետի պես մերթ՝ վարար հորդում,
Մերթ՝ անձրևի պես լալիս է-լալի՛ս,
Ուզում է մեկին ասել.
«Ցանկալի՛ս»,
Ուզում է մեկին խեղդվելով ասել
«Իմ երա՛գ ու սե՛ր,
Դու ե՛րբ ես գալու»...

Գարուն է, գարուն:

Դադձի բուրմունքից հարբել է առուն
Եվ ափերին է մի գլուխ գարկվում ութաձև քալով,
Ինչպես գինովն է խփվում պատերին:
Նայողի աչքը խտուտ են ածում գուլնով ու փալլով
Խլվըլան փնջեր կարմիր պուտերյի,
Կապույտ անմոռուկ ու խորոտ-մորոտ:
Շամփի եզրերին, կարձիկ ու կոլոտ՝
Բարեգութ դահձի ձեռքով գլխատված շարքն է թթերի,
Որ արդեն խորձ-խորձ շիվեր են տվել՝
Մեկի տեղ քսան ու դեռ ավելի,

Եվ հեռվից հիմա
Նման են արդյոք... մի փայտե պոչով մեծ ցախավելի՛,
Որ բիլ երկնքից պիտի որ— ա՛յ-ա՛յ— ամենավերջին
Ամպերը շնջի,
Թե՛ կոթի վրա տնկված վրձիկնի,
Որ բիլ երկինքը ուր որ է պիտի կանաչ դարձնի...

Նա ինքնամոռաց գնում է առաջ:

Հրավիրականչ շեփորի նման՝
Հնչում է ցուլի կարոտի բառաչ...
Եվ ջրից թափուր սափորի նման՝
Քամու շնչի տակ անբառ երգում է փչակը ծառի:

Այգիների մեջ թաղված Տաճարի
Գմբեթն է միայն հեռվից երևում
Ծաղկած ծառերի գլխավերևում՝
Անհայտ թռչունի գլխիվայր շրջված մեծ բույնի նման:

Մի վաղուց շարդված կավե հին աման,
Նա՛ էլ չի փրկվել գարնան վարակից.
Նրա շուրջբույր մամուռն է քաշել կանաչ պարագիծ:

Վիրավոր սնձի բացված երակից
Տաք արյան տեղակ պաղ կաթ է ծորում:
Դեղձենիների անբոց կրակից
Կայծեր են թռչում դիմացի ծորում:

Իսկ մամոակալած վիմափոր գուռին
Մի հին փչակված-բնաքանդ ուրի
Ծեր մուրացկանի ձեռքերի նման
Իր կոշտուկապատ ճյուղերն է մեկնել
Ու սրթսրթում է կարծես թե քաղցից...

Եվ դաջտն են ելել հարս ու աղջիկներ,
 Որը՝ սիրեխի, իսկ որը՝ դաղձի:
 Մերթ հեռանում են
 Ու մերթ՝ կուտակվում,
 Մեկ կուտում են
 Ու մեկ՝ շիտակվում,
 Մերթ՝ ուրախ ճիչով, ասես կարոտով՝
 Իրար են պարզում լխտիկ թևերը,
 Ցուցադրում են, կարծես թե դիտմամբ,
 Փակ մարմինների բոլոր ձևերը,
 Որ... արեղայի սիրտը խռովեն,
 Որ... արեղային անհուր խորովեն,
 Որ... աստված ու նա կովեն-խռովեն...

Եվ մի անօրե՛ն,
 Մի անվանելի՛,
 Անանվանելի՛ ինչ-որ զգացում
 Կպչում է նրա սրտին ու անձին՝
 Կաթի պես սնձի:
 Նա շրթունքներն է ակամա կրծում,
 Որ ցավը օգնի:
 Իզուր է կարծում,
 Թե ամենազոր գարնան դավերին
 Կհաղթի ուժովն ինչ-որ ցավերի:
 Եվ, ճարահատյալ, աչքերն է զոցում,
 Որ սատանեկան տեսիլքն ավերի,
 Բայց մթությունը... սա էլ իր սևով
 Նրանց վառվողուն ձևերն ընդզըծում,
 Մաքրագրում է, շեշտում ավելի:

Խաչակնքել է ուզում արեղան,
 Բայց նրա աջը շարժվել չի ուզում,
 Ուզում է կանչել մի բերան «մեղա»,
 Բայց... կապ է ընկնում և խոսնակ լեզուն:

Եվ, բնագոբար, նա սիրտն է բռնում սև սքեմի տակ,
 Նա սիրտն է սեղմում ավերով իր տաք,
 Որ չտըրոփի այդպես խենթորեն,
 Որ չտըրոփի և... չտըրաքի՝
 Պղպըջող գինու արեղայի լեցուն սափորի նման:

Մինչդեռ անվտանգ խուցի դարակին
 Ննջում են տաղեր՝ կարոտ հորինման,
 Մինչդեռ անփորձանք խուցի դարակին
 Կարոտով նրա ճամփան են պահում
 Անլեզու խազեր:

Նա ետ է դառնում, ուզում է վազել,
 Գնալ ու նորից վերձանել համառ,
 Որ ցավն աչքերի թերևս մի օր
 Փոխարկվի մի նոր
 Ցնծուն հանդեսի՝
 Իր, ուրիշների... ականջի համար:

Նա ետ էր դառնում իր ճամփի կեսից,
 Որ գնա կրկին աչքի լույս մաշի
 Եվ մի կերպ պրծնի իր սրտին կպած
 Այդ կաթից սնձի,
 Սուղնձից,
 Խեժից, —

Եվ այդ վայրկյանին հանկարծ՝
 Սոնա՛ լար,
 Սոնա՛ լար,
 Թնդում,

Ու երգը խնդուն
 Ընկնում է ետքից ու հետապնդում,
 Կախվում է նրա փիլոնի փեշից,
 Թառում է նրա փակված կոպերին,
 Հալչում է նրա այրվող ավերին,

Ոտքերի առաջ թավալ է տալիս՝
Ճամփան է փակում և հիշեցնում,
Թե Վարդավառն է վերստին գալիս.

Սոնա՛ յար,
Սոնա՛...

Ցնծությամբ օծված ծաղիկ է ծնում,
Ծաղիկների պես դաշտերով ցանում
Ջանգլույում կանչող հարս-աղջիկներին.

Սոնա՛ յար,
Սոնա՛...

Քայլը հնչում է նու՛յն չափով՝

Սոնա՛...

Կործքը շնչում է նո՛ւյն չափով՝

Սիրո՛ւն...

...Ու երբ, հոգնատանջ, աջլորականչին՝
Նա լուռ ննջում է,
Ինչ-որ մի Սոնա

Գալիս է թեքվում նրա ականջին

Ու շշնջում է,
Թե սարալանջին

Պառկած է քույրը՝ անունը Խումար,

Ու երեսն էլ բաց՝ տեսնելու համար:

...Ծողերով հինված իր գորգը թողել,

Առվի արծաթով երեսը ցողել,

Կանգնել է ճամփին մի շաղոտ Ծողեր՝

Բոլոր գլուխը պսակած ծամով,

Աչքերը նման սուրբ աստվածամոր:

— «Իսկ դու՛ անխելքըդ, վախենամ քնես,

Վախենամ քնես, քնով ընկընես՝

Արտերդ մնան առանց հերկելու,

Ու երբ վեր կենաս,
Վազելվազ գնաս՝

Նա՛ կանչիր Խումար, Ծողեր ջան, Սոնաս,—

Խումար-իդ առան,

Սոնա-իդ տարան,

Ծողեր-ըդ մնաց առանց գրկելու»:

Մի խառնակ երազ տանջում է նրան մինչև լուսադեմ:

...Նա մեկ տեսնում է, որ մի շեկ Սաթո թևերը կանթել,
Կանգնել է իրենց կալի պոնկին.

Քամին խլում է նրա մինթանան,

Որ նրա թմփիկ ծնկները բանա

Ու ցույց տա խալը՝ ծալի մեջ ծնկի:

Հետո այդ խալը դառնում է հանկարծ մի պուտ սև՝ թանաք՝

Այն Ծարակնոցում Սաղմոսավանջի,

Որ այդ կաթիլից իրար են ծուլվել զարդախազերը...

...Ու մեկ էլ քամին քանդում է հարսի դեղձան մազերը,

Եվ այդ մազերը — լարերի նման —

Չզվում են մինչև ոտքերը նրա,

Ու շեկիկ-մեկիկ, աչքերով ծավի

Այդ հարսը հանկարծ... դառնում է տավիղ,

Եվ այդ ոսկելար, և այդ մսեղեն տավիղի վրա

Քամին նվազում ու... վերծանում է մեռած խազերը:

Ուզում է որսալ ու ձայնագրել

(Ա՛յ, հիմա՛-հիմա՛ լռած խազերի

Մեռած գաղտնիքը նա պիտի պարզի

Եվ իր մեծ գլուտով աշխարհը սարսի),

Բայց մինչ այդ արդեն նախանձոտ քամին այնպես է փչում,

Որ կտրատելով լարերը բոլոր՝

Վերև է ցցում.

Հիմա ո՛չ տավիղ,

Ո՛չ էլ վերծանվող մեռած խազերը:

Հիմա հուրիքրան բոցեր են թվում դեղձան մազերը,

Դեղձան մազերը թվում են հուր վառ՝

Բարակ ծխի հետ պարզված երկնքին:

Եվ հարսը հիմա դառնում է բուրվառ
 Ու շուրջը փռում բուրմունքը խնկի:
 Աղջիկը բուրվա՞ր— որտե՞ղ է լսված...
 Բայց հանկարծակի քամին դադարում
 Եվ, գունդուկծիկ, բարդուն է թառում
 (Ի՞նչ անտանելի շոգ է, տե՛ր աստված)...

Ու դարձյալ նրա մազերը դեղձան,
 Որ ծուփ-ծուփ էին՝ ծալեծալ դարձան.

Բուրվառ չէր արդեն,

Այլ կրկին

Մի կին,

Բոցավառ մի հա՛րս,

Թե՛ խարտյաշ աղջիկ,

Եվ տղամարդու հայացքից ազդված՝
 Պտույտ է գալիս, որ թողնի փախչի
 (Էդ ո՞ր, անհոգի՛, էդ ո՞ր, անաստվա՛ծ)...

Մինչ տեսիլքով է աչքը հիանում՝

Սուրացող հարսը մինթանի փեշով

Պտտահողմի պես սյուն փոշի հանում

Եվ թեպետ— շո՛գ է— քիչ զով է անում.

Բայց մի սեղման բուռ փոշի է ցանում

Խեղճի աչքերը...

Ու նա քնի մեջ

Ձեռն ակամայից աչքին է տանում,

Որ կսկըծում է ու մրմըռում է:

Աչքերը ձեռքով նա ճմըռում է,

Քնից արթնանում...

ՂՈՂԱՆՁ ՀԱՅՏԵՆՈՒԹՅԱՆ

Հետևում է տարին տարուն, միտքը՝ մտքի՞ն,
 Հետևում է դեռ նոր գտած ելքը մուտքին
 Ապրում է նա աչքը՝ գրքին,
 Ուշքը՝ երգին:

Ե՛րգ և ուտ՛ւմ,

Ծարակնոցնե՛ր ու Մանրուտ՛ւմ...

Մինչ օրերն են համըր հոսում՝

Մտքի հետ է միտքը խոսում.

— Խազե՛ր, խազե՛ր, — թող փորձ անի,

Գուցե մի օր և վերծանի,

Ու ժողովուրդն ապերջանիկ

Նախանձելի բախտ ստանա,

Աղքատացած մի ընտանիք

Ծով գանձերով հարստանա:

Բայց խազն է խազ ու գիրքը՝ գիրք:

Իսկ գրքից գատ կա կյանք ու գիրկ,

Իսկ խազից գատ կան խաղ ու տաղ՝

Կենսաթրթիռ, լուսաթաթախ,

Որ ապրում են, ջնչում-հնչում

Մարդկանց շրթին, իր ականջում.

Որ կենդանի մարդն է հյուսում

Ու կենդանի մարդուն հուզում.

Որ հոսել են ու տեղ հասել

Ու չեն դարձել դեռ Մանրուտում,

Ու չեն դարձել մեռած խազեր...
 Ո՛ր են դրանք, ո՛ր են սակայն:
 Այսօր թե կան՝
 Վաղը չկան.
 Շուրջն ամեն տեղ
 Երգվում են դեռ,
 Բայց երգվելուց թե դադրեցին,
 Խազերի պես, մեկ էլ տեսար,
 Համրացան ու քար կտրեցին:

Որտեղի՞ց են դրանք գալիս,
 Եվ ի՞նչ ճամփով ո՛ր են գնում,
 Ի՞նչն է անցնող փրփուր տալիս,
 Եվ ջրի պես ի՞նչն է մնում:

Ի՞նչն է այնտեղ ոգևորիչ,
 Ինչո՞վ է խորթ և հարազատ,
 Ինչո՞վ մոտիկ, ինչո՞վ է զատ
 Աշխարհիկը հոգևորից:

Ի՞նչն է պայծառ, ի՞նչը՝ մթար,
 Ո՞րն է քոնը, ո՞րն է օտար,
 Ի՞նչն է եղծված կամ անվթար,
 Ի՞նչն է կոպիտ կամ նազելի...
 Իսկ թե հանկարծ այդտեղ զտար
 Բանալիքը մունջ խազերի՞...

ՂՈՂԱՆՋ ՕԾՄԱՆ

Եվ որտեղ երգն էր՝
 Այնտեղ էլ նա էր...

...Ուրա՛խ է կյանքը,
 Տխո՛ւր, դաժա՛ն է.

Միշտ ժողովրդից երգն անբաժան է.

Նա միշտ երգով է բանում ու դատում,
 Սիրում ու ատում,
 Վիշտը փարատում.

Երգով է ուրախ,
 Երգով է տխուր,
 Երգով է վառվում, երգով է մխում.

Երգով է նա միշտ վարում ու հերկում,
 Մանում ու ներկում,
 Երեխա գրկում.

Երգով քաղում է,
 Աղում-մաղում է.
 Երգով է կնունք, հարսանիք անում,—

Երգով է օրը բացվում-տաքանում,
 Երգով է նորից օրն իրիկնանում...

Իսկ նա՛...

Այդ ե՛րբ էր,
Այդ ե՛րբ էր,
Ե՛րբ էր.

Տասներկուամյա թշվառ մի որբ էր,
Երբ ձեռքից բռնած ճեմարան բերին,
Եվ որբուկ Սողոն Սողոմոն դարձավ:

Ու չար թե բարի այդ ճանապարհին
Ե՛վ ըս տասներկու բոլորակ տարի
Ճեմարանի մեջ եկավ ու անցավ,
Ու Սողոմոնը... Կոմիտաս դարձավ՝
Ի խոր հարգանքս

Այն հոգեզվարթ կաթողիկոսի,
Որ տասներկու դար դրանից առաջ
Ապագա հունձի հունդերը ցրած՝
Ժիրը բաց արեց
Հայոց մեղեդու անթաղ ակոսի:

Նա բանաստեղծ էր
Ու երգաստեղծ էր.

Նա ուներ վառ ծայն
Ու նվազման ձիրք.

Եվ իր անվան հետ թողեց մի արձան՝
Խոսուն,
Բայց անձայն՝
«Նուիրեալք անձինք»:

Չզվել էր դարը, ու երկարաձիգ
Դարի ետևից նորն էր սողացել.

Եվ հայ մեղեդին

Դար դարի վրա
Կրակի նման վառ փողփողացել,
Տարուբերվել էր ծփան գետի պես,
Շեշտվել նետի պես,
Մխվել սրտերում
Ու դողդողացել:

Աշխարհասըփյուռ հայոց թեմերի
Պատարագատու բոլոր բեմերին
Քանիսնե՛րն էին մի պահ շողացել,
Քանիսներն էին...

Եվ սակայն ոչ ոք
Հայոց հինավուրց կաթողիկոսի անունը երբեք
Ո՛չ ստացել էր որպես թանկ ընծա,
Ո՛չ էլ գողացել:

Եվ հիմա — հանկա՛րծ — հայոց նորընծա
Երկրո՛րդ Կոմիտաս,
Որ Հայրապետի
Անվանը պիտի
Ամենայն ինչում
Տա նո՛ր մի հնչում,
Սուրբ հիշատակը մշտավառ պահի:

Ո՛ւմ մտքով կանցներ այդ վեսմ պահին,
Թե այդ նորընծա-նոր Կոմիտասը
Պիտի մոռանա իր պարտավորիչ
Անխոս ստացած պատվիրան դասը՝
Պիտի նա մի օր երախտավորից
Ցուրովի դառնա մի չար ապերախտ՝
Պիտի կողոպտի մի թափուր դրախտ.

Հոգևոր պապի՝

Իր անվանատուր

Կաթողիկոսի անունն ստվերի,
Հակառակ անխոս տրված պատվերի՝
Եվ հիշատակը մոռացության տա,
Իր շենշող կյանքի կարմիր բոցերով
Մատիտի նման թավ ընդգծելով
Իր մեծ նախորդի մեռածության տակ...

ԱՐԵՎԱԳԱԼԻ ՀԱՄԱԶԱՆԳ

ՂՈՂԱՆՋ ԱՄԱՌՆՕՐՅԱ

Եվ որտեղ երգը՝ այնտեղ էր հիմա և Կոմիտասը

Նա՛, որ դեռ երեկ, իբրև մի ձայնեղ երգիչ-տիրացու,
Երգչախմբի մեջ մեներգ էր միայն վսեմ տարածում
Ու լսարանում հեզ պատասխանում սերտումի դասը, —
Հիմա դարձել էր խմբավար վանքի,
Դարձել էր հիմա երգի դասատու:

Թեթևանում էր երբ աշխատանքից,
Ծառայությունից օձիքն ազատում,
Հեռանում էր նա խուցից ու վանքից,
Գնում էր այնտեղ, ուր երգն էր հնչում:

Իսկ նա հնչում էր ամենո՛ւր ու մի՛շտ,
Ամենո՛ւր ու մի՛շտ,
Ուր հայն էր շնչում:

... Ինչպես աղջիկն է հանկարծ հարսնանում՝
Փարուհն էլ այդպես դառնում է ամառ.
Համբարձման տոնը պաղ հովն է տանում
Ու տեղ է բանում,
Որ գա Վարդավառ:

Քանի չեն թռչնել կաթնառատ խոտեր,
 Կանաչ ու ծաղիկ,
 Գերանդիներն են սրվում- բթանում,
 Եվ ծլարձակման հաղթ օրենքի դեմ
 Կարճ հաղթանակ է վերստին տանում
 Ոգին խոտքաղի:

Բայց քիչ առաջվա մարտում կատաղի
 Յուրաքանչյուրը մի անգութ մարտիկ՝
 Հիմա տմարդի
 Նույն տղամարդիկ

Ասես գթության եղբայր են դառնում՝
 Իրենց ավշաքամ զոհերին առնում
 Իրենց իսկ ուսին, իրենց շալակին,
 Խնամքով դարսում սայլ-պատգարակին,
 Ջորուն են բառնում
 Կամ ավանակին,—

Եվ մեռած խոտեր, ծաղկունք մահացող
 Գերեզմանի տեղ մարագ են գալիս,
 Որ այնտեղ դառնան բույրի պահածո:

Շոգը, որ մինչ այդ հյուր էր ցանկալի,
 Աներեսորեն դառնում է տանտեր
 Ու խոտվեցնում կնկան ու մարդուն:
 Անբոց վառվում են արոտ ու հանդեր,
 Արծաթ է հալում վաղահաս գարին,
 Այնինչ հաճարի,
 Տորենի արտում
 Հասկերը հասուն,
 Հասկերը հոսուն,

Յուրաքանչյուրը մի իրե լեզու,
 Ձգվում են վերև, կարծես թե ուզում
 Մոտիկ երկնքի կապուտակ ծովից
 Ջովություն ըմպել,
 (Ինչպե՛ս չէ՝ կըմպես),

Չեն ըմպում սակայն, այլ միայն լիզում
 Եվ անմիջապես քաշում են լեզուն,
 Երբ հասկանում են բուսական խելքով
 Որ մինչև անգամ երկինքը ծավի
 Նույնպե՛ս կապտել է անհագ ծարավից...

Ամառվա արփին այնպես է կիզում,
 Որ արևի տակ,
 Թեկուզ անկրակ,
 Եթե ուզում ես՝ «իշխան» տապակիր.
 Անշարժանում են լճեր ու լճակ,
 Դառնում են կարծես կապույտ ապակի,
 Մինչդեռ նրանց տեղ օդն է ծփծփում ալիքով հրե,
 Եվ օդի հետ էլ երգն է ալիքվում.

— Հո՛վ արեք, սարե՛ր...

Սարերը սակայն

Հովը պահում են հոտերի համար և սարվորների,
 Որ գյուղը թողած՝ սար են բարձրանում:
 Պղնձի նման հողն է կարծրանում,
 Ու երգն էլ հիմա
 Աղոթքի նման
 Երկինք է թռչում,
 Ամպերին կառչում.

— Մի քիչ զո՛վ արեք...

Ամպերը սակայն ինչպե՛ս զով անեն
 Եվ ինչպե՛ս անձրև թափեն, ծով անեն,
 Եթե բովանդակ երկնակամարին
 Դեղի համար էլ ամպիկ չես ճարի:

Եվ աշխատանքի ոգին է կրկին
 Խելահեղորեն տիրում ամենքին:
 Գյուղացիները, տղամարդ թե կին,
 Հավ-աքլորի պես զարթնում են հիմա

Գիշերը դեռ կես և ոչ թե ծեփն
Եվ, աքլորների-հավերի նման,
Իրիկնանալիս՝ դեռ հացը բերնում՝
Չե՛ն թառում — օ չե՛ — հոգնած ու դադրած
Ոչ թե քնում են, այլ կարծես մեռնում.

Իրենց խշխշան անկողիներին
Քրիստոսի պես
Խաչվում են այնպես,
Որ կրկին շուտով
Հարություն առնեն
Եվ կիսամութով
Վերսաին բռնեն
Նոյն աշխատանքի
Վառվառուն պոչը
Ու նորից խառնեն
Հրդեհին ծեփ

Իրենց աչքերի հրավառ բոցը,
Եվ որ քրտինքի շիթը ծորացող
Անվերջ շտկըվող-անվերջ կորացող
Իրենց թիկունքին վազի մանեման՝
Ճամփան կորցրած մրջյունի նման...

Եվ աշխատում են մրցման մեջ մտած,
Աչքերը հույսից ու երազից թաց,
Ու հետև էլ երգում.
— ...Ջո՛վ արեք մի քիչ...

Հովից են երգում,
Ջովից են երգում,
Որ շուտ չդադրեն տաքից ու շոգից:

Իսկ շո՛գը, տա՛քը,
Իսկ տո՛թը, տա՛պը...

Թո՛ղ որ շները՝
Բները մտած,
Շոգից շնչասպառ՝ լեզուն դուրս գցեն,
Իրենց կաս-կարմիր բոցաձև լեզուն.
Վարծես սխալմամբ կրակ են կրծել
Եվ հիմա, իզո՛ր,
Ործկալ են ուզում...

Շոգի սիրահար դդումներ ցմփոր
Թո՛ղ որ թխսի պես նորից ետ տանեն
Փարթամ թևերը իրենց թաղերի
Եվ ճտերն իրենց ետևը գցած՝
Ցանկապատն ի վեր արևկող անեն,
Թառն էլվանի փայտե ճաղերին...

Ուրիշի աչքին խիստ ծիծաղելի
Արևածաղկի մի պուճուր գնդիկ,
Վապկելով հսկա մեր երկրագնդին՝
Երկրագնդի պես ծանրորեն ու լուրջ
Թո՛ղ որ պտտվի հնչյալս արևի,
Այնպես էլ նաև իր առանցքի շուրջ՝
Անշարժ պահելով ծաղկատերևի
Դիրքը նախնական...

Թո՛ղ որ շոգն իրոք չարամտորեն
Մարդկանց խեղդելու մահափորձ անի,
Եվ շուք ու շվաք տան վկայություն, —
Միևնույնը չե՞ գյուղացու համար,
Թե նա մեռնի էլ՝ պիտի գործ անի,
Քանի որ ամա՛ռ, ամա՛ռ է, ամա՛ռ...

Խեղճ այրի կնոջ անծեփ-անսվաղ տանիքի նման՝
Ազգիների մեջ հասած պտուղն է անվերջ կաթկթում,
Պիտի հավաքել-փռել տանիքին

Ենկ ծիրանները՝
Մանրակոտորակ արևների պես,
Սև սալորները՝
Եզան աչքերի միամիտ փայլով,
Եվ կորիզահան դեղին դեղձերը՝
Անանուն ծաղկի փերթերի նման...

Սայլը բեռնաբարձ՝
Ծանր խրձերից խղճուկ ճոռալով՝
Անիվի կունդից իր մաշված սունու
Քիթն է մերթ հանում
Ու մերթ՝ ետ տանում,
Աղուրի փոշում, լորձունքի նման, մազույթ ծորալով:

Իսկ ջառջառների սեպերը երկաթ,
Քար ատամները գիշատիչ կամի
(Ծամի, հա՛ ծամի)
Հաջանն են ծամում, հաջանը ոսկե,
Որ չուզենալով դարձանը խառնել
Սրսուտ ցորենի արևահամին,
Մի բան է տենչում՝
Քրանի քամի.
— Սարե՛ր ջան, սարե՛ր,
Մի քիչ հո՛վ արեք...

Իսկ քամին
Կարծես մարդու գնացած աղջիկ է դարձել
Քանի ամիս է՝ հերանց չի գալիս,
Իսկ եթե եկավ՝ չի ուզի գնալ.
— Օտար դո՞ւտ ընկնեմ,
Լավ է ջո՛ւրն ընկնեմ...

Մղեղն է թառում պատահած տեղում և ամեն ինչի,
Մինչև իսկ վանքում կիսաբաց ննջող Աստվածաշնչին.

— Մեղա՛ քեզ...
Աստված բարին կատարի:

Իսկ բարին՝
Քառած դեզի կատարին,
(Պարզ խրտվիլակի ծիծաղկոտ տեսքով)
Ծոխ պարսերն է շեղջերից քշում.
Իսկ բարին՝
Մաղված ցորեն-գարու հետ
Փայտե ամբարի դռնով է խշշում:
Մեծ կարասները
Ծուլ հորանջում են դատարկ մառանում,
Բայց վնաս չունի՛.
Խաղողի վազն է կրկին մայրանում,
Ճութը, ծոցի պես, ուռչում է հյութից
Եվ օգոստոսյան եռացած օդից
Ու խեղդող տոթից
Շնչահատ արդեն,
Մի պահ զրկվելով արու-ամոթից,
Անզգուշորեն կոճակն է բացում զմրուխտ թփերի,—
Հերն էլ անիծած.
— Ի՛նչ անեմ, մարե՛,
Արևն ինձ կերե՛...

ՂՈՂԱՆՋ ԱՇՆԱՆ ԱՅՈՒՆՉ

Բայց ահա

Նաև շոգն է կատրվում՝ գոռոգության պես,
 Եվ տեղը զիջում իր գինն իմացող համեստությանը:
 Կապող անձրևի միջամտությամբ
 Երկիր ու երկին
 Գրկվում են կրկին՝
 Վերջ տալով իրենց սուր գծտությանը:

Եվ աշունն էլի,
 Չարչիների պես ու բռջաների,
 Տեղից տեղ գնում,
 Պռներ է ընկնում
 Եվ զբաղվում է իր ներկարարի սիրած փեշակով:

Չարչին բարձրականչ կհպարտանա
 Իր հույունքների հազար տեսակով.
 Ասեղ ու ջյուղեր, ծամոն կծախի
 Պառավ տատերին, հարսներին շարմաղ:
 Բոշան ցորենով զամբյուղ կփոխի
 Եվ ինչով ուզես՝ մեծ ու փոքր մաղ:
 Մինչդեռ աշո՛ւնը...
 Նա բա՛ն չի ծախում,
 Օղ ու եղանակ, գույներ է փոխում:
 Մինչդեռ աշո՛ւնը
 Միայն բաշխում է՝
 Ցորեն ու գարի,

Խմիչք ու փշատ,
 Հազա՛ր մի բարիք
 Եվ, ամենից շատ,
 Անվարձ ու ճրի
 Միայն նախշո՛ւմ է...

Եվ այնպես դանդաղ, որ չես նկատի.
 Ավելուկների ծամերը կանաչ
 Էլվանի դեմքին ու տան ճակատին՝
 Դեղնում են հանկարծ, դառնում անճանաչ:

Ու քաղցրությունից ճաքող սեխերի
 Անուշ բուրմունքով
 Օծվում են կրկին բոստան-բաղերը,
 Իսկ ձմերուկի կերված ճաղերը —
 Լուսնի հաստ-բարակ փուլերի նման —
 Հող ու փոշով են ամպոտվում հիմա:

Ընկուզենիներն իրենց սաղարթով
 Այնպես են մեկից դառնում հուրհուրան,
 Կարծես թե լինեն հսկա ծխամորձ,
 Եվ որպես ծխի առկալժող քուլա՝
 Մշուշն է սողում դաշտերի վրա
 Ու պտուպտ տալիս
 Ծերուկների պես պազած լեռների
 Սանըր չտեսած-փոչոտ գլխի շուրջ:

Մինչ դեղծին պարկեշտ ու ծիրանին լուրջ
 Իրենց սաղարթն են աշխատում կոճկել լիրբ քամու հանդեպ,
 Հաստիկ ուռենին ու ծիգ կեռասին
 Պատրաստ են իսկույն իրենց լաչակը գլխներից քանդել՝
 Մարդաթող հարսի,
 Լաչառ կնկա պես:

Նորից, իսկապե՛ս,
Աշուն է, աշո՛ւն:

Նորից սանդի մեջ ծեծում են կորկոտ,
Չավար են խաշում,
Տաք հնձաններում ծմլում են խաղող
Ու գինի քաշում:
Նորից արիշտան,
Որ ձողերին են շարեշար փոել,
Թաց՝ օրորվում է լուռ ու անշշուկ,
Չորացած՝ խշշում
Ու փշուր-փշուր
Թափվում է գետին՝
Խսիր-կարպետին:

Զամին կարծես թե բան է կորցրել
Եվ որոնելով ավլում է գետինն
Ու տեղից տեղ է խաշամը քշում:
Եվ տերևների հաստ ծածկույթի տակ
Առվակ ու վտակ
Հոսում են ոչ թե խշշոցով ջրի,
Այլ կարծես անվերջ տժտըժում-թշշում՝
Իրենց մեջ ընկած բոց տերևների
Չմարող հրից:

Սերկևիլները սրտի թրթռոտով
Վերջինն են լքում անխոտով այգին
Ու տեղափոխվում-մտնում են սնդուկ,
Որ հաստակաշի ու կողքապնդուկ
Զառ խնձորների հարևանությամբ
Պլքվել սիրով ու գորովագին
Կանանց պահուստի շորերին փոթ-փոթ
Եվ իրենց բույրը խենթորեն խառնեն
Նրանց մարմնային բուրմունքին տարփոտ:

Աշուն է, աշո՛ւն:

Լուսաստղը հիմա
Նույնիսկ ցերեկվա դռներն է մաշում
Եվ ճառագայթուն ու մեծ է այնքան,
Կարծես թե բացված հովհար է որ կա:
Հովհարը սակայն
Ո՛ւմ է հարկավոր, երբ շոգ չէ արդեն,
Երբ եղանակը այնքան է ցրտել,
Որ նորից ահա տան խոնավ օդից
Մինչ աղը լալիս՝ լավաշն է ծաղկում,
Իսկ պաղ եղամի հալվելուց հետո
Կալում մնացած կույտը թղոտի
Կպչում է իրար,
Կարծես թե թաղքում
Մազերի նման շեկլիկ աղջըկա:

Անցած ձմռանը նշանվածների կոպերի տակով
Անհամբերությամբ սահում է հիմա երագանքն այրող
Այն հարսանիքի,
Որ պիտի լիներ, բայց դեռ, ա՛խ, չկա:
Գիշերվա կեսին ոռնոցն է լսվում
Հոտ ու նախրի հետ սարից գյուղ իջած անկուշտ գալլերի,
Իսկ նույնքան անկուշտ ջրադացների անխոնջ չախչըկան
Կոչնակի նման կանչելով անվերջ՝
Ծամփան է պահում աղունով բարձված սողուն սալլերի:
Եվ ահա՛,
Կամաց քշեք սելերը...
Եվ ահա՛,
Աշուն եկավ սարիցը...
Եվ ահա՛,
Այստե՛ղ —
Երկինքն ամպել է...
Եվ ահա՛,
Այստե՛ղ —

Ես լուսնակ գիշեր...

Եվ ահա՛,
Այսպե՛ս՝

Միշտ նա է ներկա,
Նա՛՛

Յինականի հար հավատարիմ,

Հավետ անբաժան
Մեծ օգնականը.
Նա՛՛

Յինականի համկալ-ընկերը,

Հոտաղ-մշակը
Ու... երրորդ ձեռքը.
Նա՛՛

Ինքը... Ե՛րզը:

ՂՈՂԱՆՋ ԱՀԱԳՆԱՑՈՂ

Ե՛րզը...

Կարծես տնից ելած մի պանդուխտ էր բազմաթափառ
Եվ ուզում էր կրկին փարվել հայրենիքին
Հայրենիքն էր... նրա հոգին

Ե՛րզը...

Կարծես մի թռչուն էր, որ չվելով բնազդաբար,
Ետ էր թևում գիշերն ի լույս և օրն ի բուն:
Եվ նրա ջեն ականջն էր... բույն:

Այդ ակա՛նջը...

Ջրվորների,

Սարվորների ուրախ կանջը,

Չույլ զանգերի ծուլ դողանջը,

Առվի հիմար բլբլոցը,

Ճրագների պլալոցը,

Հովի հունջը,

Թոնրի շունջը,

Մերժված սրտի խուլ մրմունջը,

Երագների ու ծաղկունքի փսփսուցը,

Ողբասացի կոծն ու սուզը,

Արտասուցը,

Որ ծնվելով վառ ցավի մեջ,

Դուրս չի պոռթկում,

Այլ կաթում է սրտի խորքում,

Ինչպես մթին անձավի մեջ,

Եվ այդ ահեղ կաթկոթոցը

Մինչև անգամ քար է ծակում.
 Կեսչոր-կեսթաց փայտի նման
 Վառվող հույսի ճթճըթոցը,
 Որ վառ ցրտի դեմ-հանդիման
 Ոնց էլ լինի դուռ է փակում.
 Չարածճի քամու առաջ
 Տերևների սրաքփումը՝
 Աշնան վառած անհուր բոցում.
 Նոր մայրացած ստինքների
 Մեկմեկի հետ լուռ շփումը՝
 Այգու նման բուրող ծոցում.
 Ջրի ճամփին աղջիկների քշփչոցը,
 Մինուճարին հեռու ճամփող
 Մոր խելագար պաչպչոցը,
 Տաք հնձանի կաչուն դռան զիլ ճոհնչը,
 Անզըղ տեսած թուխսի սարսափն ու կոհնչը,
 Նորածինի ազդարարիչ-հրամայող բարակ ճիչը,—
 Ամե՛ն, ամե՛ն, ամե՛ն ինչը
 Այիք տալիս,
 Գալի՛ս-գալի՛ս,
 Ծովանում էր այդ ականջում,
 Հազար ձևով այնտեղ հնչում,
 Հետո տանջում ու պահանջում՝
 Ելնե՛լ-թափվե՛լ սրտերից սիրտ,
 Հոգուց հոգի,
 Հույզով ցողել
 Ու ողողել
 Ամեն ոքի...

Ա՛յն, որ այնպես ցիրուցան էր,
 Կամենում էր լինել հավաք.
 Ա՛յն, որ միայն աղմուկ էր դեռ,
 Ցանկանում էր դառնալ նվազ.
 Ա՛յն, որ հնչու՛ն, անկապ ձայն էր,

Եղանակ ու երգ էր ուզում,—
 Վարարումի ու հորդումի
 Ելք էր ուզում:

 Իսկ թղթերին՝
 Հազար ու մի երգ-եղանակ,
 Դարձած նոտա.
 Իսկ թղթերին՝
 Հազար ու մի խաղիկ-տաղիկ
 Հայաջխարհիկ,
 Նաև օտար:

 Իսկ թղթից դուրս
 Որքա՛ն երգեր,
 Որ չեն տեսել ձայնագրողը,
 Օտար ժանգը գոնե քերող
 Հմուտ ձեռքեր:

 Իսկ թղթից դուրս՝
 Որքա՛ն-որքա՛ն
 Ծինականի ձեռքով ցանված,
 Բայց չհնձված-անտեր բերքեր...

Ա՛յն, ինչ ականջն էր հավաքել,
 Ա՛յս, թե հիմա իր շրթունքով
 Կրկնապատկած էտ տար կրկին,
 Սիրով բաշխեր նրանց, ովքեր
 Իրենց արյամբ ու քրտինքով
 Խմորում են տվել երգին:

Իր հետ մեկտեղ այն ժամանակ
 Գյուղացին էլ գուցե երգեր.
 — Հո՛վ, հո՛վ, հո՛վն ընկավ,
 Դարդս ծո՛վն ընկավ...

ՎՈՂԱՆՋ ԲՆԱԾԽԱՐՀԻԿ

Մակայն դարդը խեղճ ու կրակ գյուղացու
Եթե անգամ
Ծովն ընկավ,

Նույնիսկ ծովն էլ դարդի վրա գյուղացու
Իր ծովային աղաչքի փոխարեն
Կարծես դիտմամբ լուղ ածում,
Դարդը լուղով է օծում,
Որ... ջրի մեջ չընկղմի
Ու չդառնա կեր տղմի:

Կարիքների ալիքային մոլի ծա՛փ,
Զրկանքների կոհակացող խաղացո՛ւմ,—
Եվ նույն դարդը ողջ-առողջ
Շարտվում է նորից ափ
Ու... կայում է գյուղացուն,
Ինչպես շապիկը մեջքին,
Տաք քրտինքից թաց մեջքին,
Եվ ի՞նչ քրտինք.

Հիմա արդեն իսկապե՛ս որ աղաչուր

Ջուր է գեղջուկն աղաչում
Եվ հույսի շողն իր աչքի
Նետում երկնի հրաշքին:
Վերում՝

Աստված ծանրականջ,
Ցածում՝

Աղոթք ու զուր կանչ,

Արտեր՝ պատառ-պատառիկ,
Սարի լանջին կարկատան.
Ժխոտ-մրոտ պատ-առիք,
Բոբիկ ոտներ, հին քաթան.
Եվ հազար ու մի կարիք,
Հազար ու մի ծակ ու ծով.
Պիտի ուզեն հարսնացու,
Առնեն շոր ու մատանիք,
Պիտի փոխեն ծածկը տան,
Պարտքը մարեն, հարկը տան
Ու կաշառեն ջրպետին:
Նան պիտի... դեռ պիտի...

Պիտի վարեն ու հերկեն,
Վարեն-հերկեն
Ու երգեն.
— Օրհնյա՛լ է աստված,
Հիշյա՛լ է աստված...

Աքլորը կանչեց գոմի դռանը,
Դեռ նոր է բացվում աղոթարանը.
— Աստվա՛ծ, փառքդ շա՛տ...
Եզնարած տղան թող անուջ քնի,
Գութանավորը վեր կենա բանի.
— Աստվա՛ծ, փառքդ շա՛տ...
Գութանն է գնում-գութանն է գալիս.
— Այ ճըլ՛-վը՛ստ, ճըլ՛-վը՛ստ...
Ուրախությունից ակերն են լալիս.
— Այ ճըլ՛-վը՛ստ, ճըլ՛-վը՛ստ...

Մաճկալը՝ մաճին,
Իմ պաչն իր աչին.
— Ծո՛ւտ տուր, սև՛ արա:

Հոտաղը՝ լծին,
Մատաղ վարոցին.
— Ձե՛ն տուր, թե՛ արա:

Հո՛ արա, Յեկո՛,
Յո՛ արա, Լաչի՛ն.
— Մեջը կորոջ մնաց:
Ջջիր հա՛, Նիկո՛,
Դաղի՛ր սատկածին.
— Գնաց հա՛ գնաց:

Գնաց հա՛ գնաց.
— Ոտըդ լե՛ն արա,—
Է՛ն էլ ո՛նց գնաց:
Գնաց հա՛ գնաց.
— Տղա՛, ձե՛ն արա,—
Էլ բան չմնաց:

Արտը լեռ քար է,
Առը երկար է.
— Բայց խոփն էլ սուր է:
Ջաղցած ենք, ծարավ,
Ա՛յ հարս, ի՛նչ դառավ.
— Բա գալըդ ու՛ր է:

Է-հե՛յ, հորիվա՛ր, ծիպտի՛ն տուր.
Սեին հո՛ արա, Կապտի՛ն տուր.
— Կապո՛ւյտ եզ, չսատկե՛ս հալ
Թե հո ես անում՝ լա՛վ արա,
Բերան չես բանում, ա՛վարա.
— Վարել ենք արտի վատ կեսը:

Յիր տանք հա՛ ծրենք,
Մեր դարդը ցրենք.

— Ես քեզ եմ ասում,
Սրա՛ւյ ջան,
Հողը սևանա:

Հացն եկավ: Բանանք,
Ոտենք կշտանանք,
Որ, քեզ եմ ասում,
Արա՛բ ջան,
Ուաղդ հովանա:

Ձեզ՝ խոտի լավը,
Մեզ էլ՝ փլավը.
— Հորովե՛լ, հո:

...Դե՛, ելեք, լծենք,
Խոփը հող գցենք.
— Հո՛, հորովե՛լ:
Նո՛ր ակոս բացենք,
Խո՛ր ակոս բացենք
Է՛լ առավել:

Հաջող է տարին.
Նամուսով վարի՛
Մեկին յոթ կտա:
Խոտի տեղ դու, տե՛ս,
Չոր ծիպոտ կուտես,
Ա՛յ եզ անպիտան:

Գիտե՛մ, ոտմաշ ես,
Ոտերիդ մատաղ,
Բա ե՛ս, ծիրա՛ն ջան,
Իմ սի՛րտն է մաշած:
Ջրտընքախաշ ես,
Իմ համե՛ղ հոտաղ,

Բա ե՛ս, Տիրա՛ն ջան,
Իմ սի՛րտն է խաշած:

Ականջ մի՛ դրեք,
Հո՛ւ արեք,
Դարդներդ ցրեք,
Ծո՛ւ արեք:

Դարդը քա՛ր կանի...
Աստված ծա՛ր կանի.
— Հորովե՛լ:
Աստված ինչ չանի՛
Մարդը դի՛նջ կանի.
— Առավե՛լ:

Եզո՛, շո՛ւտ արա, ո՛տ արա, ախպե՛ր,
Դադրած մաճկալը քո ցա՛վը տանի
— Պրծ՛նենք ու գնանք:
Վրան են զարկել սև ու մուգ ամպեր,
Չեո ու ոտ արեք, ա՛յ, անձրև կանի,
— Մոլո՛ր կմնանք:

Ուժ տուր՝ վերջանա,
Ջանդղ դինջանա.
— Հո՛ւ արա, էլ ե՛զ:
Վարենք ու ցանենք,
Խոփը դուրս հանենք,
— Լինենք պարզերես:

Թող չկտրվի ակի ճոհնչը,
Գուգանի անուշ ճլվստիկ ձենը.
— Իր ձենի՛ն մատաղ:
Առանց գուգանի աշխարհը ի՛նչ է,

Նրա վրա է աշխարհի շենը.
— Իր ձենի՛ն մատաղ:

Հո՛ւ արա, եզո՛ ջան, հորովե՛լ,
Ծարավ ես՝ ել էլ եմ ծարավել,
Դադրած ես՝ ես քեզնից առավել,
Ինձ էլ է արևը խորովել.
— Հորովե՛լ:

Թե մեզնից աստված է խոովել՝
Աստըծուն ձեն կտանք առավել
— Օրհնյա՛լ է աստված,
Հորովե՛լ.
Հիշյա՛լ է աստված,
Հորովե՛ե՛ե՛ե՛լ...

ՂՈՂԱՆՋ ՅԱՎԻ ԵՎ ԲՈՂՈՔԻ

Մեր խելքն էր մեզնից խոռվել,
Մոռացած Կալերգ, Հորովել,
Մոռացած խաղիկ, զվարթ տաղ՝
Նելսիմ-ով ու Բեյթ-ով էինք
Ծառերս մեր հոգին պարպում,
Թողած մեր գինին անխարդախ՝
Օտարի շերբեր-ով էինք
Մեզ խաբում
Եվ ոչ թե հարբում:

Մենք կայինք,
Մենք Դավիթ էինք,
Սակայն դեռ մեզ չգիտեինք,
Դեռ պառվի շաղգամի արտում
Զիչն ուտում,
Ծատն էինք շարդում՝
Մանկորեն ոտքի տակ տալիս:
Եվ մեկը պիտի գար ահա,
Մեզ նորից կայծակը տար թուր
Ու թամբեր Զուռկիկ Զալալի,
Տար նաև մկունդ ու վահան,
Որ... Մարա նվոցին ընդդեմ
Զգայինք մեզ Ձենով Օհան:

Սկզբում ինքն էլ վարանում՝
Գործում էր, բայց դժվարանում

Իր գործին տալ հարմար անուն:
Եվ ահա իր գործը նաև
Ստացավ անունն իր վայել.

— Աշխարհում դուք ձե՛ր երգն ունեք,
Ձե՛ր երգը, խլացա՛ծ հայեր...

...Ու թե հայ խաղի ու տաղի հանդեպ
Խլացել էին մեզնից շատերը,
Եթե մերային խեղճ ու վատերը
Մեր արդար հացն ու պանիրը թողած,
Աչք էին տնկում օտար փայլավ-ին,
Ապա օտարը՝
Ամենա՛յն սիրով,
Ապա օտարը՝
Խոսքերո՛վ,
Գրո՛վ—

Թաքուն-բացահայտ մեզ էր բանսարկում՝
Մի ամբողջ ազգի հեշտորեն զրկում
Իր անկապտելի երգից ու պարից,
Մի ողջ ժողովուրդ կապում օտարից,
Օտար դռանը տնփեսա սարքում
Մի տղամարդու, որ շեն տուն ուներ,
Տան մեջ սյուն ուներ,
Սյան վրա՝ տանիք

Ու տանիքի տակ՝ հսկա ընտանիք,
Որ, ճիշտ է, գիտեր հյուրեր ընդունել,
Բայց գիտեր նաև ճանապարհ դնել,
Ու թե կտուրը կաթեր անձրևից՝
Գիտեր վերստին պատել սվաղով...

Մինչդեռ խուլ, անլուր և կամ չարալուր
Ականջներն օտար միշտ հակված էին
Հայոց երգի մեջ

Լսել սոսափը պարսկազենգական,
 Հայոց տաղերում
 Որսալ մեղեդին ինչ-բուզանդական,
 Հայոց խաղերում՝
 Թուրք-թաթարական բայաթի-շարքի-նս

Հայերն աշխարհում բանսարկված էին,
 Արերից հետո,
 Թրերից հետո՝
 Հիմա էլ լեզվի թունավոր նետով —
 Ա՛ն—
 Զարկված էին...

Քեզ հարվածողին որպեսզի զարկես
 Եվ ունեցվածքդ ու կյանքդ փրկես,
 Պիտի զարկողին իր զարկից զրկես:

Թե ոստայնի պես ստեր են հյուսում,
 Եվ դու կեղծիքը ճեղքել ես ուզում,
 Պիտի սովորես ստողի լեզուն:

Իսկ նա շատ հաճախ ինքն էլ էր զգում,
 Որ իր հաղթ բազկում
 Տալիք հարվածի թափը պակաս է.
 Ղատապաշտպանի իր լեզուն արդար
 Պտտում է հազիվ,
 Պտտում է այնպես, կարծես կակազ է:

Միևնուրեք ուզում էր
 Ու երագում էր
 Պաշտոն ստանալ և դատախազի. —
 Աշխարհի առաջ բարձրանալ տեղից
 Ու հատ-հատ ասել.
 — Խոսելն իզուր է, ծառելն՝ անտեղի:

Միստը՛ր, աղա՛, սը՛ր,
 Տիկնայք մեծարգո, պարոնայք ազնիվ,
 Զար ու կշեռքին ի՛նչը կհասնի:
 Այս՝ կշռաբարը, այս էլ՝ կշեռը.
 Մեզանից՝ ահա մեր տաղն ու երգը,
 Չեզանից՝ կշեռքն ու կշոող ձեռքը:
 Թող դժվարությամբ ու հսկա ջանքով
 Բարձրանան-իջնեն կշռաթաթերը,
 Անվտանդությամբ ու կասկածանքով
 Իրար հոտոտեն կշռաթթերը,
 Եվ ճիշտը խոսի, լռեն ստերը:

Այս էր նա ուզում,
 Այս օրը հուսում,
 Բայց և զգում էր,
 Որ հաղթ բազկում իր
 Տալիք հարվածի թափը պակաս է.
 Ղատապաշտպանի ու դատախազի
 Իր արդար լեզուն
 Շարժվում է հազիվ՝
 Պտտում է այնպես, կարծես կակազ է:

Իսկ եթե սուղը հերքել ես ուզում,
 Պիտի սովորես ստողի լեզուն՝
 Հրածարվելով դատարկ գեղումից:

Պետք է սովորել,
 Իսկ ո՛րտեղ, ումի՛ց:
 Պետք է սովորել,
 Իսկ ո՛ւմ մոտ, իսկ ո՛ւմ...

ՂՈՂԱՆՋ ՊԱՆԴԻՍԱԿԱՆ

Հայ դասատուներն իրենք են զգում,
Որ ջահել սանի առաջմղումից
Հոգնում կես ճամփին ու ետ են մնում:

Եվ Կոմիտասը Բեռլին է գնում:

Ու գերմանական քաղաքում խոժոռ

Ինչ-որ վանական՝
Աչքերը խոշոր,
Պեմքը՝ բանական,
Քայլքն՝ անբնական,

Պաղ անցորդների հայացքն է անվերջ վրան սևեռում,
Մինչ մոլեռանդի նայվածքը նրա՝
Որքան ներհայաց-նույնքան բևեռուն,
Չի մեխվում սրա կամ նրա վրա,
Այլ պեղում կարծես անձանոթ հեռուն:

Եվ կոշտ ու կոպիտ գերմաներենը
Շուրջ երեք տարի, հարկադրաբար,
Ճկվում է անվերջ նրա բերանում,
Սակայն չի ջարդվում վերջնականապես.
Կարծես թե թողած լեզուն կենդանի,
Գրում-կարդում է նորից գրաբար՝
Ճեմարանական խելոք սանի պես:

Ի՛նչ անենք. շատ էլ հոգ չէ, որ այդպես
Գերմաներենը նեղում է հային:

Կար այլ մի լեզու՝ համամարդկային,
Այդ լեզվով խոսող գերմաններ կային,
Ու չէր վերջանում նրանց զրույցը:

Կոտրելով բառի բարակ սառույցը
Ոչ իբրև օտար-սառն ու կեղծամիտ,
Այլ մեծ պապի պես՝ առանց կեղծամի,
Գալիս էր Բախը ու ծանրը նստում
Երգեհոնի դեմ, ֆիզհարմոնիայի
Ու բարի ժպտում մրահոն հային:

Եվ ալիքվում էր մի վսեմ մեսսա,
Ու Բախը կարծես ասում էր.

— «Տեսա՛ր»:

Անհուն սրբությամբ երկինք էր միտում
Մի հոգեսրբիչ հոյակապ խորալ,
Եվ ծերուկ Բախը ջահելին դիտում,
Հարցնում էր կարծես — և գրաբարով.

— «Իմա՛ստը դորա»:

Իսկ այնուհետև՝

Օրատորիա-ի նարեկանման ծփացող մի ծով
Լոկկ մեղմությամբ, աղոթքի ձիչով
Դիզվում էր դանդաղ, փչում շատ արագ,
Մինչդեռ ականջում մոլեռանդ հայի
Օրատորիա-ի ծփանքի միջով,
Խեղդելով խորթ ձայնն Օրատորիա-ի,
Իրենն էր հնչում՝
Մի նոր Պատարագ...

Ու մեկ էլ հանկարծ Մոցարտն էր գալիս,
Գեղեցիկ, ջահել, կայտառ ու խնդուն,
Եվ պաղ դահլիճում ծիծաղն էր թնդում:
Նա մերթ՝ բարեկիրթ մանկան պես՝ ուշիմ
Լսում էր հային, խփում էր ուսին,

5 Անլուելի զանգակատուն

Մերթ՝ հանապարհաստից երգ եղանակում,
Եվ մեկ էլ՝ խոսում համբույրից կույսի,
Սրա վեղարը ծաղրում ծանակում,
Պատմում արկածներն իր և ուրիշի՝
Չափից ավելի անկեղծանալով:

Իսկ երբ տեսնում էր՝ իր կատակն է զուր,
Հուսահատորեն ձեռքը թափ տալիս,
Իբրև միջնարար՝ մի բերան հազում
Ու լրջանալով,
Անկեղծ ջանալով՝

Նորից էր ուզում հային համոզել,
Որ պետք է այսպե՛ս-ո՛չ այնպես խոսել:
Մեջտեղ էր գալիս ուրախ Ֆիգարոն,
Դահլիճում սարքում շքեղ հարսանիք,
Իսկ նրա մտքո՛ւմ...

Աղջիկ-պատանիք
Սարից իջնելով էլնում են տանիք,
Որ մեկ էլ տեսնեն, թե ինչպես Սարոն
Անուշի տեսքը հեռվից որսալով,
Մոռացած ադաթ, ընկեր ու աշխարհ՝
Գետնում է Մոսուն...

— Դուք ինձ չե՛ք լսում,
Այս է ճիշտը, հե՛ն, այս է պետք, պարո՛ն:
Իսկ հեռ-պարոնը լսում էր ուշիմ,
Չմեռ ու ամառ
Ուսանում համառ,
Բայց և կրկնում.

— Ուրիշն՝ ուրիշին,
Ես ի՛մը, ի՛մը, ես ի՛մն եմ ուզում,
Ի՛մը, դուք հասկա՞ն...

Ու չէր ավարտում «հասկանում եք»-ը:

Իսկ երբ այս հսկան
Եվ կամ թե ուրիշ վիթխարու մեկը

Հայ վարդապետի հոգին էր հուզում
Եվ գերեվարած տանում իր հետքով՝
Երբ նա չէր գտնում փրկումի դեղ-ձար,
Նրա բերանից ձգվում էր «Խղձա»-ն,
Հայցում էր Բախի մենեթգ-աղոթքով...

Ա՛խ, նրա հեռո՛ւ-հեռո՛ւ հայրենիք,
Լսո՛ւմ ես արդյոք մենակ ու մենիկ
Ջղջացող որդուդ: Մի՛թե չես զգում,
Որ հեռվից-հեռու անծայն գոռալով՝
Այդ քեզ է դիմում Բախի խորալ-ով.
«Քեզնից հեռացա, բայց դարձա իսկույն»:

Ա՛խ, նրա հեռո՛ւ-հեռո՛ւ հայրենիք,
Այդ ինչպե՛ս, ինչպե՛ս դու դարձար կնիք
Եվ ինչո՞ւ դու հենց ընտրեցիր նրա՛ն
Ու դրոշմը քո, իբրև սուրբ խարան,
Դրեցիր վրան՝
Ասելով. «Ի՛մն ես,

Ո՛ր էլ որ գնաս՝ իմ ճո՛րտը, ծառա՛ն,
Իմ միևնուձարն ու հավատարի՛մն ես»:

Ա՛խ, նրա հեռո՛ւ-հեռո՛ւ հայրենիք...

Ժամեր շարունակ մենակ ու մենիկ,
Եվ համբերությամբ մի անհատների
Խեղդելով հոգու ներհակությունը՝
Պաղ ստեղներին հաղորդում էր նա
Իր ամենազգա ու ջերմ մատների
Սրսփումն այրող ու տաքությունը:
Նրա վեղարի թողած սովերը
Ժամեր շարունակ անվերջ ընկնելով
Ֆիզհարմոնիայի սևափայլ ներկին՝
Մթազնում էր այն կրկին ու կրկին:
Գոթական ոճի գրադարանում

Նա, աղեղի պես, անշարժ կորանում
Եվ ամեն ինչ էր շուրջը մոռանում:

Բայց ամեն անգամ իրիկնամուտին,
Երբ մոտենում էր գիշերը՝

Մթին,
Ինչպես փակեղը,
Եվ Վարդապետին

Փակեղի նման նեղություն տալիս,
Մի անկոչ հյուր էր մթան հետ գալիս,—

Ա՛խ, գալըս ո՛րն է,—

Վարդապետի մարդ կնոջ պես վազում,
Գոնե մի թեթև հարց էլ չէր տալիս,—

Հարց տալըս ո՛րն է,—

Ձևի համար էլ նույնիսկ չէր ասում,
Թե Վարդապետը ուզո՞ւմ է,—

Վազում
Եվ թևերն իր տաք՝
Մեկ-երեք-չորստակ՝

Փաթթում էր, պլլում պանդուխտի նրա կարեվեր սրտին:
Թո՛ղ նա վերստին

Կուսակերտի կոշմանն իր վայել,
Սրբորեն հաստատ իր տված ուխտին՝
Անկոչ սիրուհուն իրենից վաներ:

Թե դոնից հաներ՝

Պիտի երևար բաց լուսամուտին,
Լուսամուտի պես աչքերը փակեր՝
Հիմա էլ մտքի դուռը կթակեր.

— Ընդունիր տունըդ:

— Ո՛վ ես, անո՛ւնըդ...

— Սուտիկի՛ս մի տես,

Գու ինձ լա՛վ գիտես:

— Ո՛վ ես, անո՛ւնըդ...

— Հայրենակարո՛ւտ...

Եվ Վարդապետի հայացքի դիմաց,
Նրա կարոտած աչքերին ի տես,
Ջզվում էր հանկարծ կաթանը քարոտ.
Սարավանդակից գոթանի խոփն էր հանկարծ պսալողում.
Թո՛ւրի պոունգին, սև պուտուկի մեջ, ապուրն էր պաղում.
Ճակատին շարված բոլոր «արծաթի» ծափերի ներքո՝
Արմաղան մի հարս նախշուն կարպետին ձավար էր մաղում.
Իրենց մացառե ցանցառ բեղի տակ
Թիծաղում էին քարափներն անտակ՝
Աղունակների ու կաքավների
Խոտտ հարուցող կրկրան ձայնից.
Բարակ գուրջին, անուշ խնկի պես,
Ծփում էր այգում, էլնում հնձանից.
Հարթ կտուրներին ծփծփում էին
Աներեսորեն կանաչած խոտեր.
Ջահել ու բոբիկ կանացի ոտեր
Թփթփում էին
Ու տպում էին
Իրենց հետքերը աղուրի փոշում...

Հստակ էր այնպե՛ս ու շոշափելի՛,
Տեսնում էր կարծես և ոչ թե հիշում:
Եվ աչքերն էին բացվում-մշուշվում
Ինչ-որ մորմոքից, որ անուն չունի.
Թիկունքի վրա զգում էր կարծես
Վազը երթևեկ ինչ-որ մրջյունի.
Ու դուռը զարկող կարոտ կոշվածը,—
Էլ ի՛նչ հրավեր,—
Սենյակ էր խուժում
Եվ անմոռացն էր վերհիշում.
— Կոո՛ւնկ...
Խաբրիկ մը չո՛ւնիս...

ՂՈՂԱՆՋ ԿՈՏՈՐԱԾԻ

Ձե՛, կոունկ չկա՛ր Բեռլին քաղաքի երկնքում մթար,
Որ վարագուրված հայոց աշխարհից գեթ խաբրիկ մը տար:
Բայց Գուտենբերգին ծնած աշխարհում՝
Սև կոունկների սև երամի պես՝
Սև տառերն էին լրագրերի էջերին թառում:

Եվ մի օր հանկարծ
(Ահավո՛ր վայրկյան) ...
Եվ մի օր հանկարծ այդ տառերը սև՝
Քիչ առաջ հանգած
Ածուխներ ասես՝
Մատներն են այրում գրաշարների,
Ու տաք ոսպի պես
Ընթերցողների լեզուն են վառում:

Նորի՛ց ու նորի՛ց
Հայոց աշխարհում
Մինչ թոնիրները՝ արյունից մարում,
Խաղաղ ծխացող լուռ երդիկներին
Աքաղաղի տեղ բոցերն են պարում:

Եվ լեղապատառ մայրերը հայոց
Ջո՛ր են մրմնջում աղոթքը կերկեր,
Համըր Տիրամոր նիհար ծնկներին
Իզո՛ր են այդպես աղերսով փարում.

Եթե ունենար
Որևէ հնար՝
Խեղճ տիրամայրը իրեն կփրկեր,
Մինչդեռ քիչ հետո ինքն է դառնալու
Պիղծ հանաքների,
Կեռ դանակների
Եվ ա՛յն հրդեհի չար կրակին կեր,
Որ նորից հիմա
Մարդկային մսեր ու ոսկորներ է շան պես ճարակում:

Տարաբախտ երկրի
Եվ աստժուց թափուր երկնի արանքում,
Իբրև ամոթի ծանր վարագույր,
Փովում էր ծուխը,
Եվ ճենձահոտը օդի շերտերն էր այնպես վարակում,
Որ— անժամանակ—
Կոունկներն անգամ թողին-չվեցին
Եվ ուր թևեցին՝
Ահ ու սարսափից լեզուն կապ ընկած
Հայ մանչուկների խմբերի նման՝
Կը՛վ-կը՛վ հա՛ կը՛վ-կը՛վ՝
Անվերջ կվվեցին,
Անլուր աշխարհին իմաց տվեցին,
Որ հայոց երկրի ճորերում անտակ,
Կիրճերում խորունկ...
Ա՛խ, էլ ի՛նչ Կոունկ,
Երբ հիմա վառման թոնիր էր դարձել
Թոնիրի երկիր Հայաստանն ինքը,
Ու թոնրին դրված սև խուփն էր կարծես
Հայոց երկինքը...

Եվ ո՛ր է ինքը.
Այստե՛ղ՝ Բեռլինո՛ւմ,—
Սրամիտ բախտի ինչպիսի՛ հանաք,

Ճակատագրի ի՞նչ ծաղրուծանակ:
Է՛հ, հայի կյանքում ինչե՛ր չեն լինում.
Վաղուց է գրկվել նա զարմանալու կարողությունից.

...Երբ ոռոտ-տաճկական կոլում հերթական
Ռուսաց սվինը, թուրն ու բերդանկան
Անձնատուր արին ճամփին հանդիպող
Թուրքական բազում բերդ ու բերդակալ, —
Է՛լ գերմանացի,
Է՛լ ֆրանսիացի,
Է՛լ անգլիացի՝

Յուրաքանչյուրը խփեց իր ծնկան,
Ու բոլորը մեկ ձեռ ու ոտ ընկան,
Սան-Ստեֆանո քաղաք գնացին՝
Այնտեղ գումարվող Վեհաժողովին,
Որ... Պետերբուրգը հաղթության դաշտից
Իր սպասածից քիչ բերք ժողովի:

Երկար նստեցին, ուշ-ուշ վեր կացան,
Դրսից ծալտալով՝ ներսից բարկացան,
Անգամ լռելով՝ իրար հասկացան,
Ու երբ, վերջապես, պիղատոսաբար
Մաքուր լվացած իրենց ձեռքերով
Հայկական հարցը մեջտեղ բերեցին,
Քանի տաք էր դեռ՝ մերթ վերցըրեցին,
Մերթ էլ վերստին ներքև դրեցին,
Եվ ամեն մեկը մատներն իր վառեց:
Բայց ամեն մեկը այնքա՛ն շատ ձառեց,
Մինչև որ հարցը բավական սառեց, —
Ու ցինների պես ընկնելով վրան՝
Կտուցով, ճանկով լա՛վ ջրքըրեցին,
Առան-տվեցին, տվեցին-առան
Ու վերջում... հարսի լեցուն կոնքերով
Փեսայի աչքին լավամարդ դառան.

Այս ու այն կողմից միավորների գրոն քերեցին,
Ու մնաց մի թիվ,
Որ էլ չի քամվի՝ ինչքան էլ քամես,
Ու մի թիվ մնաց... համեստից համեստ.
Մնաց 16 —

«Հայկական հողված» —
Հայկական հարցի բզկտված մարմնից
Ոչ թե մինչևիսկ դաշույնով հատված,
Այլ քաջքշոցո՛վ, այլ եղունգներո՛վ
Մի կերպ ծվատված...

Սակայն... աշխարհում ինչե՛ր չեն լինում:
Սակայն... աշխարհի ցմփոր տերերին դա էլ շատ թվաց:
Եվ ահա նրանք վերստին եկան Վեհաժողովի՝
Այս անգամ արդեն այս նույն Բեռլինում,
Հայկական հարցը — հուշաթելի պես — մատին փաթ տված:

Երկար վիճեցին, տվեցին-առան.
— Հայ պատվիրակը թող նստի դռանն...
Ամենքը մի-մի պողպամտե կռան՝
Իջա՛ն մեր սալին.
— Վա՛յ տամ մեր հալին...

Մեր արյան դիմաց՝ ծախսեցին թանաք.
— Ա՛յ քեզ խաչապաշտ թրի հաղթանակ...
Աղվեսությանը խառնած շնություն,
Ներհակությանը՝ միաբանություն,
Մեր արցունքի դեմ մի կում ջուր տվին
16-ն այսպես մի կերպ շուտ տվին:

Աչքըդ լո՛ւսս լինի,
Դու օգտվեցի՛ր, թվաբանություն.
Շուտ գալով՝
Աճեց քո 16-ը —
Դարձավ 61:
Իսկ մեր հա՛րցը, մե՛նք:

Իսկ Հարցը Հայոց քամվեց վերստին՝
 Կարծես թե թափված արյան համեմատ.
 Մի թիզ էր եթե Սան-Ստեֆանոյում,
 Բեռլինում արդեն նա դարձավ մի մատ:

Այո՛, այստեղ էր՝ այս նո՛ւյն Բեռլինում,
 Որ բարեխընամ մի Վեհաժողով
 Որոշում հանեց... հայ հողագործին
 Չբավարարել վեց արշին հողով,
 Այլ — ընդամենը — չխենթացրել
 Մահվան ու ջարդի մշտական դողով...
 Զաղցած հավի պես, ջուն թե արթմնի,
 Հայն էլ ինքն իրեն տեսնում էր անվերջ
 Ինքնավարության կորեկով լեցուն հսկա մարագում,
 Ինքնավարություն, որ հիմա դարձավ... բարենորոգում:

Բարենորոգում...
 Գլուխը քա՛րը.

Թո՛ղ լինե՛ր թեկուզ բարենորոգում,
 Բայց ոչ թե թղթին, ոչ թե թանաքով:
 Բարենորոգում...
 Եթե ամեն ինչ

Ջարդում ես քարով ու դագանակով,
 Փրթում ես թրով ու կեռ դանակով,
 Խուժանի խուժամբ՝ ասես հանաքով,
 Նաև լքո՞րեն՝ կարգին բանակով, —
 Ի՞նչ ես նորոգում.
 Իհարկե լա՛ցը,
 Որ չի չորացել,
 Եվ կոտորա՛ծը,
 Որ չեն մոռացել...

Եթե անջրդի հող ես ոռոգում,
 Ի՞նչ է, եթե ոչ բարենորոգում...
 Եվ ահա Կարմիր սուլթանն իսկապես

Հայի... ջուր դարձած արյունի գետով
 Հայոց անջրդի հողն էր ոռոգում,
 Եվ այդ էր կոչվում բարենորոգում՝
 Այս նույն Բեռլինի 61 կետով:
 Եվ հիմա... դատարկ այս որոշման տակ,
 Իբրև մի կնիք վավերացումի,
 Կարմիր սուլթանը՝ պաղ թանաքի տեղ
 Լավ թաթախելով մեր արյան մեջ տաք՝
 Դնում էր վայրի մի կրունկ...

— Կոո՛ւնկ...

Ա՛խ, էլ ի՞նչ Կոունկ, էլ ի՞նչ սև Կոունկ,
 Սրտավեր պանդուխտ,
 Ո՛րտեղ ես տեսել երկինք հասցընող
 Փրկարար սանդուղք.
 Ո՛վ կըկշտանա՝
 Հացի փոխարեն թե նրան տան թուղթ...
 Սրտամե՛ռ պանդուխտ,
 Էլ ի՞նչ ես այդպես լալիս,
 Չայն տալիս
 Կոո՛ւնկ հա Կոո՛ւնկ,
 Ախ, էլ ի՞նչ Կոունկ,
 Թե ճանչցող դարպաս ու դրունք
 Հայոց հուլիսի դեմ ուժգին փակվեցին,
 Թե հայոց Ուխտի
 Հոգնատանջ ուղտի
 Երկու ծնկներն էլ երեքտակվեցին.
 Նորից մոլեգնեց մահվան հարսանիք,
 Եվ Պոլսից մինչև պատժված Սասուն՝
 Հայոց աշխարհի ամեն մի մասում
 Անբան անասուն դառնալը թվաց մի մե՛ծ արժանիք.
 Թող կթե՛ն, շորթե՛ն,
 Միայն...չմորթե՛ն,
 Միայն...

Ղ Ո Ղ Ա Ն Ջ
Ջ Ա Ր Թ Ո Ն Ք Ի Ե Վ Կ Ե Ն Ս Ա Տ Մ Ա Ն

Եվ խորհել, որ այդ նույն պահին,
Երբ թուրք սուլթանը այսպես վեհաշուք
Տոնում էր ծնունդն ու չմեռնելը հորեկար Մահի,
Միևնույն պահին
Այդ նույն աշխարհում
Գարուն էր, գարո՛ւն:

Ջարայժը նորից
Իր քարայծիկի դունչիկն էր լիզում կիրճում ու սարում՝
Լեզվի ծայրով էլ թույլ չդիպչելով բերնի ընծյուղին.
Արագիլն էլի
Ծեր խնձորենու ծաղկի բոցի մեջ իր ոտն էր վառում՝
Վերցնում ու դնում միևնույն ճյուղին.
Իբրև կշտամբանք ուշացած մարդուն՝
Իր իսկ սեփական նախաձեռնությամբ լույս աշխարհ եկած
Մի ինքնագլուխ արևածաղիկ աչիկն էր թարթում
Հերվա բոստանից.
Գութանի խոփը ժանգից էր նեղվում,
Ինչպես որ մարդը՝ իր դեմքին կպած սարդի ոստայնից.
Բահն աղջկա պես ուզում էր փարվել
Ու հետո մարել կարոտած հողի կրքոտ հպումից.
Սամին ուզում էր անկրակ այրվել՝
Եզան մկանուտ վզի շփումից.
Լծացու բարդին գոհ չէր երևում սուր կացիններից.
Դեղձենիներից մարջան էր կաթում,
Շեփորուկներից՝ երկնքի կայծի,

Եվ ձյունի փաթիլ՝
Ակացիներից...

Գարուն է, գարո՛ւն...

Անցած աշնանը հարսնացածների մայրությունը սուրբ
Ջարթնում է հանկարծ՝
Ծնվելիք մանկան
Թույլ քացիներից...

Շողերն են ընկել օրորոցի մեջ խաղացող մանկան
Հինգշաբաթյան ձեռքի պարզված մատներին,
Ինչպես մոմերին՝ բոցը բարակող...
Աովուտից թափուր հսկա մարագով
Պաղ սովերների հսկա ամբոխն է դես ու դեն անում,
Լուռ հրմշտոցով իրար ոտ կոխում, ջարդում իրար կող.
Դուրս գալ են ուզում, բայց սիրտ չեն անում...
Անուն են ուզում ծաղկունքն անանուն,
Ծաղկունքն անվանի ուզում են նորից
Քնքշանքով իրենց անունը լսել
Կույս աղջիկների շրթներից լուսե...

Գարուն է, գարո՛ւն:

Անփորձ ու անզետ մի ճուտ հիմարիկ
Փակ բողբոջների սովերին ընկած՝
Երևի սիսեռ կամ ոսպ կարծելով՝
Կտցահարում է հա՛ կտցահարում...
Կիսով չոր ու թաց խաղաղ բակերում,
Կալատակերում,
Ուր ծիլ են տվել
Աշնան կալսումից հողում մնացած հատիկներն արդեն,
Աքաղաղն այնպես գոռոզ է քայլում
Անկիրք հավերի անփակ հարեմում՝
Աչքը շուտ տալով մեկ դես ու մեկ դեն,

Ասես երեկվա ասկարը այսօր դարձել է սպա...

Սարալանջերին, հարսների նման,

Կրքոտ պուտերը բռնել են նազպար՝

Հարսների նման մոռացած մի պահ,

Որ աշխարհում կա բիրտ առնանգիչ...

Մի տարի առաջ թուրք թնդանոթի երկաթե ձանկից

Վիրավոր վանքին

Սրբատաշ քարի պաղ վիրակապ է վերստին ծարում

Ձեռքը ծարտարի...

Նորից հաճարին

Սեփական խեժով

Թուրքի գնդակից տեղ-տեղ պատըռված կեղևն է կարում...

Գարուն է, գարո՛ւն,

Բայց մարդասպանին դա չի խանգարում:

Դա չի խանգարում,

Որ արյամբ հորդի հալկական առուն,

Որ դիակներից քարափն անհատակ

Իր պոռնկներով գա հավասարվի...

Ա՛խ, եթե անգամ քարե սիրտ ծարվի՝

Մարդկային սրտում բա կրա՛կ կարվի...

Ո՞րտեղ եք տեսել, որ թել-ասեղով

Կտըրված երակ վերստին կարվի...

Այս արհավիրքից, զուլումից այս չար

Դե, ե՛կ, տնավե՛ր, մի՛ խելագարվի...

ՂՈՂԱՆՋ ԶԱՐՄԱՆՔԻ

Բայց նա այս անգամ չխելագարվեց:
Ո՛չ, նրա միտքը դեռ չխանգարվեց,
Դեռ չխանգարվեց և այն ժամանակ,
Երբ նա Բեռլինից հայրենիք հասավ
Եվ, իբրև կյանքի նոր ծաղրոծանակ,
Ապշած աչքերով այստեղ էլ տեսավ
Եթե ոչ արձատ նույն անն ու մահը,
Ապա երկվորյակ փնն ու վախը նույն,
Նույն լաց ու կոժը, հառաչն ու վայը:
Այստեղ էլ հայի ձեռքը ծոցումն էր,
Այստեղ էլ հայի սիրտը բոցումն էր,
Ու մոլորված էր գլխիկուր հայը:

Այստեղ էր արդեն ցար Նիկոլա՛յը...
Վաթսունմեկ թվի ձևափոխությամբ
Լոկ թղթի վրա շնջված չարիքը
Եվ չնվազած նույն ինն կարիքը՝
Ենթակա պարապ տեղափոխության,
Չուկ դարձած՝ լողում-չէին խեղդվում
Ճորտատիրության անփոփոխ ծովում,
Ու ծառանում էր հեղափոխության
Մակընթացային կանաչ ալիքը:

Եվ Նիկոլայի աչքը ռխակալ

Ամենուր ու միշտ

Եվ ամենքի մեջ,

Անգամ երագո՛ւմ,
Տեսնում էր անվերջ

Միայն «տեռորիստ», «հեղափոխական»,
Միայն «դավադիր», միայն «սոցիալիստ».
Թվում էր նրան կայսրությունն իր ողջ
Մի անծայրամիջ ստեպ օձալից...

Եվ կայսերական բանտին ու բերդին
Բյուրավոր հայեր զոհվելու տարան,
Դեմքին դաղելով մի ահեղ խարան՝
«Հեղափոխական» և կամ «դավադիր»:

Զա՛րջ տվին տարան,
Որ այնտեղ մորթեն

Իբրև մատղացու գառներ ու հորթեր՝
Ի սեր Հիսուսի արդար հավատի.

Գառնուկներ անմեղ՝
Լոկ նրա՛ համար,
Որ միսն էր հարմար՝
Որ միսն էր համեղ,

Ու եթե նաև հորթեր բազմամեղ՝
Լոկ ա՛յն հանցանքով պատժապարտելի,
Որ սին հույների քաղված բոստանում
Հորթուկի նման տրտինգ են տվել...

Այսպես է.

Որտեղ շատ են խոստանում,
Միշտ էլ այնքան են հետո խստանում,
Որ ձեռք են կտրում, ոչ միայն թևեր:

Եվ կամոք ցարի՝
Նրա ռյալկալ

Համայն Կովկասի պատիժ-փոխարքան՝
Հավետ անմոռաց մե՛ր Գոլիցինը,
Երկու գլխանի արծիվը կրծքին

Այդ մոլի ցինը,

Փակում է հայոց դպրոցներն ամեն.

— Օվսա՛ննա... ամե՛ն:

Եվ խաչապաշտի անկշտում ձին էլ
Թուրքավարի է կամենում ծամել՝
Խոտ է որոնում... ջրված մարգերում.

— Օվսա՛ննա... ամե՛ն:

Հայոց դարավոր գիրն են արգելում,
Բռնագրավում վանքի հողերը,

Գանձերը չեղած,
Եղած փողերը,
Պեղում մատանը,
Շտեմարանը,

Որ մի անգամ էլ քամվածը քամեն:

— Օվսա՛ննա... ամե՛ն...

Փակել դպրո՛ցը, ուսումնարա՛նը...
Բայց ինչպե՛ս փակես մի ազգի լեզուն,
Մի ժողովրդի խոսուն բերանը:
Լեզուն կարող է սարսափից լալկվել,
Կապ ընկնել ահից,
Բայց ոչ թե փակվել:

Արգելել գի՛րը,

Այրել գրքե՛րը...

Բայց ո՛նց արգելես կսկըծող սրտի,
Մղկըտող հոգու ժայթքուն երգերը:

Այսպես է.

Միշտ էլ երբ համն են հանում՝
Ուղիղ հակառակ բան են ստանում:

Եվ արդ՝ չուզելով և ակամայից՝
Ովստյալ հայատյաց այդ Գոլիցինը

Մինչևիսկ արդեն ուսացած հայից
 Մոլի հայ սարքեց:
 Կրկընվեց հի՛նը.—
 Որ հայերենը վաղուց էր մնջում՝
 Հիմա հնչում էր,
 Նույնիսկ մորնչում.
 Ով հայ գրքի դեմ աչքերն էր փակում,
 Արդ սովորում էր հայ գիրը
 Թաքո՛ւն.
 Ով ոռմանսով էր թրջում իր բուկը,
 Բերան ողողում օտարի երգով,
 Հիմա գրգռուիչ մի հպարտությամբ
 Սեղան էր գցում հա՛յ երգի ձեռքով,
 Հա՛յ երգով վարում իր գինարբուքը,
 Հա՛յ նվագի տակ ուրախ պար գալիս,
 Հա՛յ խաղով-տաղով երգում ու լալիս:

Հայ երգն էր հուզում,
 Հայ խոսքն էր հոսում.

Հակառակությա՛ն ոգին էր խոսում,
 Հակառակության այն զարմանալի՛,
 Անհիմանալի՛

Արտառո՛ց ոգին,

Որ պարզեցած է եթե ամենքին,
 Ապա հայ հոգում այնքան է առատ,
 Կարծես բաշխելիս բնավ չէ՛ն նայել,
 Իսկ թե նայել են՝ բա՛ն չեն խնայել,
 Փռել են այնպե՛ս շոալլ ու առատ,
 Որ չես հասկանում՝
 Ազգային արա՛տ,
 Թե՛ արժանիք է...
 Այն է թերևրս,

Որ մեզ ջնջել է, բայց և պահպանել,
 Որ մեզ սպանել,

Ծնել է նաև,
 Ու որով գուցե ապրում տակավին
 Եվ աշխարհումըս կոչվում ենք հայեր...

Ինչպես մարդկանց մեջ՝անցողիկ կյանքում,
 Այդպես պատմության ծանրը երկայնքում
 Երևի նաև լինում են ցեղեր,
 Երևի նաև ազգեր են եղել,
 Որոնց վիթխարի մարմինը թեպետ
 Գինու տկի չափ արյուն է տանում,
 Բայց դա արյուն է, որ չի լերդանում.

Մի քերթվա՛ծք, մի վե՛րք,
 Ու բանը բո՛ւրդ է.

Կողքը պատռված գինու տկի պես
 Ջամվում են իսկույն,
 Եվ անհետանում,
 Չքվում է ազգը կամ ժողովուրդը...

Իսկ մեր արթո՛ւնը...

Նա ջրի՛, ցեխի՛

Եվ մինչև անգամ գարշահոտ նեխի՛,
 Ամե՛ն ինչի մեջ իսկույն լերդանում,
 Փակում էր վերքի բացված բերանը:
 Եվ այդ մակարդը, նույն այդ մերանը
 Որդուն է անցել հորից ու մորից.

Եվ արյունաքամ,

Կիսամեռ անգամ,

Մենք քանի՛, քանի՛, մենք քանի՛ անգամ
 Հոգեդարձի պես փրկվել ենք նորից...

ՂՈՂԱՆՋ ՀԵՐՈՍԱԿԱՆ

Ա՛խ, ի՛մ ժողովուրդ,
 Ես դեռ չկայի՛,
 Որ քեզ պես ես էլ քեզ հետ տոկայի՛
 Ծավվելու պատրաստ մեջքըդ գրկելով:

Սակայն դու,
 Որ քո պատմագրքերով
 Մի ձիգ ցուցակ ես
 Ու լեցուն ցանկ ես
 Նահատակների՛,
 Զոհի՛,
 Հսկայի՛,

Դու չես զգացել երբևէ կարիք
 Նաև քաջերի,
 Անբեկ աջերի,
 Որ կրծքիդ վրա
 Դարձել են զրահ,
 Որ սուրբ են պահել պատիվդ ազգային
 Իրենց պարզ կյանքով-մահով հսկայի:

Ա՛խ, ի՛մ ժողովուրդ,
 Ես դեռ չկայի՛,
 Բայց կտրիճ որդիք մի՛թե քիչ կային,
 Որ— հողի՛ տակից— զենք էին պեղում
 Եվ քո արյան դեմ սև արյուն հեղում:

Սասունը...

Արդեն ո՛րերորդ անգամ
 Նորից տեր դարձավ նոր Դավիթ մանկան,
 Որ— ինչո՞ւ սակայն—

Կոչվեց... Անդրանիկ:

Ահեղ ջարդերի ճարակող բոցում
 Ամեն սասունցի դարձավ Սասնա ծուռ,
 Սասնա տուն դարձավ ամեն ընտանիք,
 Սասնա դյուցազուն՝ թե՛ մեծ, թե՛ պուճուր,
 Որ— բավակա՛ն է—
 Քառասունժամ կոպսեր, հարսներ արմաղան
 Օսմանցու համար էլ երկանք չաղա՛ն,
 Որ— բավակա՛ն է...

Խանդուկ խաթունի գովքի փոխարեն,
 Սասնա զմբզմբան ջրերի նման,
 Հնչեց սարերում, ճամփեքում ոլոր
 Աջ ու ձախ հորդած
 Երզը քաջորդաց՝
 «Վայ-զուլում-վայը»-ը մի պահ խեղդելով...

Կիլիկիո տունը՝
 Անառ Զեյթունը,
 Որ մեն ու մենակ,
 Սակայն միակամ

Կովել-հաղթել էր քառասուն անգամ,
 Հիմա՛

Քառասունմե՛կերորդ անգամ,
 Ծեկ բուրվառի հետ
 Սև վառող խնկեց,

Խաչը վերստին դրոշակ տնկեց,
 Ճորտության գիրը կրկին հերքելով՝
 «Սուր ու թուր, գնդակ ու հրացանը
 Մեր խաղալիքն է» խրոխտ երգելով:

Միակուռ դարձավ, ինչ ցիրուցան էր:
Կամք-սիրտ-նպատակ
Իրար հողվեցին:

Եվ մեր դարավոր թշնամու սրտում
Յուղոտ գնդակներ ծենճահոտվեցին:

Նրանց էր լսում մի ողջ Հայրենիք.
«Պատերազմիկ ենք,
Ոչ թե վայրենիք»:

Նրանց էր լսում թշնամին սաստված.
«Դուք ունեք սուլթան,
Մենք ունենք աստված»:

Նրանց ձայնի մեջ լսեցինք մեզ մենք.
«Մարդ կոտորելը
Սովրեցանք ձեզմեն»...

Ու եկեղեցիք պահքի մեջ մտան՝
Սգավորվեցին
Ամբողջ չորս ամիս,
Ջանգի քայլում էր Մաքառումն ինքը
Իբրև գինովցած մի Բարեկենդան:
Սուրբ սեղանների վարագույրները
Փակված մնացին
Ամբողջ չորս ամիս,
Ջանգի բացվել էր Հերոսությունը,
Որպեսզի իր տաք
Կրունկների տակ
Ազատությունը ահարկու թնդա:

Հարսներ,
Աղջիկներ,

Մայրեր,
Մանուկներ
Մերկացան իրենց արդուզարդերից,
Հագան քուրձ,
Ինչպես հագնում են զրահ:
Եվ ամեն հայ սիրտ
Դարձավ մի սրահ,
Որ Վհատությունն էր հոգեվարում
«Կա՛մ-կա՛մ»-ի հատու հարվածների տակ,
Եվ Ազատության ոգին էր պարում՝
Որպես վրնջող մի խենթ հովատակ:

110 000 զորքի հանդիման
Մարտնչում էին 6 000 քաջեր:
Չմարդկայնացած թուրքի հանդիման
Մարդեղինացած մի ազգ էր խաչել
Իր բախտն իր վրա:

Եվ սո՛ւրը նրա,
Որ ամբողջ վե՛ց դար սևար էր դարձել
Մեր մանուկների օրոցքի համար,
Սուրբ մատյանների գրքածածկերից
Խենեշ ժպիտով կարել էր բարձեր
Իր հաստ-իզացող նստուկին հարմար, —
Եվ սուրը նրա
Դիպավ մեր խոփին,
Մեր թարթիչ-նետով զինավառ կոպին,
Մեր մամիկների ասեղին ճարտար,
Մեր մանուկների հայացքին արդար,
Մեր մանգաղների շեղբերին տոկուն,
Մեր թոնիրների խաչերկաթներին, —
Երբեք չմեռած հայկյան մեր ոգուն,
Որ ճառագայթող տասը մատներին

Ձեր դրել հինա՝
 Հոմանու նման,
 Այլ քսել արյուն՝
 Հովաննու նման,
 Որ Հայտնության օրն ի վերջո հասնի,
 Եվ ամեն մի ազգ արժանին տեսնի...

Իր վարդապետի մթին վեղարով,
 Թե ուզեր՝ գուցե և նա էր կարող
 Հարկադիր մարտին միջամուխ լինել՝
 Գոտեպնդումի խոսքերով զինել
 Հուսահատվածին,
 Քաջին մաքառող,

Որպես նորօրյա մի Ղևոնդ երեց:
 Սակայն պայքարի զոհասեղանին
 Նա բոլորովին ուրի՛շ զենք դրեց:

Իր ժողովրդի
 Երգահան որդին
 Իր ե՛րգը բերեց
 Քաջորդաց մարտին,
 Իր «Լո-լո»-ն՝
 Մի ջո՛կ,
 Մի դասա՛կ,
 Մի գո՛ւնդ,

Եվ կովոդների հոգին հանեց թունդ,
 Մեկին տասն արեց
 Եվ հարյուր՝ տասին,
 Նա՛

Խրոխտ «Լո-լո»-ն լուռ Կոմիտասի:

Սիփանա սարը գոռ արձագանքեց՝
 Խոպոտ Նեմրուդից չափը խլելով.
 — Սիփանա՛... լո՛-լո՛...

«Սուրբ Կարապետ»-ի զանգը զիլ զանգեց,
 Ամեն մի զանգը՝ մի-մի լո՛թ հողով.

— Կտրիճնե՛ր, լո՛-լո՛...

Վարագա լեռը,
 Ծամիրամ-առուն

Նույն մեկ բայն էին անվերջ խոնարհում.

— Սուրը հագեցա՛վ...

Ներկված եփրատը փերին տալով,
 Վանա ծովակը տրտում խնդալով
 Իրար ձայն տվին.

— ... Դրեցին պատյա՛ն...

Ո՛չ,

Չհագեցան սրերն, իհարկե,
 Սակայն իսկապես դրվեցին պատյան,
 Ու երազելով մի ահեղ ատյան՝

Հայ մաքառումը,

Կտո՛ր առ կտո՛ր,

Յուրաքանչյուրը՝ մի կարմիր հատոր,
 Այս անգամ նորից չավարտվեց.

Հատվեց՝

Բացականչության ու կախման կետով...

Հայի արյունը նորից լերդացավ,

Ու վերքը դարձավ ապաքինելի:

Կսկիծ ու մրմուռ,

Ծմլոդ սրտացավ

Աչքերի խոսուն ապակիների

Գրեցին, թե ե՛րբ ի չիք կղառնան...

Չմեռը նորից գարուն է դառնում,
 Ամառն է կրկին հետևում գարնան,

Ամառվա տեղը աշունն է բռնում,
Եվ նախ՝

Վախվորած, շվար ու մոլոր,
Ապա՝

Աննկատ և անամայից
Ժպիտն է խաղում շուրթերին հայի.
Թներն է ծալում ուժասպառ Լո-լո-ն,
Կոկորդն է ցամքում Վայ-աման-վայ -ի,
Նորից է հնչում ուրախ Նայ-նայը-ը:

Իսկ որտեղ երգը՝
Այնտեղ էլ նա է...

Մ Ի Զ Օ Ր Ե Ի Հ Ա Մ Ա Ջ Ա Ն Գ

Ղ Ո Ղ Ա Ն Ջ Ո Ւ Ն Տ Ա Գ Ն Ա Յ Ո Ւ Թ Յ Ա Ն

Աշունն էլի գբաղվում է ներկարարի իր փեշակով.
Նա օրն ի բուն աշխատում է,
Իսկ գյուղացին՝ հանգստանում,
Երբ աղունը տուն է գալիս
Ժանր սայլով կամ իշուկով,
Երբ աղվում է թթու-թուրջին,
Նորոգվում է ճոճկան քուրսին,
Ու չորացած ցան-փթիլը ամրոցի տեսք է ստանում:

Ամբողջ ամառ

Ջրի համար

Հոգի տվող հողը հիմա
Ծծողական թղթի նման
Կլանում է եղյամ ու թոն
Ու մեկ քրտնում, մեկ մրտում է:
Փխրուն գետինն աշնան ցրտի պա՛րզ գաղտնիքով
Նորից իրեն, մումիայի պես, զմուսում է:

Ընկուզենին ու խնձորին
Իրենց խաշամն են ծալծլում հանդ ու ձորին՝
Նորահարսի փոթ-փոթ շորի
Ալիքավոր դարսի նման:

Լոկ փշատն է կարմրատակված կախվել ճութ-ճութ՝
Մեղվի գնդված պարսի նման:

Վերի-վերի, պարապ-սարապ ջահելի պես՝
Չի կարենում քամին մի տեղ տիտիկ անել,
Դես է վազում-դեն է թռչում,
Մերթ ուզում է ծերպի խորքը մտիկ անել,
Մերթ ծառի հետ կոխ է բռնում,
Քիթը կոխում ուր պատահի՝
Սափորի մեջ,
Հարս ու կանանց խորհրդավոր փեշերի տակ:

Լեռնաշխարհում աղբյուր-վտակ
Իրենց սնդիկ մարմնի վրա նորից հագնում են ապակի,
Մինչ տներում՝ ներսի տաքից՝
Ապակիներն ուրախությամբ լաց են լինում աննպատակ:

Ղավորման է ամեն թոնրի
Աղ ներթծում ու ճարպ հալում:
Ամեն կողմից կանչում խաշի,
Հարիսա են անվերջ հարում:

Այստեղ՝ ծնունդ,
Այստեղ՝ կնունք,
Աչքալույսի ծպտուն օդի:
Ամեն մատուռ՝ հավաքավայր,
Եվ ամեն վանք՝ ուխտատեղի:

Ու վանք տանող ամեն ճամփա ու սալուղի
Նախըջվում են տեսակ-տեսակ ոտնահետքով,
Տրեխավոր, մաշիկավոր, բոբիկ ոտքով
Վանք են գնում
Հեռու-մոտիկ ամեն գյուղից:

Տան առաջնեկ գառը՝ կապված էջի վզից,
Առաջ վազում, կախ է ընկնում, շուրջը նայում,
Ու տանջվում է այն հարկադիր ու կեղծ հազից,,
Որ անկասկած պիտի հնչեր իբրև մալուս...

Այնինչ շորու մեջքին կապված
Ջնգզնգացող սև կաթսայից՝
Ինչպես ասպետն իր գրահից՝
Մի զառ խորոզ,
Գռոռ՝գ-գռոռ՝գ,
Իր կատարն է մեկ դուրս հանում,
Մեկ՝ ներս տանում,
Եվ թափ տալով իր թևերը հրանման՝
Չիրկիզող կայծերի խուրձ
Ու բոցեր է ցրում իր շուրջ:

Եվ սալերն են առաջ սողում՝
Լծից պոչուկ բեռնավորված
Աղմըկարար ձիժ ու պիժով,
Աման-չաման-կուլա-կժով,
Աչքերն ածուխ աղջիկների անծուխ բոցով,
Նորածընի օրորոցով:
Ու դալարուկ ճիպոտն ահա
Իր ազդեցիկ սուլ սուլոցով
Մինչև եզան մեջքը դադի՝
Նախ երկնքի կապույտ երեսն է կտրատում՝
Երկրից ձայթած կայծակի պես:
Ոմանք՝ ուրախ,
Ոմանք՝ տրտում,
Սա՝ տխրադեմ-որբ ճագի պես,
Նա՝ ծպտերես ու բախտավոր,
Սա՝ կարմրաթուշ,
Նա՝ ախտավոր,
Եվ բոլորը՝ ուխտը սրտում—

Թը՛փ հա թըր՛փ,
 Զը՛նգ հա զըր՛նգ,
 Ծը՛ո հա ճոի՛նչ—
 Հասնում են վանք՛
 Ուխտատեղի:

Եվ մոմերի ու կանթեղի
 Բուրումնալից բոցն է ճթթում,
 Ժաղկի նման փունջ-փունջ փթթում,
 Ժաղկի նման վառ ու դեղին:
 «Տե՛ր» են կանչում մի-մի բերան,
 Մի-մի ծունըր աղոթք անում,
 Մատղացուի ոտ ու վզից
 Արծակում են կապ ու պարան,
 Եվ գավիթի սալարկը պաղ
 Զոհի արյամբ է տաքանում...

Եվ հնչում է դիոլ-զուռնան,
 Որ վանքերը հնամենի,
 Մատուռները մեկեն դառնան
 Խրայսճանքի արբշիռ ու ցոփ հրաբլարակ:

ՂՈՂԱՆՋ ԽԱՂԿԱՊԻ

Ու տեղներից վեր են թռչում
 Թիկունքը լայն-մեջքը բարակ,
 Բոլը թիլ-թիլ,
 Բեղը ծիլ-ծիլ
 Զահել տղերք,
 Տղամարդիկ մացառմորուք,
 Կուրծքը՝ փոչոտ,
 Դեմքերն՝ այրված,
 Աչքերն՝ այրող,
 Հագած-կապած՝

Որը քաթան կամ շալ-շապիկ,
 Որը չոխա կամ արխալուղ,
 Բրդե գոտիկ, արծաթ քամար,
 Իսկ զոլավոր և կամ պուտ-պուտ գուլպաներին՝
 Խոռոմ սապոգ, մազե քոշեր,
 Սև կարիճի պոչի նման կեռքիթ տըրեխ:

Վեր են ցատկում, գալիս շարվում իրար կողքի,
 Եվ թուխ-թանաք, և պատ-կտրիճ տղամարդիկ
 Պարսպվում են ու բըրզանում:

Սկսվում է բուրբաբը:

Ժանըր քայլքով,
 Անեղանակ-աներգ-անծափ,
 Բայց համաչափ,
 Երկու շրջան բուրբում են, պտուպտ տալիս

Ինչ-որ զգույշ ու կարկամած,
Հետո քայլքը արագացնում կամաց-կամաց:

Պարագլուխ ճայնեղ տղան խաղ է կապում.
— Փեշո եմ ընկել, Աստվածածի՛ն...
Խումբը բռնում վերջին բառից ու ձգում է.
— Աստվածածի՛ն...

Իսկ հողեղեն աստվածածնի անմատչելի կախարդանքով
Աղջիկները ծուլ-ծուլ տալիս,
Մոտ են գալիս,
Բայց չեն մտնում պարաշրջան:

Իր խաղկապն է խաղասացը առաջ տանում.
— Ա՛խ, ջանեջա՛ն,
Բարով հասնեմ իմ սիրածին...
Խումբը բռնում է վերջին բառից ու ձգում է.
— Իմ սիրածի՛ն...

Լայնանում է պարաշրջանն ամեն րույե,
Դիզն անվերջ շարունակում է տրոփել,
Հանգույցներ է տալիս զուռնան՝
Եղանակն է կոտորակվում,
Իսկ դիզը՝ սպառնալով՝
Այնուհանդերձ չի տրաքվում:
Հետո նվագն արագ-արագ,
Փշուր-փշուր կուտակվում է,
Ձիգ է տալիս,
Վրա գալիս,
Եվ թե մեկ էր՝ չորստակվում է.
— Ա՛խ, թե չառնեմ,
Ես կմեռնեմ...

Ու կուպալի թակութակից
Մինչև անգամ փուչ դիզի անմազ դեմքն է փշաքաղվում,

Իսկ զուռնայի ծակուտակից
Արցունքներն են կարծես շաղվում:

Պարեկների ողկույզ-ողկույզ մազերի մեջ
Մոլորվում է մեղվի նման բզբզացող աշնան քամին
Կամ պլլըվում նայողների վիզ ու լանջին՝ չխայթելով.
— Քամին գանա,
Ծոցըդ բանա...

Հարս ու աղջիկ, ջահել կանայք
Դեռ չեմուչում, նազ են անում
Ու չեն մտնում պարաշրջան.
— Ե՛կ, ջանեջա՛ն...

Հետո արդեն չեն դիմանում
Ոսկորների ու հողերի տանջող ցավին,
Ու հնչում է մի ձևացո՞ղ,
Թե՛՛ ամաչկոտ թույ-թույ ծիծաղ:
Իսկ երբ տեղից մեկը պոկվում
Ու թռչում է պարաշրջան.
— Ա՛լ, ջանեջան...

Մյուսներն էլ՝
Լորե՛րի պես քլթիկ-մլթիկ՝
Հետևում են ողջ երամով:

Եվ արևի համ ունեցող,
Չորեքդիմաց ծամ ունեցող,
Մեջքակոտոր, ծնկածալիկ,
Ծոցվոր,
Բոցվոր,
Խնկածաղիկ,
Խունջիկ-մունջիկ
Հարս ու աղջիկ՝

Սիրո հրջեջ-սիրո հրձիգ՝
Տասի համար անգույթ դահիձ,
Մեկի համար խոնարհ ծառա, —

Ճակատներին բոլոր «շահի»
 Ու մեջքներին ոսկե քամար,
 Արեգակից շատ ավելի
 Կարմրատակած իրենց շողքից,—
 Ծաղ են գալիս ծընդոցով,
 Հետո շարվում իրար կողքի՝
 Ինչպես անտես թելի վրա
 Հագարերանգ հուլունքի ծոր:

Պարաշրջանն է լայնանում,
 Եվ փոխեփոխ՝

Հանգույց-հանգույց, օղակ-օղակ՝
 Երգ են կապում աղջիկ-տղա:
 — Ի՛նչ ես կտոր-կտոր գալիս,
 Ականջ արա, բան եմ ասում,—
 Պարագլխի ծայնն է հոսում:
 Խումբը խլում ու ձգում է.

— Ա՛յ, լարե ջան...

— Երբ խոսելու տեղն է գալիս,
 Խոսկան տղի թութակ լեզուն...—
 Մի աղջիկ է շուտ սկսում:
 Օգնություն է խումբը տալիս.

— Ա՛յս, մարե ջան...

—... Խոսկան տղի թութակ լեզուն՝
 Սերից երված խաղ է ասում,—
 Տղան նրա խոսքն է կիսում:
 —... Ձե՛, բերնի մեջ լեզուն ասես
 Կտորվում է բանալու պես,—
 Ծամկտրածն է տղին կիզում:

Խումբը՝

— Հա՛-հա՛, հե՛-հե՛, հա՛-հա՛,—

Քրքջում է:

Ու թըռչում է:

Իսկ ջահելը թեպետ դաղվում,
 Բայց և ուշքն է գլխին ժողվում,
 Ու երբ նորից հերթն է գալիս,
 Պատասխան է մի կերպ տալիս.

— Էրված սրտով եկել եմ ուխտ,
 Որ պաղ սրտիդ անեմ մեկ թուղթ...

— Սեղան պաչեմ մեկ-մեկ ու ջուխտ,
 Որ չբռնի ինձ գիր ու թուղթ...

— Օրոր-շորոր ով քեզ տեսավ՝
 Հաց ու ջրից կկտրվի...

— Հերի՛ք փչես, ա՛յ ջան փեսա,
 Դալար շի՛վ եմ՝ չե՛մ կտրվի...

— ... Հաց ու ջրից կկտրվի,
 Կգա ձեր տուն՝ դառնա մշակ...

— ... Դալար շի՛վ եմ՝ չե՛մ կտրորվի,
 Սուտ խոսելն ես շինել փեշակ...

Խումբը նորից է խառնըվում

Իր գոչերով

Ու կոչերով.

— Դե, թը՛ո-թըո՛ի՛,

Հո՛պտա-տըմբա՛:

Եվ դիպչին ու զուռնաչին
 Նվագում են թունդ Թոնոց-ինս

Եղանակը ծալծվում է,
 Դարսվում իրար՝ալիքի պես,
 Եվ փրփուրը կայտառուության

Պղպըջում է ջահելների գժված սրտում:
Նույնիսկ պարին չմասնակցող
Նախանձ կանանց բերանի մեջ
Սև ծամոնը՝
Օգտըվելով հիացմունքի ազդու պահից,
Հանգստանում-ջունչ է քաշում՝
Ատամների հետքով կնքված իրավունքով:

Սրա վզի «նապոլեոն»-ի,
Նրա մեջքի արծաթ գոտու
Յողքն է ընկնում վանքի պատին
Կամ դիողչու նեղ ճակատին,
Հետո չքվում չաղ զուռնաչու չոված աչքում:

Կրակ կըտրած կաղ դիողչին
Հսկայական իր կոպալով
Եղանակը ետ է կծկում.
Ու զուռնաչու թշերն ուռած
Փուքսի նման իջնում են ցած,
Եվ աչքերը, որ խմիչքից ու զոռ տալուց
Լայնացել են ու կարմրել՝
Գութան քաշող եզան հսկա աչքերի պես,
Հիմա նորից
Ստանում են մարդկայինի տեսք ու շնորհք...

Իսկ գավիթի պարսպից դուրս՝
Դարձյալ՝ նվազ, պարեր ու տաղ,
Մանրիկ ժպիտ, զնգուն ծիծաղ,
Ծիվ տված սեր,
Ծլած հույսեր,
Երազների,
Մուրազների
Լուռ թևածում,
Կարոտներից ծանրած հոգու թեթևացում:

Այստեղ
Հորթուկ զույգ պատանի
Կոխ են բռնել՝
Ավազների հրահրոցով.
Այնտեղ՝
Թաքուն՝
Մի մատանի
Սիրած տղի ձեռքով դողդոջ
Չափսի գալիս սիրած լարի մատի վրա
Ու վառում է մատն իր բոցով:

Այստեղ՝
Ծերեր, որ մանկացած
Վեզ են խաղում կամ ներկած ծու:

Այնտեղ՝
Չաղու պառավների
Ասեկոսե ու մերկացում:

Նոր ժամանած ուխտավորներ
Վանքի ներսում, վանքի առաջ,
Դեռ չզոհված հորթի տրտի՛նգ
Ու երինջի վերջին բառաչ.
Դեռ չմորթված աքլորների
Անժամանակ զիլ ծուղրուղու:

Իսկ այս կողմում՝
Լարախաղաց
Ու վազվզող մի ծաղրածու,
Եվ մի քամի, որ չգիտես՝
Ծաղրածուին կապկո՞ւմ է, թե՞ տնազ անում.
Գլխիկոնծի-գլխիկոնծի՝
Գժուկի պես թավալվում է, փոշի հանում,
Հետո, հանկարծ, թափ է տալիս կեղտ ու փոշին

Կիրակնօրյա հագուստներին տղամարդկանց
Կամ ձեռքերն է շուտ մաքրելու սուտ փորձ անում՝
Ջահել կանանց ազդրերին քլամբսելով...

Վանքի շուքն է մեկ երկարում-մեկ կարճանում,
Ասես կրիա մի վիթխարի՝
Մերթ շոգելով-մերթ մրսելով՝
Իր գլուխն է սև գրահից դանդաղ հանում
Ու ներս տանում:
Իսկ լեռները՝

Նույնպես իրենց սովերներով,
Որ ձգվում են հետզհետե,
Ասուպիսի թունդ սիրահար կանանց նման
Մոտենում են լուռ, թաթերին,
Նայում պիշ-պիշ...

Եվ մինչ խարույկ-օջախների
Անբոց շեղջերն են մարմըրում,
Մատղացուի նման զոհված արեգակի արյամբ բոսոր
Երկնի ամպերն են կարմըրում:
Մութն այլևս չի ընկրկում բամբ ձայներից,
Որ մնջում են՝ չուզենալով,
Կամաց-կամաց:

Եվ լոռություն մի վիթխարի,
Նախ դողեղող ու կարկամած,
Հետո քիչ-քիչ սիրտ առնելով՝
Մոտենում է, ծանրը թառում
Չշմած վանքին ու ձանձրացած սար ու քարին:

Եվ ոչ մեկը,
Բացի՝ զուցե մի անմարմին-ներողամիտ իրեշտակից,
Եվ ոչ մեկը չի նկատում,
Որ կարճմորոա մի անծանոթ,
Բերանքսիվայր պառկած կտրին՝ դիմացի տան,

Ողջ ժամանակ աչքը՝ նրանց
Եվ ականջը՝ եղանակին,
Անափ սրտում՝ հիացմունքի ծփան մի ծով,
Սեղմ շրթերին՝ երանելի-շաղված ժպիտ,
Նրանց երգ ու նվագին է ականջ դնում ինքնամոռաց,
Եվ մատիտը ու թուղթն առած՝
Նկարո՞ւմ է,
Թե՞ գրում է

Ինչ-որ նախշեր ծոտտիկ ու ծուռ՝
Նման կարծես այն գրերին,
Որ գրբացն է թուղթ անելիս միշտ գծմըծում:

Ո՞ր գլուղացու,
Ո՞ր միամիտ-աստվածավախ շինականի մտքով կանցներ,
Թե հոգևոր
Ու կարգավոր

Մի վարդապետ բեղ-մորուքով
Վանք է եկել՝ վանք չի մտել,
Վանք է եկել, բայց ո՞չ ուխտի,
Ո՞չ քարոզի կամ օրհնության,
Այլ հեթանոս ու կռապաշտ
Ռատարկ-մատարկ խաղ լսելու,
Որ կապում են աղջիկ-տղա,
Լակոտ-լուկոտ:
— Մե՛ղա քեզ, տե՛ր...

ՂՈՂԱՆՁ ՉՄԵՌՆԱՍՈՒՏԻ

Աշունն անվերջ խորանում ու խորանում է:
Արագածն ու Մասիսներն են արդեն ձնել:
Մինչ տանիքին արքաղն արդյոք չորանում է,
Թե՛ թացանում շաղոտ-ցողոտ առավոտից
Եվ իրիկվա եղամաշունչ խոնավ օդից,
Նույն այդ պահին նկուղներում ու մառանում
 Կախանները սրսըփալով
 Սեղմըվում են,
 Կպչում իրար՝

Իրենց ծխտուն՝ առանց այն էլ նեղ շարանում:

Այնպես հաստ է սերակալում մաթունն արդեն,
Որ գոալը պիտի խրես բահի նման,
Բայց իր տեսքով հիմա ամեն մի մաժնաման
Տեսնողի մեջ իսկույն սարսուռ է հարուցում:
Իսկ զարս-կարագն անգամ հարուստ տան խնոցու
 Երեկ՝ հսկա դոմի նման,
 Այսօր՝ դառնում հազիվ մի ձու,
Փոքրանում է՝ անհետանալ շտապելով:

Եվ մանրամաղ ու չանձրևներ վար թափելով՝
Պատրաստվում է երկինքն արդեն
Չնով նախշել գետինը պաղ:

Բարակում են, դառնում ճապաղ
Ծիծղուն աղբյուր, ցատկան վտակ:

Օրըստօրե՝ պատերի տակ
Էլ ո՛չ նարդի չխկացընել,
Ո՛չ էլ խաղալ վեզ ու դամա.
Արդեն կարգին ցուրտ է հիմա:

Եվ ներկարար աշնան հետքով
Ինքը ձմեռն է մոտենում:
Ինքնավստահ, ծանրաբարո՝
Վարագուրված երկինքներից
Դանդաղորեն իջնում է ցած,
Անցնում, գալիս սար ու քարով,
Նստում ծանրը ու պնդանում
Եվ անշտապ մի լրջությամբ
Զբաղվում է սա էլ արդեն... նկարչությա՛մբ,
 Նկարչությա՛մբ,
Որ մեկ գույն է լոկ ընդունում:

Երբ արևը ցույց է տալիս իրեն մեկ-մեկ՝
Սակավ, ինչպես թույլ ժպիտը
Հիվանդ դեմքին մի աղքատի,
Սկսում են սառույց ու ձյուն դառնալ կաթիլ,
Սկսում են, բայց և իսկույն
Իրենց սխալն իրենք զգում,
Շար են շարվում սրա-նրա տան ճակատին,
Ջրհորդանի շիլ երկաթին,
Եվ—թե ինչպե՛ս՝ չե՛ս նկատի—
 Ամենուրեք

Ու հատկապես եկեղեցու բարձր պատից
Կախ է ընկնում սառցի լույան՝
Մեկը մեկից երկար ու լայն՝
Երեխեքի ախորժակը բաց անելով:
Կախ է ընկնում և— ըստ տատի—
Ճերմակ Դևի դիտմամբ չոված մատների պես
Երեխեքին ահ է տալիս՝ չանչ հանելով,

Որ փայտ-քարով ցած չգցեն,
 Վերցնեն թծեն,
 Թե չէ՝ կապույտ հազ կկայչեն...

Երդիկներն են, որ ամեն օր լուսածագին
 Թոնիրների ծոխն են անվերջ երկինք փնջում,
 Իսկապես որ կարծես շնչում
 Խոր քուն մտած Ան Դևի պես:

Ու երբ ձմռան անծայրածիր սպիտակին
 Մարդիկ իրենց մժեղային սևն են խառնում՝
 Տաք տներից ելնում են դուրս, ու, խևի պես,
 Ո՛ր են գնում-ո՛ր են դառնում՝ չես ըմբռնում,
 Եվ իրենց իսկ շունչն է իսկույն եղյամ դառնում
 Իրենց փոչոտ-թավ բեղերին,
 Որ սարյակի թևերի պես
 Մեկնըվում են տարբեր կողմեր, —
 Հենց ա՛յդ պահին,
 Նո՛ւյն ժամանակ
 Սառնամանիքն է ինքնակամ կարգվում հսկիչ,
 Ու պահակ են դառնում անվարձ
 Ամեն տեսակ պաղ-պաղ հողմեր...

Իսկ աղքատի դատարկ գոմում
 Մարան պատի քարերն ամբողջ
 Այնպես առատ են եղյամում,
 Որ աղասեր ու դեռ անփորձ
 Հորթ ու երինջ
 Եղյամը ջինջ
 Մոլորությանը կարծելով աղ՝
 Լիզմըզում են ու ի՛նչ. ավա՛ղ,
 Լեզուն քաշել են շտապում՝
 Ծանոթացած
 Այն սրտփորրիկ-կեռակտուց զգացումին,

Որ այդպես էլ չեն իմանա,
 Թե կոչվում է հիասթափում...

Տարվա այս ուշ եղանակին,
 Երբ դեռ վաղուց՝ աշնան տաքին
 Հարկավորը աղել,
 Մաղել,

Ավելցուկը հորում թաղել,
 Սարքավորել,
 Կարգավորել,
 Կժի ճաքին,
 Ծորի ծակին

Կիր են դրել ու կարկատան,
 Երբ տանիքի ծուովիզ դեզի
 Անգամ տեսքից մարդ է մրսում,
 Մինչդեռ այդ նույն դեզի ներսում.
 Չյուն-սառցի տակ
 Այնպես է տաք,
 Ինչպես մարմինն անթև ճուտի,
 Կարծես վաղուց՝ ամռան մուտին,
 Դրսում գերել,
 Այստեղ բերել

Ու պահում են ձմռան համար
 Մի պատառիկ ջերմին ամառ
 Եվ մի բաժին անուշ գարուն՝
 Թիաժանի գույներ պահած իր խոտերով,
 Իր գմբուսված ծաղիկների թով հոտերով,
 Տարվա այս ուշ եղանակին,
 Երբ կոշտապատ ձեռք ու բազուկ
 Հանգստանում փոքրիշատե
 Ու դառնում են մի քիչ նազուկ.
 Տարվա այս ուշ եղանակին,
 Երբ բառը թանկ, եղանն անզին,
 Լուծը երկար, սամին թզուկ՝

Մի անկյունում,

Իրար գլխի,

Պարապ-սարապ՝

Վերևից են նայում հիմա խեղճ թիակին,

Որով անվերջ պետք է բակի

Ու կտուրի ճյունը սրբել, —

Տարվա այս ուշ եղանակին

Էլ գյուղացուն ի՞նչ է մնում,

Թե ոչ երգե՛լ, պարե՛լ, հարբե՛լ,

Ժամանակն է սուրբ պսակի,

Մեկ-տասնըմեկ հարսանիքի...

ՂՈՂԱՆՋ ՀԱՐՍԱՆԵԿԱՆ

Արդար լույսը դեռ նոր բացված՝

Թագվորահոր տան տանիքին

Ջուռնան զլում է Սահարի

Եվ հեռավոր ու թաղական,

Ազգ-ազգական,

Գյուղ-գեղովի

Հավաքվում են կամաց-կամաց

Ուրախության մի ժողովի,

Որին թող որ աստժու կամքով

Արժանանա ամեն օջախ:

Ու գուռնայի փողն է դառնում

Թե՛ աջ ու ձախ,

Թե՛ վար ու վեր:

Մարդիկ օղուն գինին խառնում

Ու մոռացած դարդ ու ցավեր՝

Հանձնվում են ուրախության:

Ե՛վ ըս մի փարչ չափից ավել,

Ե՛վ ըս մի գավ թունդից ըմպում՝

Ու սիրտն ի սեր անկախության

Գլխի դեմ է ապստամբում:

Իբրև ազդու քաջալերանք՝

Գոռ դիռլն է անվերջ դմբում,

Ու կորչում է ամեն վարանք.

Պար են մտնում արդեն նրանք՝

Մինչև մի պապ կամ մի նանի
Մոլութուննից նրանց հանի.
— Տո՛, կսպասե՛ն հարսի հերանք...

Եվ աղմուկով, ուրախ-զվարթ աղաղակով,
Գլուխները նվազից ու խմիչքից տաք,
Իրար խառնած խոսքեր քնքուշ ու բիրտ կատակ՝
Թագվորահոր տան լի բակով,
 Կալատակով,
Հոծ ամբոխը հարսնահյուրի
Գլուղամիջով հեղեղում է խնամունց տուն:

Դող-զուռնի խենթ նվագն է անվերջ թնդում:
Եվ դիպչու ու զուռնաչու առջևն ընկած
Կրակ կտրած երիտասարդ մի թխադեմ՝
Թագավորի սրտամոտիկ մակարներից,
Լող է տալիս գետնի վրա՝ զույգ ոտներով,
Մինչ ձեռները օդի մեջ են թիավարում:
 Մերթ՝ պայքում,
Ասես հոգնած է՛լ չպիտի տեղից ելնի,
Վեր է ոստնում մի պահ հետո
Եվ մի ոտը կեռած օդում՝
Տնկվում է նա մյուսի վրա,
Ապա արդեն երկու ոտով
Քայլ է անում մանր ու մոտիկ,
Վազ է տալիս արագ-արագ,
Վազ է տալիս ոչ թե առաջ,
Այլ նույն տեղում դոփդոփելով,
Հետո քայլը զգուշորեն այնպես փոխում,
Իր ոտները չի կամենում ասես թրջել
Աներևույթ ջուր ու ցեխում:

Ու մի վայրկյան նայում է դուրս
Զմեռային արփին քնկոտ,

Ասես զարթնած այդ զուռնայի ձայնից վարի,
Եվ ապակու ինչ-որ բեկոր՝
Ափսոսանքով ջարդված մի շիշ կամ աղաման,
Պսպղում է կեղտաջրում՝
Ցերեկային ու երկրային աստղի նման:

Պար է պարում հիմա արդեն
Մի շորորուն-զրինգ պառավ՝
Թագավորի մի մորաքույր կամ քեռակին,
Եվ կարծես թե լուղ են ամում
Ուրախության թեժ կրակին.
 Ծափ ու ծիծաղ,
 Սուր-սուր խոսքեր,
Որ չեն պահում վիրավորանք...

Ա՛խ, Վարդապե՛տ,
Այսպես սրանք
Երգ ու տաղով,
Պար ու խաղով

Պիտի հասնեն խնամունց տուն,
Պիտի այնտեղ ուրախ կոնծեն,
Պիտի ուզեն հարսի խոնջեն,
Պիտի պաչեն պառավներին
Ու հագուրդ տան ծարավներին
Վառ օդիով, գինին՝ ավել:
Ա՛խ, Վարդապե՛տ, այնտեղ նրանք,
Ըստ ընդունված սովորույթի՝
Դեռ կսարքեն անմեղ դավեր.
Կգողանան թմփլիկ հավեր,
Աքաղաղներ զառ ու գիրուկ,
Կթոցընեն ճաշի պնակ,
Կքաշքըշեն իրար ականջ, բեղ ու մորուք՝
Իբրև զվարթ ուրախության անմեղ հանաք, —
Ու դեռ կերգե՛ն, կերգե՛ն, կերգե՛ն,
Կայրեն հոգի, սիրտ կմըրկեն...

էի, Վարդապե՛տ, ո՞վ չգիտի,
 Էլ ուր մնաց դու՛ չիմանաս,
 Որ հարսնահոր տնից պիտի
 Դուրս գան սրանք ուրախ-խնդուն,
 Ճամփա ընկնեն դեպի ժամտուն,—
 Ոմանք՝

Արդեն ետևառաջ «ուր» գծելով,
 Ոմանք՝

Կանանց կոնակներին պագշտորեն այք գցելով,—
 Պիտի գնան գլուղի ժամտուն,
 Լսեն փոշոտ-մաշված խոսքեր գրաբարի՝
 Հասկանալով իմաստը լոկ երկու բառի,
 — Տե՛ր ես, որդեա՛կ...

Հազա՛ր անգամ տեսած մի ծես,
 Սուրբ է թեպետ,
 Բայց, Վարդապե՛տ,

Նույնքան ծանոթ ու տաղտկալի.
 Վառվող մոմեր ու խնկի ծովս,
 Որոնց հոտից հաճախ կարծես
 Մարդու քիթ է խտուտ գալիս,
 Ույտ պահանջող-երդում կնքող Ավետարան,
 Որ մագաղաթ իր շուրթերն է իրար տալիս,
 Բախտավորին օրինանք դառնում,
 Իսկ դժբախտին՝ ցմահ դարան...

Հարսանեկան բազմությունը տաք ալիքով
 Հիմա արդեն, տե՛ս, հորդում է գավթից ժամի՝
 Ճանապարհին կանգ առնելով դռների քով
 Սեղան հանած մոտ ու հեռու բարեկամի:

Կարկըտում է ամբողջ թափով,
 Կարկըտում է կոպալը, տե՛ս,
 Եվ հավքերի երամի պես

Թռչկոտում են թղթե փողեր:
 Ջուռնան գծում մանրիկ օղեր
 Ու ճարմանդով էլեւջի
 Կապ է գցում, իրար հիևում՝
 Եղանակից շղթա ջինում...

Եվ ընկնելով

Հանկարծակի բարիացած քամու վիզը՝
 Զայլ է անում նաև խեղդված-կոնդված ձյունը:

Տեղ են հասնում:

Կրակվում են հրացաններ՝
 Դեպի երկինք,
 Որ կես մի ժամ

Ազատվել է մութ ամպերի ձեռքից դաժան:
 Կրակվում են հրացաններ,
 Եվ այդ անմեղ-անչարամիտ մահափորձից
 Մեծահոգի երկինքն անքեն
 Ո՛չ դատի է տալիս նրանց,
 Ո՛չ էլ նույնիսկ պահում վրեժ,
 Այլ ժպտում է կապո՛ւյտ-կապո՛ւյտ
 Ու ծիծաղում մեծավարի.
 Կրակոցը կարծես նրան
 Պատճառել է միայն խտուտ:

Հարսանքատուն մտցընելիս
 Թագավորի ու թագուհու գլխին
 Վերից

Ցած է տեղում չամիչ-փշատ,
 Նողով-նաբաթ,
 Չիր ու չոր թույթ՝

Կարկտախառն հորդ անձրևի խշխշոցով,
 Եվ սերկևիլ, տանձ ու խնձոր՝
 Զատկին ներկած ձվերի պես գունակ-գունակ:

Պոան շեմին

Թագավորի ու թագուհու ոտքերի տակ
Փշրվում է բոլոր ափսե մի սպիտակ,
Ինչպես լուսնի երկվորյակը՝
Խաղաղ լծում ներկված քարից,
Որ ցավ ու չոռ, անբախտություն հետը տանի...

Պե՛, վարդապե՛տ, հիմա նրանք
Բաժակների չրխկոցին
Պիտի խառնեն հարսանեկան
Քեզ սիրելի ու դուրեկան
Փունջ-փունջ երգերը ծաղկոցի,
Քիչը՝ ծանոթ,
Շատը՝ նոր գյուտ,
Եվ բոլորը՝ ուշազբբավ:

Եվ իսկապես, հարսանքատան
Ժխտ-մրոտ օձորքի տակ
Անկրկնելի եղանակով
Գովերգվում է թագավորի մահուդ չուխան,
Գուլպան պուտ-պուտ,
Քիրման գոտին,
Շապիկը շալ,
Չին հրեղեն՝
Ինքն էլ վրեն.
— Աստծո՛ւ բարին
Մեր թագվորին,
Մեր թագվորին թագն ի գլուխ:

Իսկ բքաշունչ ձմռան քամին
Չարանում է իր մտքի մեջ ու կատաղում,
Ինչ է թե, տե՛ս,
Հարսանքատան դուռն են ահա իր դեմ փակել,
Ու րոպեն մեկ սկսում է դուռը թակել

Կամ ավելով ձյան շեղջերը տանիքներից՝
Բաց երդիկից ներս է մաղում,
Բուռ-բուռ շաղում՝
Կարծես դիտմամբ ուտելիքն է անվերջ աղում,
Որ ամեն ինչ... չուտվելու չափ աղի լինի:

Օձորքի տակ հարսանքատան
Երգում են դեռ Գովքը փեսին
Այնուհետև — այդպե՛ս — արդեն երգ են դառնում
Ու թագուհու բույրին իրենց հոտն են խառնում
Ճերմակ շուշան, ոսկեծաղիկ
Եվ վարդենիս,
Որոնց նման.
— Անուշ բույրեր քո թագուհին:

Կոշտ կոպալն ու վայրի զուռնան՝
Քնքուշ երգից ամաչելով՝
Ետ են քաշվել ու տեղ տվել,
Որ կարկաչեն դափ ու դուռով,
— Պնդուկի ծառ կապեր պնդուկ,
Էնոր նման պտկեք և դուք:

Բարեբանող երգը հիմա
Օրորվում է,
Ծորորվում է
Այգու նման մի պտղաբեր.
— Խաղողի ուր կոճակ կապեր,
Պտղեք դուք էլ էնոր նման:

Ու երգողի ձայնը ծորուն
Երգի ծայրը ետ ուղրում,
Ավարտում է՝ հանգույց տալով...

Ու տեսնում են դեմքերն իրենց
 Օղի-գինով լի բաժակում,
 Եվ կոնծելով նույն պահին հենց՝
 Ավերում են դեմքերն իրենց
 Ու հետևից շուտ ճաշակում
 Կես թաս շորվա,
 Մի ֆուստ գեր միս,
 Եվ այնպիսի՝ ախորժակով,
 Խեղձերն ասես սրբի նման
 Պաս են պահել մի ողջ ամիս:

Դափ-դուդուկից հիմա արդեն ծայր է առնում
 Նուրբ ու նազուն մի Ձեռնախաղ՝
 Հարուցելով հիացագին «վա՛յ-վա՛յ... ա՛խ-ա՛խ»
 Հասակակից հարս-աղջկա հրմշտոցից սրտապնդած՝
 Ձեմուչումով վեր է կենում
 Մի թուփ-վարսեղ-հասուն աղջիկ,
 Ու նազում է մի ամաչկոտ թուփ-թուփ ծիծաղ:
 Ծագանակե իր աչքերը պատսպարած թարթիչներով՝
 Նա թափանցիկ իր ականջին
 Պահ է տալիս անհնազանդ մի սև խոպոպ
 Եվ կեսմարած քայլ է անում
 Դեպի կենտրոն՝ պարաշրջան:
 Եղանակը մոտենում է ու հեռանում:
 Եվ որսալով մոտեցումը եղանակի՝
 Իր ամոթն է անմիջապես նա մոռանում
 Ու դալարով մեջքը իսկույն կեռ-մեռ անում,
 Սահ է սահում
 Այնպե՛ս սահուն,
 Որ մի վայրկյան... ամենքի հետ՝
 Դուդուկահարն ինքն էլ նույնիսկ շունչն է պահում...

Դուրագրգիռ դափն է հանկարծ ընդոստ զարկում,
 Ու դառնում է նվազն ահա է՛լ ավելի լարաթրթիռ,

Ձեռքերն, ասես թե խրտուելով, վեր թևարկում,
 Հետո, կարծես ապահովված՝
 Ետ են գալիս, թառամ սրտին:
 Իսկ ոտքերից մեկը՝
 Կարծես գորովանքով՝ ապտակում է
 Պաչ պահանջող գծուկ գորգին
 Մերթ կրունկով ու մերթ թաթով
 Մանրիկ-մանրիկ տկտկում է,
 Մինչդեռ մյուսը ինքն իր կարգին
 Սահում է լուռ, սակայն հուզված,
 Կարծես շղյում մաքուր խուզված
 Խիտ մազերը նույն այդ գորգի:

 Պարո՛ւմ է նա,
 Եվ աչքերն են դառնում տամուկ:
 Պարո՛ւմ է նա,
 Եվ հագուստը խալտածամուկ
 Մերթ ծալեծալ, փոթ-փոթ գալիս,
 Մատնիչորեն ցույց է տալիս
 Իր թաքցրած ձևերը պերճ ու խելքահան,
 Մերթ էլ կիտված ծալքերն ահա
 Ետ են դարսվում,
 Բացվում-պարզվում
 Եվ վավաշոտ տղամարդկանց
 Հայացքների նետերի դեմ
 Կրկին դառնում մի յուրովի ազնիվ վահան:

 Պարո՛ւմ է նա,
 Վառո՛ւմ է նա,
 Եվ բոլորը՝ մեծ թե պուճուր,
 Մոռանում են հասակն իրենց,
 Դուրս են ելնում տարիքներից,—
 Եվ չափ տվող թունդ ծափերի ալիքներից
 Արձանի պես անշարժացած նորահարսի

Քողն է ուռչում ու կուչ գալիս,
 Ու նորատի հարսնաքրոջ
 Ջառ լաչակն է բաց-խուփ անում,
 Ամեն անգամ մերթ՝ թաքցնում փոսիկն այտի,
 Մերթ՝ դունչիկի ոսպանման խալը բանում:

Ծափ է տալիս մինչև անգամ նորափեսան՝
 Մոռանալով, որ ուրիշի պսակ չէ սա,
 Մոռանալով, որ ինքն այստեղ
 Ոչ մակար է, ոչ էլ քավոր:

Իսկ նա... կարծես չի էլ լսում,
 Ոտն է հազիվ գորգին քսում
 Եվ շարժումով մի հարկավոր՝
 Թե՛ նազելի, թե՛ հարգևոր,
 Պտըտվում է կրունկներին,
 Որից նրա շորը ճամուկ
 Քիչ ուռչում է թեթև քամուց,
 Հետո՝ կարծես ամաչելով՝
 Նորից կաչում սրունքներին:

Եվ խելքամաղ ջահել տղերք,
 Տղամարդիկ սիրակեղեք
 Իրենց մատնող-դավաճանող աչքերն ահա
 Թարթիչների սուտլիկ-մուտլիկ խաղով կոծկում
 Եվ թուպակամ շրթունքներն են բռնի կոծկում...

Ա՛խ, Վարդապե՛տ, հիշո՛ւմ ես դու
 Գարնանային այն օրն անցած,
 Դաշտում դադձ ու սիբեխ քաղող
 Այն հարսներին, աղջիկներին,
 Փախուստը քո դեպի պաղ խուց...

Վաղուց էր դա,
 Վաղու՛ց, վաղու՛ց,

Հիշո՛ւմ ես դու,
 Ա՛խ, Վարդապե՛տ,
 Ո՞նց չհիշել,
 Երբ ողջ գիշեր

Մի տանջալից ծանրը երազ քեզ տվայտեց,
 Քեզ փարվելով՝ նաև խայթեց,
 Խայթեց՝ ինչ-որ անուշ ցավով,
 Անո՛ւշ-անո՛ւշ, ինչպես հիմա՝
 Այս վայրկյանին...

Նույն վայրկյանին

Մի թուխ կտրիճ՝ մեջքին քամար,
 Հագին չովսա մեջքապնդուկ,
 Հնոցի պես բոց աչքերին
 Ածուխի պես սև-սև կամար,
 Հայացքը՝ լուրջ, դեմքը՝ հանդուգն,—
 Արջի նման մեջ է գալիս,
 Ծանրամարմին պտույտ տալիս,
 Բայց... կոպալի տեղին հարված—
 Նա՛ նվագին հավասարված,
 Արջից հանկարծ վազր է դառնում՝
 Թեթև ցատկով վեր է թըռնում
 Ու թեև նա ոչ մի բանից
 Ո՛չ կախվում է, ո՛չ էլ բռնում,
 Բայց մնում է վեր՝ օդի մեջ:

Ու պարուհու

Սև հոնքերի երկաչքանի կոր կամրջով
 Անց է կենում

Մոլորաքայլ մնջախաղի մի մտածում:
 Հետո կամուրջն իր հոնքերի
 Կշեռքի է նա վերածում
 Եվ թույլ տալիս իր աչքերին,
 Որ վեր ու վար նծար ճոճեն.

Մնջախաղով կշռում է նա
Նրա բախտը՝
Իր «հա»-ն ու «չէ»-ն...

Ու քայլում է աղջիկն այնպես զգուշորեն,
Քայլ է փոխում կարծես ոչ թե գետնի վրա,
Այլ սառույցի.

Ամա՛ն, հանկարծ չսայթաքի ու չընկնի վայր, —
Ցավը՝ ոչինչ, փակ տեղերը բաց կլինեն՝
Կդառնա խաղք ու խայտառակ:

Նույն այդ պահին
Տղան այնպես է կտկտում,
Այնպե՛ս արագ,

Կարծես սրա ոտների տակ, ընդհակառակն՝
Արդեն ոչ թե սահուն սառույց,
Այլ լուկ կրա՛կ,

Խարույկի մեծ շեղջ է փռած,
Եվ որպեսզի չայրի իրեն՝
Աշխատում է քիչ դիպցնել ոտքը գետնին
Ու շատ մնալ օդում՝ թռած...

Կոտրատվում է աղջիկն էլի ու նազ անում,
Եվ ժպիտը՝

Գարնանային երիժնակի ցողունի պես,
Որքան քաղցր է ու հյութալի — նույնքան՝ փշոտ:
Ու տեսնելով, որ աղջիկը չի հեզանում,
Պարեկ տղան, ցավը դեմքին, ցատկում է օդ,
Փլվում, գետնին է սասանում:
Ոտներն արդեն հաճախ-հաճախ
Թեք են տալիս մեկ աջ-մեկ ձախ,
Մինչ իրանը՝ գոտկատեղից՝
Չի էլ շարժվում անգամ տեղից:
Իսկ ձեռքե՛րը... մի կատարյալ,
Մի կատարյալ... ի՛նչ... գալարա՛նք.

Առաջ ու ետ, վերև-ներքև՝
Բան են որսում ասես նրանք,
Մերթ՝ բարկացած ու կատաղի,
Մերթ էլ հանկարծ տատամսում են ու վարանում,
Կարծես արդեն մթան մեջ են բան որոնում:

Նորից՝ ընդոստ.

— Տաշի-տուշի...

Հետո՝ հուշիկ.

— Հոպտտա-տմբա...

Եվ դառնում է պարն ավելի առույգ ու ժիր:
Ու պարեկի շալե թումբանն
Իր իսկ հանած հողմի առաջ
Փռփռում է՝ կարծես դառած
Դարբնոցի մեծ փուքսը կաշվե:

Հետզհետե մեծ ու փոքր ավելի են մոտիկանում,
Իրար սեղմված՝ պարողներին մտիկ անում,
Հետո սրտի ամբողջ տապով
Ծափ են տալիս պարի չափով
Ու պարն անվերջ տաքացնում.
— Սը՛-սը՛, սը՛-սը՛...

Իրենց դմբո երիկներից դժգոհ կանայք
Մտքների մեջ կամ բացահայտ հոգոց հանում
Ու ձեռքերն են ցավով տանում
Իրենց կրծքին... ինչի՛ց ուռչող:

Մինչ պարեկը

Չմոռան պաղած հողն է — թը՛կ-թը՛կ — այնպես դոփում,
Մեխ է կարծես այնտեղ խփում՝
Իր ոտքերո՛վ, ոչ թե մուրճով.
Մինչ պարեկի ուտերը, տե՛ս, պար են պարում
Իր իրանից ու ոտքերից ասես անկախ ու ինքնավար,
Հոնքերն, ահա՛, պար են գալիս իրենց համար՝
Կամ շինելով, կամ քանդելով երկու կամար,

Պար են գալիս աչքերն՝ անջատ,
 Դաստակը՝ ջուկ,
 Թաթն՝ առանձին,
 Ծունկը՝ ծալված,
 Իրանը՝ ձիգ,
 Գլուխն՝ ուղիղ,
 Իսկ վիզը՝ թեք.

Բոլորն՝ անջատ ու առանձին,
 Բայց և այնպես՝ բոլորը մեկ, —
 Նույն ժամանակ

Ծիվ աղջկա թևիկները, աղավնու պես,
 Մերթ տեսնում ես՝ քիչ է մնում թառեն գետնին,
 Ասես սրսուռ կուտի վրա,
 Մերթ էլ տեսար՝ վեր են սուրում,
 Ճախր են տալիս,

Հետո, ինչպես բույնի չորս կողմ,
 Գլխի շուրջն են պտույտ գալիս,
 Ու վերջում էլ,

Երբ նագելի մի շարժումով կանգ են առնում,
 Խոնարհաբար գլուխ տալիս՝
 Իբրև նշան ներողության,
 Որ դադարում են պարելուց, —
 Ձեռքերն այնժամ հեզ ու հլու՝
 Երկու հոգնած աղավնու պես՝
 Թնը ծալած կուչ են գալիս,
 Որ անհանգիստ-վայրիվերող կրծքի վրա
 Հանգստանան,

Մինչդեռ տղան վերջին անգամ
 Ոտքի վրա օղակ տալով՝
 Ցատկում է վեր,

Յոթ-ութ վայրկյան օդում մնում արձանացած
 Եվ, քարի պես, ընկնում է ցած՝
 Ընկած տեղը ծնկի գալով...

Ու հնչում է կենաց մի նոր՝
 Թագվորահոր,
 Թագվորամոր,
 Կա-չկայի, ծետ ու պետի:

Ա՛խ, Վարդապե՛տ, հիմա պիտի
 Պատկառելի մի նոր տաղով
 Կանչեն փեսի պապ ու տատին,
 Հորն ու մորը,
 Զուր-ախպորը՝

Ամեն մեկին մի տուն խաղով.
 — Որ գան նստեն, դարպաս անեն,
 Ծնրիկ զարկեն սուրբ սեղանին,
 Հրամմեն բարին մեր թագվորին...

Հետո արդեն մի բաղաձայն կատակասեր,
 Սկսելով զավեշտական իր խաղն ասել՝
 Գովքի դիմաց պիտի չուզի, այլ պահանջի՝
 Փեսահորից՝
 Սել մի սեղան...
 Փեսախպորից՝
 Խոյ մի խորվու...
 Փեսաքուրից՝
 Գուլպա յոթ ջուխտ՝

Իմանալով, որ կատանա
 Իր խոպածայն երգի դիմաց
 Երկու ծնծուր,
 Սեկ զարեհաց...

Հետո պիտի կարգով հնչեն
 Կարգի դրված հազար կենաց
 Ավանդական ու կրկնվող՝
 Համեղ թեպետ,
 Բայց չփոխվող ճաշերի պես հոգնեցուցիչ,

Որ և սրանք պիտի կու տան
Թունդ օղիով, գինով անուշ
Ու հետադարձ ճամփան փակեն
Խաշլամայի պատառներով:

Դեռ, Վարդապե՛տ, դու կտեսնես
Ալիք-ալիք ծփան Շորոր,
Ապա Նազպար,
Եվ, հակառակ իր իսկ կամքին,
Մի կաքավող աղջիկ կամ կին,
Ա՛խ, Վարդապե՛տ,
Մինչև անգամ վարդապետին կուսակրո՛ւն
Հիշել կտա... պիղծ մի ջաննաթ՝
Մեր անալի դրախտի տեղ,
Հիշել կտա պիղծ մի ջաննաթ՝
Խարդավանքով անգո չարի:

Հետո... ապա...
Դեռ կա Դարձպար,
Կա Թոնոցի, կա Քոչարի,
Երբ սկզբում կոնաքոնուկ՝
Քիչ ծավվելով,
Ծատ տարվելով,
Հետո արդեն թևատըրուկ՝
Շեշտով հատու և կտըրուկ
Դեպի առաջ քիչ են տարվում,
Այլ մոտեմոտ ծնկածավում,
Ասես իրար ուժ գումարած,
Մի սի՛րտ, մի կա՛մք, մի մա՛րդ դառած՝
Աչքի համար անտես մի պատ
Պիտի քանդեն իրենց ուսով,
Հետո, հանկարծ, ամբողջ ուժով,
Ասես իրար խիստ կարոտած՝
Պիտի ամուր գրկեն իրար

Մեջք ու իրան
Եվ թի՛ն՝ թռչեն մեջքագրկուկ:

Եվ ժամանակ առ ժամանակ՝
Իր կոպալի գարկերի հետ
Խաղացնելով ողկույզի պես գոուզ բաշը,
Խմած գինուց ու եռանդից կարմրատակած՝
Աքլորի պես կծղրտա գեր դեռլին.

— Այ շաբաաաաաա՛2 — հա, —
Ու փութաջան թքոտելով թուման-տասնոց՝
Կկպցընի իր ճակատին
Կամ կխրի գդակի տակ՝
Կեսը կախած իր ծոծրակի,
Իր հոնքերի, դեմքի վրա՝
Թղթե գունեղ ծոպքերի պես:

Եվ կըտևի դա մինչև լույս,
Մինչև բարի աղոթարան,
Երբ որ Պարոն աքլորն, իզո՛ւր,
Երբ որ Տիկին հավերն, իզո՛ւր,
Ուժ պիտի տան կոկորդներին՝
Հայտարարեն լույսը բացված,
Ու չլսեն իրենց ձայնը անգամ իրենք՝
Դիու-գուռնի գորոպոյանը կու գնալով...

Ա՛խ, միամի՛տ իմ պապերի
Մանկաբարո ուրախություն,
Որ տևում էր լո՛թ օր-գիշեր,
Որ անցնում էր երգ ու պարով,
Կոփվներով գինեհարույց,
Ու հաշտությամբ գինեմիջնորդ...
Ա՛խ, միամի՛տ իմ պապերի
Մանկաբարո ուրախություն
Սերմի առթիվ՝ դեռ չցրված,

Մանկան առթիվ՝ դեռ չծնված...

Ա՛խ, անգիտա՛կ իմ պապերի
 Բնապարզև հարստություն
 Հազար երգ ու եղանակի,
 Որ չունեին տեր-տնօրեն
 Ու զուրկ էին հեղինակից.
 Անհատների մի գանձանակ,
 Որ շաղ տալիս անփութորեն,
 Ցրում էին հայ գյուղացիք
 Իրենց մաքուր շրթունքն ի վար՝
 Ինչպես որ միշտ և ամենուր,
 Այս անգամ էլ հարսանեկան
 Ուրախության այս առիթով՝
 Տանկանալով սե՛ր, միություն՝ն, երջանկություն՝ն,
 Բուրբուրովին մոռանալով այդ վայրկյանին,
 Որ հեշտորեն չի կատարվում ամեն մաղթանք,
 Որ կարող է նաև լինել...

ՂՈՂԱՆՋ ՄՐՄՈՒՈՒ

Իսկ թե լիներ — աստված չանի —
 Իսկ թե հանկարծ այնպե՛ս լիներ,
 Որ այգու պես անուշ բուրող նորահարսի առագաստում
 Գառի նման մշմըշալով
 Ամեն գիշեր հանգիստ քներ
 Ընդամենը մի տասներեք գարուն տեսած նորափեսան՝
 Մեքքը հարսին, դեմքը պատին, —
 Այնժամ պիտի հարսն ի՛նչ աներ:

Ա՛խ, նա ինչպես բույժ մանգաղին անվերջ քսվող անյուղ հեսան,
 Քար էլ լիներ՝ խարտվեր պիտի,
 Փոշի՛-փոշի՛ պիտի մաշվեր,
 Եվ ձեռն ի ծոց ու վիզը ծուռ՝
 Մի խուլ անկյուն պիտի քաշվեր,
 Թրտնակի պես լիք ու լիտիկ իր թևերը հոշոտելով,
 Անիծելով իր բախտը սև,
 Երազելով գզվանք ու սեր՝
 Պիտի երգեր ողի՛կ-ողի՛կ.
 — Իմա՛լ է՛նեմ, իմա՛լ չե՛նեմ,
 Յար պստիկ ա, շիվարե՛լ եմ...

Իսկ թե լիներ, այնպե՛ս լիներ,
 Որ ընջավոր
 Ու փընջավոր՝
 Ծամո՛վ մեկին,
 Որ կարծրլիկ

Ու կարծուիկ՝
Համո՛վ մեկին

Օր ծերության դարձըներ կին
Մի անատամ կծու խոջա—
Զիթը՝ բարդան, ոտքը՝ ցոթուկ,
Աչքը՝ ճպիռ, վիզը՝ ճոճան...

Իսկ թե լիներ, այնպե՛ս լիներ,
Որ լի տունն իր վանդակ շիներ
Ու այդ ոսկե նեղ վանդակում
Փակեր կաքավ մի կլորիկ՝
Մի սիրավոր
Ու վիրավոր
Եվ սևավոր
Անբախտ լորիկ,—

Իսկ թե ահա այսպե՛ս լիներ,
Այդ օր մահու քավթառի հետ
Նույն չոր բարձին

Լերկ գլխի դեմ վարսեղ գլուխն ինչպե՛ս դներ,
Ծմակի պես պաղ այդ ծոցում ինչպե՛ս քներ,
Կրակ կողերն ինչպե՛ս հպեր լուլա-սառցին,
Ինչպե՛ս, ինչպե՛ս մալուլ երգով ծունկ չծեծեր,
Ծամկտրածը իր մարեին ո՛նց չանհիծեր,
Ինչպե՛ս չասեր, որ նա արեց իր բախտն ավեր,
Ջահել սրտում կրակի պես վառեց ցավեր,
Արար-աշխարք լիքը լավեր՝
Ինչո՞ւ թողեց կտրիճ քաջին,
Ինչո՞ւ տվեց քավթառ խոջին.

— Իմ կեղտ էնոր մեղրի միջին,
Էնոր ոսկուն նստեն հավեր,
Զա մարե՛ ջան, քա տնավե՛ր...

Իսկ թե տային ո՛չ թե հարուստ, բայց ծեր խոջի,
Այլ հենց մի լավ՝ սրտով սիրած ջահել քաջի,

Մինչև անգամ չոր քարի տեղ խսիր տային,
Չոր գետնի տեղ տային նաև մաշված կարպետ,
Է՛հ, Վարդապե՛տ,
Ի՛նչ է, պիտի բախտավորված հա խնդայի՞ն:
Չէ՛, Վարդապե՛տ,

Աղքատության ծանկը չընկնի մինչև անգամ թռ թշնամին...
Հարսանիքի դիուլ-զուռնան դեռ չլուած,
Եվ պահունի շորերն անգամ սնդուկի մեջ դեռ չդրած՝
Պանդխտության անգութ քամին,
Հարսի ծոցից նորափեսին փրցընելով
Եվ քարեքար ու սարեսար թոցընելով՝
Իր սիրածի անուշ համին
Բաժանումի դառնությունն է արդեն խառնում.
Գնում է նա

Եվ... մի՛ տարի, երկո՛ւ, երե՛ք... ետ չի դառնում:

Եվ կարոտից ու տանջանքից,
Անկարելի անըջանքից
Մարմինն ասես վերք է դառնում համատարած
Ու նվո՛ւմ է, տնքո՛ւմ, ցավո՛ւմ:
Մերն է մխում կուրացուցիչ-դառըն ծխով,
Ինչպես ծառից հենց նոր ջարդված-խարույկ դառած
Թաց ոստերը՝ անթթվածին քարանձավում...
Անկողինն է հարսին այրում կրակի պես,
Օրն է մթնում, իսկ իր սերը տուն չի գալիս:

Եվ

— Ես անտեր բարձի վրա
Առանց լարի քո՛ւն չի գալիս...

Ու վերքերը դառնում են երգ,
Ու երգերը դառնում են վերք,
Ու սրտերը՝ ծանրը մի քար,
Երբ զինվոր են տանում լարին.
— Ա՛խ, երթար ու էլ ե՛տ չգար

9 Անլոբի գանգակատուն

Քեզի սուղաթ գրած տարին...
 Երբ չեն տալիս յարը յարին.
 — Որ այս էնեմ, կուգա արի՛ն...
 Երբ խախտում են խոսք ու երդում.
 — Տաք արի՛նն է մեջս լերդում...
 Երբ...

Վարդապե՛տ, ի՛նչ էիր դու,
 Մորից ծընված հող հո չեի՛ր,
 Որ լուս ու մուսչ ներծըծեիր
 Անձրև ու ջուր,
 Եղյամ ու ծյուն,
 Կարկուտ ու ցող:

Թե լինեիր մինչև անգամ անլեզու հող,
 Այս ամենը ինչպե՛ս և ո՛ւր հոգիդ տաներ:
 Չե՞ որ հոգիդ պիտի մի օր
 Պողթկա՛ր,
 Որպես մի արտեզյան խորունկ ջրիոր,
 Ժայթքե՛ր,
 Չորս դին ցրեր ցայտեր,
 Ժիածանված շատրվանե՛ր...

Ե Ա Վ Ա Լ Վ Ո Ղ Հ Ա Մ Ա Ջ Ա Ն Գ

Ղ Ո Ղ Ա Ն Ջ Հ Ր Ա Շ Ա Գ Ո Ր Թ Մ Ա Ն

Թե մինչև հիմա որտեղ որ երգն էր՝
 Այնտեղ էլ նա էր,
 Այսուհետ արդեն որտեղ որ նա էր՝
 Այնտեղ էր երգը:

Առաջին անգամ լայն դահլիճների
 Բեմից էր լսում ինքն իրեն հայը,
 Եվ բոլորովին ուրիշ էր հնչում
 Իր իսկ «Տույ-տույ»-ը,
 «Վալ-լե-լե-վալ»-ը,
 Նո՛ւյն արտն էր հւ...ոթի,
 Նո՛ւյն սերմը ցանված,
 Բայց... խորն էր հերկը,
 Ու բեղուն՝ բերքը:

Հայ ելևեջի վայրի տարերքը,
 Հեղեղ մեղեդին,
 Տարափ պարերգը
 Էլ չէին արդեն հնչում ու կորչում,
 Ինչպես հողմերը՝ դաշտերում լեռնուտ,
 Տատկան ջրերը՝ ձորում ու կիրճում—
 Անօգո՛ւտ այնպես,
 Այնպես ապարդյո՛ւն:

Հայ ելևեջի վայրի տարերքը
 Մի կախարդ ձեռքով, որտեղ որ պետք էր,
 Դառնում էր անձրև՝ ծլարկած արտում,
 Դառնում ջրադաց,
 Էրանի քամի՝
 Ցանկացած ժամին:

Հայ ելևեջի հոսքը վարարուն
 Մի կախարդ ձեռքով մտել էր խոր հուն,
 Գտել էր անշեջ ու որոշ հասցե.
 Հասնում էր սրտին՝ ում էլ պատկաներ,
 Մոտիկ դրացո՛ւ,
 Ռուսի՛, վրացո՛ւ,
 Թե՛ օտարաձայն հեռավորների՛
 Լեհի՛,
 Ֆրանկի՛,
 Ավլստրիացո՛ւ:

Այսպես՝ կալակիտ ցորենն է դառնում
 Ընտիր սերմացու,
 Ապառաժ քարը՝ սեղան խորանի
 Ու պատի վրա ջուր խմող այծյամ:

Այսպես՝ դաշտերի ծաղկունքը ցանցիք
 Պսակ են դառնում հարսների ձեռքով
 Հարսների լանջին:

Այսպես՝ եղյամն է ապակիներին
 Լուսամուտների շրջանակի մեջ
 Հանձարեղագույն բնանըկարի կերպարանք առնում:

Եվ հույսը — այսպե՛ս — հավատ է դառնում...

Նա մելամաղձոտ հայ եղանակին
 Հայկական ուրախ հորդան էր կցում,
 Եվ կարծես արփին ծագում էր հանկ սրժ,
 Ցրում մութ ու մեզ:

Նա վիրաբույժի հմուտ ձեռքերով
 Ինչ-որ կույր աղիք կտրում էր գցում,
 Եվ մարմինն ասես ծնվում էր նորից,
 Դառնում մորեմեկ:

Նա... ի՛նչ էր անում:
 Լոկ այն էր անում,
 Ինչ-որ անում է ավազն ամանին՝
 Մաքրում է ժանգից.
 Ինչ-որ անում է ջուրը մանչուկին՝
 Դունչիկն է սրբում.
 Ինչ-որ անում է մայրը մանուկին՝
 Ինն ամիս կրում իր կողերի մեջ
 Ու գերմարդկային-մայրական ցավով
 Ավելացնում է թիվը աստղերի՛,—
 Մի սովորական... անսովո՛ր հրաշք:

ՂՈՂԱՆՋ ՀԱՂԹՈՒԹՅԱՆ

Եվ արտերի փոխանակ

Հորովելը գեղջուկի

Ղահլիճներում է հնչում.

— Չի՞՞ գ տուր, քաշի՞, ա՛յ եզ ջան...

Բաց երկընքի փոխանակ

Շրթունքները պանդուխտի

Բեմերից են մրմընջում.

— Հո՛ւր են ծոգե մեջ իմ ջան:

Գլուղակների փոխանակ

Քաղաքներում է ծորում.

— Սուփրեն կալում գցած ա:

Հլուղակների փոխարեն

Սրահներում է բուրում.

— Խնձոր ունեմ, կծած ա:

...Իսկ մեր խնձորն իսկապես

Արնաժոր ու վիրավոր՝

Հազա՛ր տեղից էր կրծած.

Առևանգած իրարից՝

Մեր խնձորը դարավոր

Հազա՛ր ձեռքից էր պրծած:

Հազա՛ր եղունգ ու ծիրան,

Հազա՛ր մագիլ էր խրվել

Նրա փխրուն կողերում:

Տիղմաբեր ու թմբատար

Հազա՛ր հեղեղ էր ցրվել

Նրան սնող հողերում:

Ոսոխներից բարբարոս

Շատերն անգամ հավիտյան

Կորել էին աշխարհից,

Չքվել էին՝ թողնելով

Լոկ պաղ մոխիր կամ մատյան

Բևեռագիր ու քարից:

Բայց մնում էր մեզ վրա

Հետքը նրանց ժանիքի՝

Նրանց արնոտ կնիքի:

Խառնըվել էր մեր երգին

Օտարի շունչն անմաքուր,

Օտար երգի ելևեջ.

Աղ էր ցանվել մեր վերքին,

Ավազ լցվել մեր բերքին

Եվ ջուր՝ արդար կաթի մեջ:

Ականջ էր պետք, որ ջոկի,

Ու ձեռք էր պետք, որ պոկի

Օտարամուտ ամեն քող:

Պետք էր կոկորդ ու ոգի,

Որ տաղ դարձած մեր հոգին

Համերգանար ամեն կողմ:

Մարդուն երբ ցավ են տալիս՝

Հետն էլ արցունք է գալիս,

Որ կսկիծը քիչ մարի:

Վերք է տրվում՝ և դե՛ղ կա,

Ելք է ճարվում՝ թե նե՛ղ գա,—

Այսպես է կարգն աշխարհի:

Ու եկար դու՝ վիթխարի՛
 Եվ մեր հայոց աշխարհի
 Անտերացած հայելուց
 Բիծ ու փոշին, խա՛վ առ խա՛վ,
 Բարեխընամ մի ձեռքով
 Կարծես հանկարծ սրբեցին.—

Եվ մեզ այնտեղ նայելուց
 Աչքերը մեր հարբեցին.
 Մե՛նք ենք՝ այսքա՛ն վայելուչ,
 Այսպես կոկի՛կ, հարդարվա՛ծ,
 Գոհարներո՛վ զարդարվա՛ծ:
 Չկշտացա՛նք նայելուց...

Այսպես հանկարծ ու անձայն՝
 Մեր հեքիաթի համաձայն՝
 Միայն փոխվում է այգին,
 Երբ որ այգում այդ անջուր
 Կախարդիչ երգն է հնչում
 Մեր Հազարան զառ հավքի:

Եվ ամենքըս մեր աչքին
 Երևացինք աշակերտ,
 Իսկ դու՛ երգի դասարան:
 Եվ ամենքըս մեր աչքին՝
 Թոշնամ-խամրամ ծաղկաթերթ,
 Իսկ դու՛ բլբուլ Հազարան:

Եվ այն օրից, Վարդապե՛տ,
 Դու ծայր տվիր հրաշքի՛ն,
 Եվ հաղթական մի շքերթ
 Չզվեց հեռո՛ւ և հեռո՛ւ
 Էջմիածնի կավակերտ
 Ու սրբատաշ պատերից:

Դու՛ սքեմիդ սևերում,
 Մինչդեռ քո լույս մատերից
 Ծորանք առան շող շիթեր:
 Եվ ինչ երկար դարերով
 Զո ժողովուրդն էր կիտել
 Նմո՛ւշ-նմո՛ւշ, հա՛տ առ հա՛տ,
 Դու լիաբուռ-լիառատ
 Ծա՛ղ տվեցիր աշխարհում,
 Որպես մի նոր վաշխառու,
 Որ տվածի փոխարեն
 Բարձրը շահ է պահանջում՝
 Հիացմունքի շող արև՛,
 Գոռոզույթյան նահանջո՛ւմ:

Եվ այն, ինչ հայ գյուղացին ձիգ էր տվել դարերով
 Ապարանի կամ Լոռվա հերկում, կալում, խոզանում,
 Հիմա արդեն, Վարդապե՛տ,
 Ծավալվում էր քո՛ շրթից,
 Ծավալվում էր... Լոզանում:

Հա: պատանու վիրավոր սրտի մրմունջն էր հնում,
 Բայց քո՛ բերնից, Վարդապե՛տ,
 Այն էլ հեռու... Ժնկում:

Կոմսուհիներ, բարոններ,
 Տիտղոսավոր տեր-տիկին
 Զո մատներից լսելով մեր Նազպար-ը, Ծուլիկի-ն՝
 Նետում էին ականա զոռոզույթյան ու շիկ-ի
 Ամեն դիմակ ու կեղծամ
 Եվ, մանկորեն հիացած,
 Իրենց մտքում, պատրանջով,
 Տեսնում... պարող մի այծյամ:

Հեովից հեռու, մոտ ի մոտ
 Մեր կարոտն էր սավառնում,
 Ու մեր սրտի խոսքը տոթ
 Շիկանում էր քո բերնում,

Սակայն ո՛չ թե խաղողի մի ծանրածոց այգու մեջ,
 Ո՛չ էլ կտրից հայկական,
 Ո՛չ էլ արտից, այլ... Բեռնում:

Մի գիշերում դու ձայնով նվաճեցիր Վիեննան՝
 Ստիպելով, որ բոլորն օտար երգով հիանան:

Լոկ ծիրանի մի փողով
 Ու շարժումով մատներիդ

Տեր-տնօրեն դու դարձար խորթ ու խոժոռ Յուրիխում՝
 Ստիպելով, որ զգան, թե ինչպես է մեր գինին
 Տաքանալով մեր երգից՝ սարքում զվարթ կերուխում:

Նրբաճաշակ-բարեսուն
 Երեսառած Փարիզում

Բեմին բուսնեց ու ճոճվեց տղամարդկանց պարի սյուն,
 Սակայն... լոկ քո՝ երգերով,
 Զո՛ նվազով — ո՛չ մի խումբ:

Ու խենթացած ծափ տվեց Փարիզն ինչպես ձեռքերով,
 Այնպես նաև բաց ու խուփ
 Թարթիչներով՝ զարմացած...

Ասես մեկեն թարմացած՝

Ներընդունած կազդուրիչ ինչ-որ առողջ շիթ արյան,
 Զեզ լսելով, Վարդապե՛տ, ջահելացա՛վ հտալիան,
 Երբ դու հասար Վենետիկ:

Ու մոռացած խստապահ ծես ու կանոն, սնտիք,
 Ու մոռացած հավատի կապ ու կապանք, կաղապար՝

Սմե՛ն մոլի ուղղափառ,
 Բողոքակա՛ն, կաթուղի՛կ,
 Լուռ զգացին, որ իրենք մարդ են կյանքում ու եղբայր,
 Երբ մեկ դարձավ փոթորիկ
 Մեկ էլ թփաց մեղմաբար
 Հայ հոգևոր երգը ծով,
 Որ քո՛ շրթից, Վարդապե՛տ,
 Ալի՛ք-ալի՛ք, փերթ առ փերթ
 Ծավալվում էր,
 Թավալվում
 Ելնող-ընկնող կոր գծով:

Ու Եվրոպան, որ գիտեր միայն ինչ-որ Արևելք՝
 Միաշերտ ու միաշուրթ,
 Դժոխքի պես մոտակա,
 Դրախտի պես հեռավոր, —
 Հիմա արդեն Եվրոպան
 Գտավ մի նոր ժողովուրդ
 Եվ հասկացավ, որ ունի
 Նա մի անցյալ դարավոր,
 Երակներում հոսք ու եռք
 Բազմադարյան
 Տոթ արյան,
 Եվ երկիրն այդ նորագյուտ
 Նոր անունով մկրտեց՝
 Արևելքի Իտալիա՛...

ՂՈՂԱՆՋ ՄԻՋԱԿՈՒԹՅԱՆ

Աջուն է նորից:
Սարից ու ձորից
Գալիս է կարծես մայրության բուրմունք
Ու համ պտուղի:
Ողկույզներն իրենց ճարահատ լացով
Խնդրում են դառնալ գինու քաղցր ծոր
Եվ կամ պուտ օղի:

Քամու շնորհիվ ծառերի գառ-վառ
Խաշամն է թռչում թավալ առ թավալ,
Այնպե՛ս, որ հեռվից անծանոթ մեկին
Մի վայրկյան նույնիսկ կարող է թվալ,
Թե փասյանների երամն է ծառից
Պոկվում ու հետո իրարից զատվում:

Կանաչ եղեգնի սրերն անպատյան
Դեղնում են՝
Ասես ժանգով են պատվում:

Լաչառ փշերը՝ արդեն չորացած,
Արդյոք ո՞ւմ վրա, ինչո՞ւ չարացած՝
Զգալ են տալիս անցուդարձողին,
Որ իրենք են տերն այս անփորձ հողի:

Իսկ մեջքակոտրուկ մեղու և պիծակ
Համերգ են տալիս անփող ու ձրի

Բնության հսկա անբեմ տաճարում,
Եվ ամբողջ օրը ինչ-որ մեծերի
Դուր գալ ցանկացող ճպտուներն անվերջ
Քարոզչի նման ճառո՞ւմ են, ճառո՞ւմ:

Իսկ չորամամուտ չեչուտ ժայռերի,
Քարերի վրա
Արև են կորզում մողես գորշավուն
Ու կանաչ խլեզ՝
Յուրաքանչյուրը,
Իբրև աստղծո սուր ծաղրուծանակ,
Մի ցամաքային ու քարաբնակ
Խեղճ կոկորդիլոս:

Ասպետությունից բոլորովին զուրկ
Ամպերն անքանակ
Գրոհ են տալիս բանակ առ բանակ
Մեն ու մենավոր արեգակի դեմ,
Որ կարծես իբրև փոքր ազգի հերոս
Բյուր զաճաճների հոժ ամբոխի մեջ
Կոխվ է մղում ողջ օրը՝ մենակ
Ու երեկոյան... նահատակվում է իբրև մարտիրոս...

Այնպե՛ս դուրեկան,
Այնպե՛ս փայփայիչ
Աջուն էր կրկին, երբ Եվրոպայից
Առոք ու փառոք ետ դարձավ նա տուն՝
Եվրոպան հաղթած:
Բայց թափ չէր տվել դեռ ճամփի փոշին,
Ծակատից ճամփի քրտինքն էր կաթում,
Դեռ չէր իսկ փոխել հագուստ ու կոշիկ,
Երբ ոտքերի տակ ճահիճը ճոճվեց,
Վտառը վխտաց:

Նա, որ գալիս էր Եվրոպան հաղթած,
 Հիմա հաղթության արևը սրտում,
 Վաստակած բազկով, հոգով տոնական,
 Հերոսի նման դառնում է իր տուն,

Եվ հանկա՛րծ

Այնտեղ... ուժը չի պատում
 Իր հրով հալել պաղը տնական,

Եվ հանկա՛րծ

Այնտեղ... զգում է իրեն
 Իր գալո՛ւց առաջ ջարդված
 Ու պարտված...

Ամբաստանության ամեհի քամին
 Լցնում է նրա աչքերը փոշով,
 Ու բանասարկության մացառն իր փշով
 Հոգի բզկտում, խոցում է մարմին,
 Զանգի ոտխա է փտածը թարմին
 Եվ հասարակը՝ ազնվագարմին,
 Զանգի չի պո՛ծել ու չի վերջանա
 Նրանց դարալուր վիճարկությունը:

Կարկին-քանոնով,

Կարգ ու կանոնով

Արտակարգի դեմ գրոհ էր տալիս
 Նույն ինքը... Նորին Միջակությունը:

Միջակությունը...

Նա աչքեր ունի՛,
 Սակայն... ծոծրակին.

Եվ տեսնում է նա,

Բայց ո՛չ թե պայծառ բոցը ճրագի,
 Այլ նրա զգած ստվերը միայն,
 Եվ ոչ թե գլուխ

Մի առաջամուխ,

Այլ պոչը, ազին:

Նա ունի՛ ականջ,

Բայց ո՛չ թե նոր կանչ,

Այլ անցած կանչի

Թույլ արձագանքը լսելու համար:

Ունի՛ քաղցրություն,

Բայց հիվանդագին-վաղահաս մրգի,
 Որ ցած է ընկնում՝ դեռ չէկած ամառ:

Գո՛ւն է ճանաչում, բայց միշտ էլ համառ
 Միրահարված է քսմսվող ներկի՛ն...

Միջակությունը...

Թե թոչուն է նա՛ ապա թութակ է,
 Այն է կրկնում, ինչին վարժել են:

Թե կենդանի է՛ կապիկ է միայն,
 Անում է լուկ այն, ինչին մարգել են:

Եթե ուժեղ է՛ ապա ջորո՛ւ պես.

Ուժն իրենը չէ,

Այլ ծնողների զորեղությունն է,
 Ա՛յն ծնողների, որ — ավա՛ղ — նրան

Մի՛ բան չեն տվել,

Հասարակ մի բան՝

Ծնող դառնալու կարողությունը:

Հուզվել էր ահա

Ու տազնապում էր Միջակությունը:

Արյունապակաս-պաղած խեղճերին
Տենդի ջերմ թվաց այն տաքությունը,
Որ անշատվում է սրտից վառվոռն
Եվ ահագնանում ցրտից շուրջբոլոր:

Ու մարդիկ, որոնց հագինն էր լոկ նոր,
Իսկ հոգին հին էր ու կարկատանված,
Կենարար հովին, զովարար քամուն
Նայեցին իբրև անեղ թշնամու,
Որ գուցե հանկարծ իր շնչով պոկի
Ու փոչ տա նրանց կարկատուն հոգին:

Եվ մարդիկ, որոնց խոսքերն էին նոր,
Իսկ միտքը՝ մաշված,
Ինչպես դրամը առուծախի մեջ,
Գոռ հրդեհ տեսան
Լուսարար մտքի վառ օջախի մեջ
Ու սրտապատառ աղմուկ գցեցին.
— Հասե՛ք, ջո՛ր ճարեք,
Օգնեցե՛ք, մարե՛ք...

Ո՛վ Միջակության անխախտ բնություն,
Դու՛ մտքի միայն թվաբանություն
Եվ հանրահաշվի երդրվյալ ոսոխ,
Դու՛ անծայր երկնի լազուրի տեղակ
Գնվող-վաճառվող մատչելի լեղակ,
Բոլո՛ր դարերի դու մե՛ծ հաջողակ,
Անցողիկ փառքի, էժան բախտի գող,
Եվ ամենագոր... քո ա՛յն գաղտնիքով,
Որ քաջ է հայտնի նաև մեծերին,
Բայց որոնք մեծ են այնքանով նաև,
Որ գիտեն թեև,
Բայց այդ գաղտնիքից
Ձե՛ն կարողանում երբեք օգտըվել...

Ո՛վ Միջակություն,
Ո՛վ երանելի ցմահ խակություն,
Ծերություն հոգո՛ւ, մտքի մանկություն,
Գոհ տիպարը քո սուր ծամածովեց,
Ինչպես բութ ցավից կամ փռշտոցից,
Եվ խեղճ գյուտն ահա Մետրուպ Մաշտոցի
Բոլո՛ր տառերով ի սպաս դրվեց
Սուտ-Հիսուաների անփակ բերանին,
Եվ օտար աչքի չեղած շյուղն անգամ
Վերածվեց հսկա բարդու գերանի.
Է՛լ սրբագործված օրենքի խախտում,
Է՛լ արատավոր մտքեր ու երգեր,
Է՛լ սովեր տեսնել լուսե դրախտում,
Կամ — մեղա՛ աստժո, դրա՛խտը հերքե՛լ —
Հազա՛ր մի տեսակ մահացու մեղքեր,
Առագաստավոր ենթադրություն,
Ոյս ու քե՛ն, նախանձ, խենթ ատելություն
Կիտվեցին անգիր, բարդվեցին գրով
Նույն սուտ-սրբերի անսուրբ ձեռքերով:

Եվ նույնիսկ նրա օդը շնչելիք
Ապականեցին շուրջբոլոր այնպես,
Որ նա շնչելիս — օդի փոխանակ —
Մանրած ապակու փշրանք էր կարծես
Բռնի կոչ տալիս...

Եվ սիրտը նրա ցավից կուչ եկավ,
Ինչպես գյուղացու սիրտն է կծկըվում,
Երբ ամռան կեսին կարկուտ է գալիս...

Հացըդ, Վարդապե՛տ,
Հացըդ դառնացավ թալկաթփի պես,
Եվ գունաթափվեց

Ու պաղ քրտինքով ճակատող պատվեց՝
Վանքի ծեփի պես:

Հայացքը նրանց, ում պիտի որ դու
Ըստ հին օրինաց եղբայր կոչեիր,
Կամ աջդ տայիր, կամ աջ պաշտիր,
Հայացքը նրանց դադում էր հիմա
Եվ այրում էր քեզ՝ եղնջի նման...

Այս անմիաբան Միաբանության պաղ պատերի մեջ,
Չար ու փոքրոգի, խղճուկ ու չնչին այս վատերի մեջ
Էլ ինչպե՞ս պիտի դու քեզ զգայիր.
Մասյաց վիհն ընկած մի նոր հսկայի՞,
Թե՞ չհասկացված մի հին սրբի պես:

Ձե՛, փոխվել էին ժամանակները,
Պիտի զգայիր... միայն որբի՛ պես...

ՂՈՂԱՆՋ ՀԱՐՅՄԱՆ

Նա որբ էր ծնվել ու սնվել կյանքում,
Եվ ոնց սկսվեց՝ այնպես էլ գնաց.
Անձնական կյանքում նա միշտ որբ մնաց՝
Որբ օթևանող հինավուրց վանքում:

Այդպես էլ մնաց անտուն ու անտեղ.
Լոկ խոնավ մի խուց, թղթեր ու կանթեղ:

Այդպես էլ մնաց մենիկ ու մենակ.
Հոգին՝ աննեցուկ, ինքը՝ անհեռակ:

Ամենից առաջ՝ նա հայր էր ծնվել...
Այդպես էլ կյանքում չունեցավ բալիկ,
Որ տան անկյունում օրորոց դրվեր,
Կամարից կախվեր հուռութ-խաղալիք,
Եվ ինքն էլ հանկարծ նանիկ-նայ ասեր,
Իսկ երբ մեծանար՝ տը՛պ-տը՛պ-տը՛պ՝ վազե՛ր
Ու հոր թղթերը խառներ-խզբզեր,
Անվերջ բլբլար,
Եվ շիվը դալար
Աննկատ լցվեր ու նոր բուն դառնար,
Երջանիկ մի օր տեղ ու տուն դառնար:

Նա ուներ մատներ՝ր.
Տաքուկ ու նրբին, աղերսո՛ղ մատներ՝

Շոյելո՛ւ համար, ցավը մեղմելո՛ւ,
Գրկելո՛ւ համար, կրծքին սեղմելո՛ւ:
Սակայն որտեղի՞ց և ինչպե՛ս գտներ
Մի ժիրիկ մանչուկ,
Հետն էլ՝ թևանցուկ
Գանգուրիկ
Ջուրիկ...

Նա ուներ շրթե՛ր.

Այրող կարոտից դողացո՛ղ շրթեր՝
Պաչելո՛ւ համար ու համբուրելո՛ւ,
Եվ... պիտի կյանքում անհագ մի պապակ
Հա՛ նրան դրդեր
Օտար թաթիկից շոյանք մուրալու,
Թմփլիկ թուշիկից հայցելու մի պագ...

Եվ ուներ նա սի՛րտ՝ սիրելո՛ւ համար,
Մի սիրտ՝ գերվելով տիրելո՛ւ համար,
Մի սիրտ՝ սե՛ր համակ,
Մի սիրտ՝ սիրո ծո՛վ,
Իսկ ինքը սիրուց հավիտյա՛ն ցամաք,
Ինքը՝ սիրուց սո՛վ,
Ինքը՝ մենակյաց ու կուսակցրոն՝
Ինքն իրեն ծուրոզ մի սիրո կերոն,
Որ վառվում է հար խորանի խորքում
Անմարդաբնակ-դափղատարկ վանքի
Եվ լուսարարի աչքին ու հոգուն
Իր մուխն է տալիս, լույսը՝ ոչ ոքի...

Ինչո՞ւ է կյանքը հաճախ այնպիսի չար խաղեր խաղում,
Որ մտածելիս մարդու սրտի մեջ արյունն է պաղում:

Դեռ վնաս չունի,
Թե աստվածն անգո չեղյալ Մովսեսին

Գերադասել էր ու նախընտրել
Միջնորդ իր միջև ու ժողովրդի՝
Միաժամանակ խեղճ ու կրակին ծնելով կակազ.
Ե՛կ ու թարգմանիր քո թլվատ լեզվով
Պատգամներն աստծո, մտքերը խրթին:
Դեռ կարելի էր ավել ու պակաս
Չեղյալի համար անգույին ներել:
Բայց... Միլտոններին վերցնել ու զրկել տեսողությունի՞ց,
Բեթհովեններին՝ լսողությունի՞ց,
Կոմիտասներին թույլ չտա՛լ սիրել...

Ինչո՞ւ է կյանքը հաճախ այնպիսի չար խաղեր խաղում,
Որ մտածելիս մարդու սրտի մեջ արյունն է պաղում:
Ինչո՞ւ, և դարձյա՛լ, և կրկի՛ն ինչո՞ւ,
Եվ ի՞նչ է ուզում դրանով ասել.
Իր ո՛ւժն է շեշտում, կարողությո՞ւնը:

Եկեք նախապես, առհավե՛տ ու մի՛շտ
Ընդունենք կյանքի զորեղությունը,
Միայն թե երբե՛ք էլ այնպես չանի,
Որ աշխարհ գալիք նոր մի Կոմիտաս
Իր անմեղ սերը սրտում զնդանի՝
Իբրև դատվածի,
Դատապարտվածի՝

Լերդ-լերդ արյունով թեփելով բանտի դուռն ու պատերը...

... Ո՞վ էր այդ թաքուն-մեղավոր սիրո
Ահավոր դժբախտ-երջանիկ տերը,
Վարդապե՛տ, ասա՛,
Ջգա քեզ ազա՛տ.
Քեզ հիմա ո՛չ ոք չի բանադրի,
Ո՞ղջ մի ժողովուրդ քեզ կունկընդորի:
Վարդապե՛տ, ասա՛,
Ջգա քեզ ազա՛տ.

Մի՛ խոստովանիր, այլ հպարտացի՛ր,
Ո՛ւմ է սուրբը պետք, եկ դու մարդացի՛ր:

Ինքըդ թե՛՛ կրակ՝ մի՛թե, Վարդապե՛տ,
Բովանդակ կյանքում հար սառել ես դու
Կուսակրոնի քո սևերի տակ:

Վա՛խ, դա կլիներ ծանրը մեղանչում

Կյանքի՛ դեմ, գարնա՛ն,

Պտղաքաղոթյա՛ն:

Թե՛ հաղթահարել և առել ես դու

Քո սիրասարսուռ տաք թևերի տակ

Խումար-Շողեր-իդ կամ Սոնա յար-իդ՝

Իբրև կյանքի դեմ գործած մեղքերիդ

Միակ թողութուն:

Ասա՛, Վարդապե՛տ,

Ո՛վ էր քո սերը,

Բախտի պես թաքուն

Քո սիրո տերը:

Չե՛, նա չե՛ր կարող չլինել կյանքում,

Նա պիտի՛ լիներ: Բայց ո՛վ է եղել:

Ինչպե՛ս իմանալ, որտեղի՛ց պեղել:

Ասա՛, Վարդապե՛տ, մի՛ պահիր թաքուն.

Մի՛ խոստովանիր, այլ հպարտացի՛ր,

Ո՛ւմ է սուրբը պետք, ե՛կ դու մարդացի՛ր:

Ո՛վ էր նա, ի՛նչ էր անունը նրա.

Սոնա՛ էր արդյոք, Խումա՛ր էր, Շողե՛ր.

Ականջին ուներ սրտաճև օղե՛ր,

Խա՛լ ուներ արդյոք, ո՞ր այտի վրա:

Ուներ Տիրամոր աչքեր ու հոնքե՛ր,

Տիրամոր ունկեր,

Տիրամոր ծունկեր,

Տիրամոր հասակ,

Մազերը՝ պսակ,

Շապիկը՝ կապույտ, շորը՝ ոսկեկար, —

Դարերից եկող մի մանրանկար,

Որ կարծես և՛ կար, և՛ բնավ չկար,

Որ թեպետ ուներ

Չխամրող գույներ...

Թե՛ ոչի՛նչ չուներ, այլ ուներ լոկ քե՛զ,

Այլ ուներ լոկ քե՛զ — մի ամբո՛ղջ աշխարհ,

Եվ աղաչում էր, որ դու չլքես,

Դառնաս օրվա հա՛ց և ո՛չ թե... նշխար,

Եվ աղերսում էր՝ առանց նայելու,

Ու նվաղելով՝ տրվում թևերիդ...

Ջառ վառը նրա ո՛նց էր վայելում

Վարդապետական ճնշող սևերիդ...

Եվ մի՛թե քեզնից նա չպահանջեց,

Եթե պահանջեց,

Ինչո՞ւ նահանջեց՝

Լացով ու հայցով ինչո՞ւ չտանջեց,

Ա՛խ, ինչո՞ւ անվերջ չհանեց հոգիդ,

Որ ուրիշ հագուստ նա տեսներ հագիդ,

Որ ազատվեիր սքեմից քո սև,

Որ դրսից նո՛ւյնպես լինեիր լուսեղ՝

Վանքից աշխարհի գիրկը դառնայիր,

Ամենամարդդ նո՛ր մարդանայիր...

Ճա՛ր սուրբ, ի՛նքդ ասա.

Ո՛վ էր քո սերը,

Նրբին ու տոկուն,

Բախտի պես թաքուն,

Երջանիկ-անբախտ քո սիրո տերը:

Ո՛վ էր քո շաղոտ-շողոտ Շողեր-ը,

Քո Շողակաթը-Շողիկը-Շողը,

Որ ընդունում էր սրտում իր լռիկ
Անլուր ցավերիդ այրող դողերը,
Ինչպես շանթերն է իր մեջ ընդունում
Այս տարողունակ-բարեգութ հողը:

Ո՛վ էր, որտե՛ղից, ինչպե՛ս էր գալիս,
Յուրայիններին անվերջ խաբելով,
Տնեցոց առաջ լեզու թափելով,
Սիրտը հևհև, կարոտից մարած,
Ահն ու երկյուղը,

Վախն ու սարսափը
Փայտփորի նման հոգու մեջ թառած,—
Որտե՛ղ էր գալիս, որ իր ավերով
Դալուկ ճակատիդ ամպերը վանի,
Որ չար աշխարհից մի պահ քեզ հանի
Ու տանի—և ո՛ր—թըռչվառն ո՛ր տանի...

Թշվառն ի՛նչ աներ, ի՛նչ հող տար գլխին,
Նա ինչպե՛ս դառնար քեզ համար նեցուկ
Իր թույլ ձեռքերով ու սիրով ծածուկ,
Ինչպե՛ս օգներ քեզ, ինչպե՛ս պաշտպաներ,
Երբ տգիտության հազա՛ր դեսպաններ,
Զուրմե՛ր մթության,

Անվերջ, չո՛րս կողմից, առա՛նց գթության,
Ամեն օր մի նոր առիթ հայթայթում,
Հարվածում էին, խոցում քեզ, խայթում.
Երբ քո շուրջբոլոր հին ոխն էր պայթում,
Ճաթում նոր քենը,
Ցայտում նախանձը.

Երբ քո ոսկեհատ սրտուտ ցորնի տեղ
Սերմ էին հաշվում բոված աղանձը,—
Մի անբախտ Շողեր իր սիրով ծածուկ
Էլ ինչպե՛ս օգներ, դառնար քեզ նեցուկ...

ՂՈՂԱՆՋ ՎԱՅՐԱՏՄԱՆ

Մտքերով տարված խորհուն քայլելիս
Դավադրաբար ոտք էին տալիս,
Թիո-թավալզըլոր անվի ճաղերում
Զինախնդրորեն փայտ ու ձող խրում:
Բայց նա՛ Առաքյալ,
Պիտի՛ որ կյանքում
Չկարողանար երբեք ընդհատել
Իր ճանապարհը առաքելական:

Բայց նա՛ Ոսուցիչ,
Ի՛նչ էլ որ լիներ,
Պիտի՛ որ դառնար մեռած խազերի
Առաջին դպիր,
Միակ քերական,
Թաղվածը պեղեր,
Շաղվածը թեղեր,
Բերեր մեկտեղեր
Սեր խաղ ու տաղի մոտիկ-հեռական...

Նա՛,
Որ ծնվել էր ապրելու կյանքով մի ընկերական,
Ուրախանալու միայն ազգովին,
Տրտմելու դարձյա՛լ ամբողջ համայնքով,—
Հիմա ստիպված ապրում էր մենակ՝
Մենավո՛ր ծառի խշռոցով տխուր,
Մենավոր ծառի ամբո՛ղջ հմայքով:

Միայնա՛կ մի ծառ,
Պտղատո՛ւ,
Հսկա՛,

Որին առիթով և կամ անպատճառ
Անվերջ փայտլեխում ու քարում էին,
Պտղի պտկումին խանգարում էին
Մե՛կ օր, տասնըմե՛կ,
Բայց... քանի՞ տարի,
Եվ մի՞թե ցմահ...

Եվ ինչպես կոպը վտանգի դեպքում
Աչքերն է ծածկում բնազդով բարի,
Այդպես, Վարդապե՛տ, այդպես էլ հիմա,
Կտրելով իրենց խորդուբորդ ուղին,
Ոտներդ են ահա տալիս գարտուղի՝
Էջմիածնից քեզ հեռացնում,
Տանում և մի օր... Պոլիս հասցընում:

ՂՈՂԱՆԶ ՊՈԼՍԱԿԱՆ

Պոլի՛ս, Պոլի՛ս...

Նախ՝ հունական մի հետերա,
Ապա՝ տիկին Բյուզանդիոնի,
Այնուհետև՝ տաճկաց խանում,
Իսկ իմ նախնին՝ կովից դարձող
Կնակարոտ մի վետերան,
Որ լեռնակույտ տենչանքի հետ
Սշտախալտանք ծով խանդ ունի,
Եվ ինքն իրեն շվայտելով,
Ցոփ վատնելով
Ու հատնելով՝
Արդեն քանի՛ և քանի՛ դար
Քեզնից բնա՛վ չի կշտանում...

Պոլի՛ս, Պոլի՛ս...

Դու՛ հետերա-տիկին-խանում,
Դու՛ պչրուհի մի կախարդիչ,
Արմավալանջ, նոճեթարթիչ,
Մարմարայի պարեզոտով,
Բոսֆորական կապույտ գոտով,
Մահիկահոնջ, արևաչյա,—
Մի ըզզլիսիչ սիրավաճառ՝
Դեմքով բարի, իսկ սիրտը չար,
Որ հնազանդ մեր ընտանուց մեզ սառ՛նց էր...

Իր մատներին՝ ուզածի պես՝ մեզ պարեցնում,
Շղթայում էր ոչինչ չարժող մի ժպիտով,
Մի ժպիտով,
Որ շատ շուտով

Պիտի բաշխեր ուրի՛շ մեկին,—
Շա՛տ հասկացող,
Զի՛չ զգացող՝

Անսե՛ր, անկի՛րք-լոկ շահադե՛տ,
Լոկ հաշվարա՛ր-խելո՛ք մի կին,
Որ ո՛չ կարգին մոտն էր տանում,
Ո՛չ էլ գոնե կարգին վանում,
Եվ... մեզանից ամենամեծ հաջողակին,
Որ կարող էր Բյուզանդիոնում դառնալ կեսար,
Դարձընում էր շա՛տ-շա՛տ... միայն խեղճ տնփեսա...

Պոլի՛ս, Պոլի՛ս...

Հազարավոր հայ պապերիս
Նախ՝ բորբոքել շինծու խանդով,
Հետո՝ փորձված հոմանու պես
Տրված նրանց խենթ ափերին
Ու հրայրքի տենդ-տապերին՝
Հյութերն ամեն և արյունը,
Զրտինքը ծով և ավունը
Զամել ես դու քո արգանդով,
Իսկ երբ նրանք հենց ժառանգից են խոսք բացել,
Դո՛ւ, որ գիտես կատվի նման ցնկնել դյուրին,
Փոխարկվել ես իսկույն ջորու՝
Հորացել ես ու ամլացել...

Պոլի՛ս, Պոլի՛ս...

Քանի՛ անփուտ ու սերտ կորիզ
Զո հողերում մենք ենք թաղել,

Մինչդեռ պտուղն ո՛վ է քաղել:
Քանի՛-քանի՛ հայ սերունդներ
Ցանել են սերմ, ցրել հունդեր
Ու հասցրել բերք ու բարիք.
Ողջն՝ ուրիշի՛ն, իսկ մեզ՝ կարի՛ք...

Պոլի՛ս, Պոլի՛ս...

Շքեղ ու ճոխ, չքնաղ ու պերճ,
Արժաթակուտ ու ոսկերիզ:
Շուք ենք տվել քեզ դարերով՝
Մեր սրբատաշ սուրբ քարերով,
Մեր անասեղ նուրբ կարերով,
Մեր աչքերի փայլ ու ցուլքով,
Մեր մատների ծով շնորհքով,
Չճարվելիք-չեղած ճարով,—
Մեր քանքարով ու հանճարով
Պճնել են քեզ,
Զուգե՛լ-զուգե՛լ
Եվ... ամեն ինչ այլոց ձգել...

Պոլի՛ս, Պոլի՛ս...

Մետաղաթել դու մի հանգույց՝
Մեր պատմության պարանոցին
Բախտի ձեռքով պնդված մանկուց.
Դու՛ անջինջ գիր օրհասական,
Մենք՝ մի ճակատ խեղճ ու դալուկ.
Դու նոր սֆինքս փոքրասիական,
Դու՛ դարավոր մի հանելուկ,
Մենք՝ դարավոր մի առեղծված.
Դու՛ է՛ն գլխից սրբապղծված,
Եղծվա՛ծ,
Կեղծվա՛ծ

Մի չար տաճար,
Իսկ մենք՝ դարձյա՛լ հավատացյալ...

Պոլի՛ս, Պոլի՛ս...

Դու՛ դիվասիրտ-հրեշտակադեմ,
Ներսից՝ գեհեն,
Գրսից՝ եղեմ,
Կերտված ձեռքով մարդակերպար սատանայի...

...Նոր էր պլրծել հայ ջարդը նոր՝

Աղանայի,

Ու 30 000 հոգի հող էր մտել,

Բայց չէր փսեղ,

Ելզզ քյոշկի տերն արնախում ու սևանուն

Սալոնիկում իր ձեռքերն էր դեռ լվանում՝

Գահը զիջած զավակներին իր արժանի,

Որ նորաձև եվրոպական տարագի տակ

Առժամանակ ծածկում էին ճանկ ու ժանիք.

Գրավաճառ խանութների ցուցափեղկում

Բուրում էին դեռ հեթանոս արբշիռ բույրեր՝

Կախարդ ձեռքով ամենազոր Կարուժանի

Խառնըվելով Գողգոթայի ծաղիկների հոտին անթով.

Դեռ հրահան իր մատներով Սիամանթոն

Շանթագրել էր կամենում Կարմիր լուրեր,

Ու Թեքեյանն էր հղանում մի Հարություն հրաշալի, —

Երբ Կոմիտասն այստեղ եկավ՝

Բո՛ւյն գտնելու,

Թե՛... արթըմնի քուն մտնելու...

Այդ գիշերը, ա՛խ, թող ձգվեր, երկարանար,

Այդ գիշերը թող քարանա՛ր,

Որ չբացվեր բախտորոշիչ օրն այդ դժնի

Ու քեզ հաներ

Պոլիս տաներ...

ՂՈՂԱՆՋ ՆՎԱՃՄԱՆ

Թզուկ ծառերը հեշտ են չորանում

Տաք ու պաղ քամուց,

Քերծվածքից անզամ,

Ճղակոտրումից:

Վիթխարի մայրին կրկին նորանում,

Շիտակվում է շուտ՝

Մինչևիսկ անգութ ճղակոտրումից.

Խորունկ նոր վերքին գտնում է նոր ճար՝

Ապաքինվելով բուժիչ այն խեժով,

Որ ուրիշ դեպքում կոչվում է... հանձար:

Եվ ահա նորից նրա թարմ վերքի

Բերանն է զոցվում,

Ու բացվում նրա բերանփակ հոգին,

Ու բացվում այնպե՛ս,

Որ բնաշխարհի զովի ու շոգի

Հարություն տվող շունչն է զբացվում

Պոլսո թաղերում հայրենապապակ:

Բացվում է նրա հոգին բերանփակ

Աղրիականի ու Մարմարայի հեռու ափերին,

Եվ ինքնամոռաց-ցնձուն ծափերի

Որոտից մի պահ

Ծովերն իսկ հպարտ

Ուռչում են թեպետ, զարկվում ափերին,

Բայց... մի այնպիսի՝ հարվածով զգույշ,

Բայց այնպե՛ս անձայն, համրացած այնպե՛ս,
հնչպես... նկարին Այվազովսկու...

Մի հայ վարդապետ՝
Ո՛չ միայն անզեն,

Մինչևիսկ առանց խաչ ու արծաթի,
Եկել էր՝ նորից Պոլիսն առնելու,
Եվ անառ Պոլիսն իսկապես առավ,
Բայց ոչ թե իբրև գյոռբագյոռ Ֆաթիհն՝
Ահեղ հորդայի սանձը ձեռներում,
Ջենքով ու զորքով,
Բարբարոս ձեռքով
Կրակի մատնած հյուսիս ու հարավ:

Նա անառ Պոլիսն իսկապես առավ,
Վերագրավեց, միայն թե... երգո՛վ,
Մի երգչախմբով ամենասասան,
Որ նա՝ զողթնեցուց սերված երգասան,
Խորին խորհրդով կոչել էր Գուսան.
Մի երգչախմբով, ուր ձուլվել էին
Շուրջ երեք հարյուր պարման ու կուսան,

Մի խումբ վիթխարի՝
Մասյաց մայիսյան եղեգնուտի պես
Բազմասոսափուն,

Վանա լճի պես ծփան ու ծափուն,
Արաքսից առույգ, Եփրատից հոսան,
Բայց Արագածից շեշտված ու հավաք, —
Շուրջ 300

Հնազանդ, խոնարհ ու հլու զավակ,
Հնազանդ, խոնարհ ու հլու մեկի՛ն,
Որ դաժան կյանքի ահեղ տաժանքով
Իր հայր դառնալու իրավունքն անգին
Փոխել էր դրա լոկ երազանքով,
Եվ հիմա...

Հանկարծ շուրջ 300 սիրելի զավակ՝

Հո՛ր շնչով շնչող,
Հո՛ր ձայնով հնչող,

Մի սի՛րտ, մի հոգի՛, մի կա՛մք, մի արյա՛նու
Շուրջ 300՛...

Իսկ ինչո՛ւ երեք,
Հա՛յր սուրբ, վե՛ց էր պետք,
Այո՛, Վարդապե՛տ,
Պետք էր 600՛,

Որ... մեր վեցդարյա ահեղ որոտության ամեն՛ն մի տապալց
Վեց հարյուր տարի անվերջ ջամփուրված,
Փայփայանքից զուրկ ու չհամարված
Մեր ժողովրդի մրժուտից գոչեր
Ամե՛ն տարվա դեմ մի՛ անմեղ բերան,
Եվ... ա՛յն քաղաքում, որ ջենքերը մեր
Իր լեզվով ասած՝ դարձրեց վերան՝
Ջարդելով սյուներ, ձեղուն ու գերան.
Եվ... ա՛յն քաղաքում, որ վեց դար արթեց
Մեր գինով, արյամբ և արտասուքով,
Մեր հագուստի հետ մեր մաշկն էլ գոփեց,
Պղծեց ա՛յն, ինչ որ մենք էին պաշտում՝
Մեր սուրբ սուփրայով կոշիկը սրբեց,
Ոտքերը լվաց մեր հացի տաշտում...

Շուրջ 300՛ պարման ու կուսան՝
Մի համահավաք-բազմամի Գուսան,
Որ առանց մի պուտ արյուն թափելու
Եվ առանց դավի, առանց խաբելու,
Մի դաշնամուրով ու սրինգ-փողով,
Վեց հարյուր շուրթով ու ձեռքով մի զույգ,
Թե հարուցելով լաց ու արտասուք՝
Ապա հուզելով, ո՛չ ահ ու դողով,
Թե հարուցելով կանչ ու աղաղակ՝

Ապա ցնծությամբ, ո՛չ թե երկուողով, —
 Առա՛վ-Նվաճե՛ց-գերե՛ց մի քաղաք,
 Որ մի քաղա՛ք չէր, ո՛չ էլ տերություն,
 Այլ միանգամից երկու մայրցամաք՝
 Մի երկկողմանի լանտսյան դիմակ —
 Կիսով ասիական ու եվրոպական,
 Մեկին՝ միջնաբերդ,
 Իսկ մյուսին՝ մատույց,
 Այստեղ՝ ապական,
 Իսկ այնտեղ՝ այտույց...

Եվ Նա՛, որ երեկ տիրեց Եվրոպան
 Ու հիմա դարձել Ասիան էր գերում,
 Նա՛, որ ընկել էր մի հուռթի խոպան
 Եվ իր քրտինքով ջրած հերկերում
 Ե՛վ խոփ էր ինքը, և՛ լուծ, և՛ ճոպան,
 Սերմնացան այնպես՝ ինչպես որ տափան, —
 Հիմա թերևս նա զուր էր ուզում
 Պոլսում բաց անել երաժշտանոց.
 Ձե՛՞ որ նա ինքը մի մարդ էր թեպետ,
 Հազարի նման մի հայ վարդապետ,
 Մի մարդ էր,
 Սակայն կարծես մի մարդ էր բազմահատորյա,
 Մի մարդ էր,
 Սակայն ինքն էր մի ամբողջ կոնսերվատորիա՝
 Երգիչ, նվագող,
 Խաղեր հավաքող,
 Որքան խմբավար՝
 Նույնքան ուսուցիչ,
 Որքան հնագետ՝
 Մեռած խազերի գաղտնիքը լուծող,
 Նույնքան պատմաբան՝
 Պարավոր երգի մայրուղին գծող.
 Եվ մի երգահան, և մի տաղաստեղծ,

Որի քրտինքի ամեն մի կաթիլ
 Պառնում էր նոր երգ ու նոր եղանակ.
 Ե՛վ աստվածային մեր Պատարագի մի նոր հեղինակ,
 Ե՛վ զավեշտական օպերետայի ուրախ խաղաստեղծ, —
 Մի մարդ,
 Որ սակայն կարծես թե մարդ էր բազմահատորյա,
 Մի մարդ,
 Որ սակայն ինքն էր մի ամբողջ կոնսերվատորիա...

Եվ ահա նրա կախարդ ձեռքի տակ
 Ծերուկ խազերը դառնում են կարծես անլեզու մանուկ,
 Որ կամաց-կամաց իր թոթովախոս լեզուն է բախում,
 Թո՛ղ որ դեռևս ինչ-որ տեղերում թլիկ է տալիս,
 Բայց կանցնի և՛ ս մեկ-երկու տարի, —
 Էլ հա՛մրը որտեղ, էլ ի՛նչ փակբերան...

Մարմին է դառնում Անուշ օպերան,
 Որ էլ հարց չտա հեզնող Ֆիգարոն,
 Թե ո՞ր են հապա Մոսին ու Սարոն...

Մարմին է առնում Անուշ օպերան,
 Եվ ժողովրդի
 Ընդերքից հուռթի
 Միևնույն տարում լույս աշխարհ եկած
 Նույն ժողովրդի
 Կարեվեր սրտի
 Հոգսերից, ցավից, հույսերից երգած,
 Նույն հողը հերկած
 Սերմնացան երկու
 Մեկտեղ են բերում բերքը պանծալի՝
 Սիրով զումարում հանձար հանձարի...

Մինչ ինքը այստեղ՝
 Արդյոք Բերայի Բանկալթի թաղո՞ւմ,

Արդոց հշխանաց կղզո՞ւմ ման գալիս,
Թե՛ քաղաքամերձ չքնաղ Հայգյուղում, —
Մինչ ինքը այստեղ՝
Իր միտքը լողում,
Թողնում է Բերա-Բանկալթի-Պոլիս
Ու հասնում նորից
Ո՛ր... էջմիածի՛նս

Այս, նրանք այնտեղ հաճախ, ջա՛տ հաճախ
Խուց էին մտնում լոկ լուսաբացին,
Իսկ ամբողջ գիշեր...
Եվ ամբողջ գիշեր
Յերուկ մոկացին...
Ինչպե՛ս չհիշել՝
Որքան էլ թվա անցած ու հեռու

Նա մեմարանի պահակն էր Յերուկ՝
Անտուն ու անտեր այդ Նախտ քեռին:
Նրա մացառփուշ խառնակ հոնքերի
Յեղ-տեղ փլուզված կամարի վրա
Պարսդարսված էին կնճիռներ մռայլ՝
Ամեն մեկն ասես կամարին վայել
Մի-մի ձեղնափայտ, փոքր ու մեծ գերան,
Ու թե ծոմոված վերից ու տակից,
Ապա ճակատի պաղից ու տաքից:

Եվ ամեն անգամ, երբ Նախտ քեռին
Իր իսկ մտքերի քամուց սարսվելով՝
Կամարն էր ցնցում քանդված հոնքերի,
Գերաններն անվերջ վեր ու վար թռչում,
Ճա՛ ճոճվում էին, բայց չէին փչում...

Թաղել էր քեռին՝ ինչ ուներ կյանքում,
Թողել հայրենի Սասուն-Մոկս-Շատախ,

Եվ հիմա՛ զրկված տեղից ու տնից,
Մենակ, չորգլուխ՝ պահակ էր վանքում:
Եվ ամեն գիշեր սոսինձ սաների
Կայչուն խնդրանքով և աղաչանքով
Խեղճ Նախտ քեռին կամա-ակամ ս
Դառնում էր կրկին Սասուն—Մոկս—Շատախ՝
Միշտ սկսելով.
— Է՛հ, լաո՛, մատա՛ղ...

Ու նույն աննվագ խոր հառաչանքով
Ամեն օր պատմում Սասնա մի ծոխից,
Քուռկիկ Ջալալուց, Կեծակե թրից,
Ազոավաքարից
Ու Ծովասարից:

Դիցարանելով վիպում էր քեռին,
Բայց և վիպածին խորունկ հավատում՝
Ապրում նրանց հետ, նրանց պես դատում,
Նրանց աչքերով սիրում ու ասում:
Վիպում էր քեռին ու երգում տեղ-տեղ
— Դառնամ զողորմին...
Ազգին ու տոհմին...

Ու նորից վիպում ու երգում հերթով
Իր Յերունական խզված կոկորդով.
— Ընոր լե ծծե՛ր՝ լուսնակ էր ջովասակ
Մեզի լուս տալու...
Ընոր լե ճակա՛տ մեյդան էր, լաո՛,
Քուռկիկ Ջալալու...

Եվ Նախտ քեռու միամիտ մտքով
Ինչպե՛ս անցկենար,
Թե ինչքան գնար,
Այնքան ավելի հաճախ կհիշվեր
Այն խելոք սանից, որ հետո թեպետ
Հագավ սև սքեմ, դարձավ վարդապետ,

Բայց ուշք ու միտքը տվեց երգերի:
Նախոյի մտքով ինչպե՞ս անցկենար,
Թե միշտ հիշվելիս՝ ինքը՝ խեղճ քեռին
Կկանգներ կողքին ինչ-որ... Վազներին:

Այո՛, Վարդապետ, վիզը ծռելով՝
Այդ խեղճ ու կրակ անգրագետ քեռին
Կողքից էր նայում գոռոզ Վազներին
Եվ պահանջո՞ւմ էր,
Թե՞ աղաչում էր,

Որ դու քո գորեղ Սասնա ծռեր-ով
Թրատես նրա Նիբելունգներ-ին.
Չեղքի դեմ բազուկ,
Շուրթի դեմ՝ բերան,
Օպերայի դեմ՝
Քո նոր օպերան...

Ձո ժողովուրդը՝ արյան ծովերում,
Նորոզվող վերքի անլուր ցավերում,
Իսկ նրա որդիք՝ պատմության մուտից
Պոռ գոչում էին իրենց հաղթ ուժից,
Կենաց ու մահու պայքարից արդար:
Այստեղ էր ահա, որ Դավթի կողքին
Գալիս էր կանգնում մի Կարմիր Վարդան
Ու հանում էր քեզ Պոլսո Բերայից,
Պեպի Ավարայր ու Տղմուտ կանչում, —
Եվ քո ականջում
Խմբերգն էր հնչում
Այն հերոսական նոր օպերայից,
Որ այս անգամ էլ կոչվում էր Վարդան...

ՂՈՂԱՆՁ ՄՐՅԱՎԱՐՏԻ

Եվ մեկ անգամ հաղթարշավով
Արդեն անցած կես-Եվրոպան,
Այնուհետև նվաճելով սիրտն Ասիայի,
Խլացնելով նեյնիմական ու սազային
Երգացավի ծանրը նոպան՝
Հիմա նորից հրավիրվեց նա Եվրոպա.
Կանչվեց Բեռլին, հետո՝ Փարիզ:

Ականավոր երաժիշտներ ողջ աշխարհից՝
Չմահավա՛ն, բարձրաճաշա՛կ, անմիաբա՛ն,
Միջազգային Ընկերության Համաժողով
Եվ սյունազարդ սրահներում լուսաողող
Յուրաքանչյուր ժողովրդի երգ ու խաղից՝
Ջեկուցումներ,
Յուրաքանչյուր ժողովրդի պար ու տաղից՝
Երգ-ցուցումներ:
Իսկ բովանդակ ու բազմազգի Արևելքից՝
Մե՛կը միայն...

Ուրիշները, սրտի դողով,
Ջեկուցման հետ բեմ են հանում
Նվազախո՛ւմբ, պարե՛կ, երգի՛չ:
Իսկ սա՛... ինքը մեկնաբանում,
Ինքն էլ ձեռքը ծոցն է տանում,
Ծոցն է տանում
Ու... դուրս հանում

Օրկեստրի տեղ միայն մի... պարզ ծիրանի փող
 Եվ, փոխանակ մենակատար անհատների,
 Ինքն է հանձնում իր շուրթերին ու մատներին,
 Ու... մի փոքրիկ, փայտե մի փող
 Մերթ հնչում է օրկեստրային ամբողջ թափով,
 Մերթ՝ դայլայլում ու գեղգեղում,
 Մերթ ժայթքում է ու մերթ գեղում,
 Մերթ կուտակում ու բարդում է,
 Մերթ՝ խենթ հոսքը մատով նեղում,
 Ուզածի պես հունից շեղում
 Ու վերջում էլ ավարտում է
 Ինքը՝ ինչ-որ հանգույց կապով,
 Իսկ դահլիճը՝ ընդոստ ծափով:
 Հետո՝ փողը ծոցն է տանում
 Ու վերստին մեկնաբանում,
 Եվ մի վայրկյան տալով դադար,
 Նորից դառնում մենակատար՝
 Ինքն է երգում սրտի ձայնով...

Ա՛խ, Վարդապե՛տ, նորից այնօր
 Մտքերից՝ մեզ, աչքերից մուծ դու ցրեցիր,
 Աշխարհում մեզ դու պարզերես դարձրեցիր,
 Իսկ ինքքդ քեզ՝
 Կրկի՛ն հաղթող մենամարտիկ,
 Որ ծափերի տարափի տակ
 Ցած է իջնում բեմից մարտի,
 Ցած է իջնում,
 Որպեսզի նո՛ւյն այդ ձեռքերով,
 Իբրև հերոս —
 Դեռ կենդանի՝ —
 Վեր բարձրանա... պատվանդանի...

Ե Ղ Ե Ռ Ն Ի Հ Ա Մ Ա Զ Ա Ն Գ

ՂՈՂԱՆՋ ԸՆԴՀԱՏՎԱԾ

Եվրոպայից նա վերստին սիրով դարձավ
 Իր Գուսանին և խազերին,
 Իր Անուշ-ի նոր մասերին,
 Իր Վարդան-ի գոռ բասերին:

Հնչյուններից պիտի կերտեր մի հուշարձան,
 Որ հավասար պիտի լիներ
 Իր վեհությանը Մասնա սարին.
 Պիտի երգով ողորմի տար
 Բաղդասարին, Սանասարին
 Ու Նզովեր Մսրա չարին.
 Հորովելով Դավիթ տղան
 Պիտի մենակ՝
 Անեզ-անլուծ՝
 Գեղջուկի տեղ գուլթան քաշեր,
 Հետո՝ զորքին հանգիստ թողած,
 Մսրա տիրոջ սիրտը խաշեր...

Պիտի՛, պիտի՛...

Վարդապետի
 Գիշերաձայլ վեղարի տակ

Բացվում էին լուսաթաթախ առավոտներ՝
Մեկը մեկից պայծառ ու տաք,
Մեկը մեկից վառ ու հստակ:

Կրծքի ներքո սիրտը թնդուն
Կարծես անվերջ նույնն էր պնդում՝
Երաժշտի՛ր.
Ամենակույ խորշակի դեմ ու երաշտի՛
Երաժշտի՛ր.
Թշնամու դեմ ահեղացող,
Օղակի դեմ հար նեղացող,
Ընդդեմ նրա երգի, ծայնի, նրա շեջտի՛
Երաժշտի՛ր.
Մինչև մահդ հրաժեշտի՛
Երաժշտի՛ր:

Երաժշտում և դեռ պիտի
Հորդարխուն երաժշտեր,
Վիշտ երգելով՝ ցրեր վշտեր,
Հույս երգելով՝ հավատ շեշտեր,
Մուտը հերքած՝ չիշտը ձշտեր,
Քայց... մի ահեղ գիշերվա մեջ
Արյուն հազան կանաչ դաշտեր,
Եվ հույս, հավատ, կյանք ու անտրջ
Օր-ցերեկով հանկարծ դարձան մի վատ երազ.

Օդում կախվեց
Աշխարհակույ մի պատերազմ...

ՂՈՂԱՆՋ ՑԱԳՆԱԳԻ

Օդում կախվեց աշխարհակույ մի պատերազմ,
Իսկ գարո՛ւն էր...

Լեռնաշխարհի կատարների
Չյունց՝ կիսված պատառների,
Արտասվում էր գլույ-գլույ,
Ծրջանցելով լեռ ու բլուր՝
Առու դարձած
Հոսում էր ցած
Ակնքա՛ն սիրած ու չսիրած բարձունքներից,
Եվ խառնելով պուտ-պուտ արցունքն արցունքն թի՛ն՝
Հովիտներում լացն էր փոխում հեծկլտոցի
Ու գալարքով վիշապ օձի
Չոք ու կիրճ էր իրեն գցում.
Դառնում էր գետ, մի գետ ելմա՛ն,
Ու չէր գտնում խոսքեր ներման՝
Ծանրը խարված կնոջ նման...

Ողջ աշխարհում՝
Մահ ու արյուն,
Իսկ գարո՛ւն էր...

Փաղիկներն են աչքով անում այստեղ-այնտեղ,
Եվ ամեն թուփ, ամեն ցողուն
Դառնում է լար մի լուրովի, դառնում ստեղ՝
Երգուն քամու մատների տակ:

Օրդ՝ օրին, և օդն արդեն
 Մեղմ է այնպես, հողն այնպես տաք,
 Ասես համայն աշխարհով մեկ
 Մի մայր բարի, սիրագորով,
 Մանուկ հողն է ջերմացըրել
 Իր բերանի տաքուկ գուլով...

Մարտե՛ր,
 Ջարդե՛ր,
 Հո՛ւր ու Իրդեհ,
 Արնակուլու հազա՛ր սրտեք,
 Իսկ գարո՛ւն էր...

Եվ ջողակաթ առավոտներ
 Ջինջ ցողով են թրջում ոտներ,
 Թավ սաղարթով ծառեր զուգում,
 Ծաղիկներով ու կանաչով
 Պմնում ոչ թե լոկ արոտներ,
 Սարահարթներ,
 Այլ մինչև իսկ ոտնահարված արահետներ...

Ամենուրեք ջույրեր ու մայր
 Հարազատի մահ են կոծում,
 Իսկ մի թռչուն հիմա՛ր-հիմա՛ք
 Ինչ-որ ուրախ երգի համար
 Ողջ ժամանակ ձայնն է փորձում...

Աճեն ծառից՝ նոր մի տաղիկ,
 Ամեն քարից՝ նոր մի խաղիկ,
 Եվ գաշտերում՝ ջաղն է ջողում,
 Ու ծաղիկներ են փողփողում,
 Իսկ մի համեստ ծնկածաղիկ
 Աշխատում է ոտքի ելնել՝
 Մի կերպ շուկել ծոված ցողունն
 Ու... ո՛չ մի կերպ չի հաջողում...

ՂՈՂԱՆՋ ՆԱԽՑԻՐԻ

Ծնկածաղկի պես

Մեզ էլ չաջողվեց ոչ միայն նորից
 Յուկել վեցդարյա ցողունը մեր կոր,
 Այլ բարբարոսի նույն դաժան ձեռքով
 Ցողունն այս անգամ արմատից հատվեց.
 Հազկական հարցից Թուրքիան ազատվեց
 Հաղաստան երկրում հայ չթողնելու մի անեղ ելքով,
 Որ ոչ լաված էր, ոչ էլ տեսնված
 Մարդկային ցեղի երբևէ կրած անպատվության մեջ
 Եվ մինչև անգամ իրենց՝ թուրքերի
 Արյունով հունցված սև պատմության մեջ:

Մի ո՛ղջ ժողովուրդ մեկ-մեկ թրատել,
 Մի ամբո՛ղջ անտառ արմատից հատել...

Եվ կույսեր, որոնց ծոցի մեջ լուսե
 Լուսնի լույսն անգամ ծածուկ չէր հոսել,
 Որ երկչոտ էին, ինչպես եղջերուն,
 Որ աննյութ էին, ասես հորինված
 Մի հովվերգական վեպի էջերում.

Աղջիկներ,

Որոնք անպարկեշտ բառից ու շոյիչ խոսքից
 Երկնքի նման բռնկվում էին շիկնանքով ոսկի.
 Ամոթխա՛ծ, մաքո՛ւր, լուսավո՛ր կույսեր,
 Որ ֆրանսերեն անգիր գիտեին
 Լամարթին, Վիյոն, Ալֆրեդ դը Մյուսե

Եվ անգլերեն

Խենթ Օֆելյայի տրտում երգն էին արցունքով ջրում, —

Օֆելյայի պես այժմ ցնորված՝

Խելագարվածի իրենց ճիչերում

Պարծյալ մոռանալ չէին կարենում ա՛յն դժոխքը սև

Եվ բռնաբարող ա՛յն ասկյարներին,

Ա՛յն ենիչերուն,

Ա՛յն անասունին ասուն, բայց անբան,

Որի բուք գլխի կեղտոտ փոչերում

Եթե խլվում-շարժվում էր մի բան,

Ապա մարդկային մի՛տքը չէր, օ, ո՛չ,

Այլ... միայն ոճի՛ր:

Մարդի՛կ, որ չունեն մարդկային ոչինչ,

Մարդի՛կ, որ մա՛րդ չեն,

Այլ ավելի շուտ մարդակերպ կապիկ.

Որ լոթ տարին մեկ չեն տեսնում նույնիսկ օձառի երես,

Տասը տարին մեկ չեն փոխում շապիկ,

Եվ սուր բահ է պետք,

Որ մարմինների սև տարթը քերես, —

Հիմա ամենուր

Նորապսակի սուրբ առագաստն են պղծում անպատիժ,

Հայոց մայրերին անում անպատիվ...

Լիկվոզները թող գողան «հրե՛շ»,

Սակայն ո՛վ գոչի ու լուծի վրե՛ժ,

Թե տղամարդիկ՝

Հեռու և մոտիկ՝

Պարծել են արդեն լեշ ու փորոտիք...

Եվ մարդի՛կ,

Որոնց բիրտ պճեղների քրտնջահոտից

Անգամ հուպուպը իր շունչը կտար,

Ճխլտում էին նույն այդ ոտներով

Մեր մանուկներին դեռ նորաստոտիկ,

Մեր մանուկներին՝ լույսի պես արդար,

Առավտի պես մաքուր ու գերող,

Գարնան պես բուրդոլ...

Եվ մարդիկ, որոնց աչքերը ճպոտ

Հիջեցնում էին ոտաց ճանապարհ,

Եվ որոնց միտքը — դավաճանաբար —

Չէր կտրում այնքա՛ն, մինչևիսկ այնքա՛ն,

Որ այդ ճպոտմից կարող են փրկվել,

Եթե... լվացվեն օրը մեկ անգամ, —

Միևնույն մարդիկ

Մեր սուրբ մայրերի հանձարներ սնած ծիծն էին փրթում

Եվ՝ չգոհացած սառն ու տաք զենքից՝

Մոր աչքի առջև

Քարերով էին փշրում ու շարդում

Գանգերը նրա՛նց,

Ովքեր ստեղծում

Ու բանաստեղծում,

Հրաջքներ էին աստծու պես կերտում,

Եվ եթե աստծուց տարբերվում էին,

Ապա այնքանով,

Որ նա անգո էր, իրենք՝ իրական:

Եվ հիմա սակայն

Չեղքն անասնական

Չնշում էր և այդ տարբերությունը,

Չնշում էր քարով.

Հայոց աշխարհի հայկական քարը

Ջարդում-փշրում էր հայոց քանքարը...

— Ո՛վ արդարություն,

Թող որ ես թքեմ ձակատին քո բաց, —

Գոչել էր մեկը քարերով շարդված այդ հանձարներից,

Գոչել ո՛չ հիմա,

Այնժամ էր գոչել,

Երբ խուժանն այս նույն
Արյունով հարբած գազանի նման
Դրո՛վելով միայն վայրենուն հայտնի իր պատճառներից,
Ո՛րերորդ անգամ մոխիր էր թողնում
Մեր արտ ու այգուց, մեր տաճարներից:

Եվ հիմա՛,
Հիմա՛,

Երբ կոտորա՛ծ չէր, երբ ջա՛րդ չէր,
Այլ մա՛հ՝

Մահ համատարա՛ծ և համազգայի՛ն,

Մահ ծերի՛,
Մանկա՛ն,
Խեղճի՛,
Հսկայի՛,

Երբ մահվան մրրիկ,
Երբ մահվան բուք էր,—

Այլևս որտե՛ղ, որտե՛ղ էր թուրք,
Որ արդարության ճակատը փակեր:

Ա՛խ, չորացել էր հայոց աշխարհի բերանն ու բուկը:

Էլ ինչպե՛ս թքել,
Եվ այդ ո՛վ թքեր,

Թե հայոց երկրում էլ մարդ չէր մնում,
Բովանդակ մի ազգ թե կուլ էր գնում
Թուրք յաթաղանի պաղբոց պողպատին,
Հայոց հայալիք Տիգրիս-Եփրատին,
Ան արաբների շեկ անապատին՝

Օ՛րը ցերեկով,
Ոչ թե աննկատ:

Եվ ունեցե՛լ էր արդարությունը երբևէ ճակատ:

Օ, ո՛չ, նա ուներ միմիայն քամա՛կ,
Ջամա՛կ մի խելոք,

Որ շուտ էր տվել մի բնաջնջվող հինավուրց ազգի՝
Նախապես նրան գրկելով զարկող ու փրկող բազկից:

Ու թե կար ճակատ,

Դա ոռա-տաճկական այն ճակատն էր լոկ,

Որ մոտենում էր՝
Աես լսելով
Կտրվողների,
Կոտորվողների
Ահավոր ծիչը,

Եվ—ճեկ էլ հանկարծ— չգիտես ինչու,

Բռնում էր ծամփան արագ նահանջի՝

Թույլ տալով իջնի
Եվ զարկը վերջին,

Կարծես եղածը դեռևս քիչ էր...

Եվ սակայն նրանց մեղքն ի՞նչ էր, ի՞նչ էր,

Անաստվա՛ծ աստված,

Ինչո՛ւ էր արվում այնքան անօրեն

Եվ ահեղ մի դատ:

... Կար երկաթուղի,

Որ պիտի անցներ Բեռլինից—Բաղդադ:

Բայց ինչպե՛ս անցներ անապատներով այն արաբական,

Որտեղ կանաչը կայարանների դեմքը չի պատում,

Որ չկան շեներ, ավաններ ու տուն:

— Մեղքը հայի՛նն էր, որ հոժարակամ

Ձեր գնում ապրի շեկ անապատում,

Ձեր լքում բնիկ հայրական տունը,

Իր բազմադարյան շենն ու ավանը՝

Ամուր Կարինը, անառ Սասունը,

Իր ծոցվոր Մուշը, պտղած իր Վանը...

... Բովանդակ մի դար, դարուց ավելի՛,

Ցենչանքն էր կիզում ոռուաց նավերին.

Իրենց ծնառատ ու պաղ հյուսիսում

Երազում էին, կարոտով հիշում

Լուսեղ արևելք, արևոտ հարավ,

Ու խենթ տուփանքի խոսք էին բանում
Այն Դարդանելին՝ պշրուհուն պառավ,
Որ չէր դիմանում
Առանց հոմանու,

Քաղց սրանց — ինչո՞ւ — թողնում էր ծարավ,
Նազը՝ նազ, սակայն... հետո՞, ի՞նչ դառավ, —
Եվ ահա ոռուներն է՛լ չեն դիմանում:
Մեղքը հայի՛նն էր.

Նա թուրքի աչքին այլ բան չէր թվում,
Ջան հաջող քամի

Եվ մի առագաստ, որ ինքն է պարզվում
Մոսկովի կայմին...

... Այս շարժիչների թանկ-եծան դարում
Նավթի փոխարեն — ի ցավ խեղճ հայի —
Գնա Անգլիայում ջուր չէին վառում:
Թողո՞ր ծովերը՝ նույն Անգլիային,
Մինչդեռ նավթի ծովն, ա՛յ, Մուսուլումն է:
— Եվ մեղքը ո՞ւմն է, —
Իհա՛րկե հայինն...

... Արդեն օսմանյան կալվե հսկայի
Ծեփն է ճաքճքվում
Ու մեշքը ճկվում՝

Քանականության տաքուկ շողերից.
Ռումին ու բուլղար, սլովակ ու սերբ
Պոկվել են նրա կալվե կողերից:
Նույն աններելի մտքին է հակվում,
Նույն ախտով նաև հայն է վարակվում՝
Իր մասն է ուզում իր իսկ հողերից,
Յրո՞ջ է ուզում իր այն փողերից,
Որ հափշտակել

Եվ ճչալ ուզող բերանն են հետո քացիով փակել:
Ու դժգո՞հ է նա,

Եվ ա՛յց է ուզում անխոս ակնարկել:
— Ուրեմն պարզ է. նա հանցագործ է,
Եվ պիտի ջնջվեն իր եզն ու որձը:

... Եղունգ են քերծում, պտղունց են մաշում,
Ժայռից վանք կերտում, քարից նուռ տաշում,
Դարպասի աչքին հոնք-կամար քաշում,
Արձան են ձուլում, ջինում ապարանք:
— Եվ մեղավոր են այստեղ էլ նրանք...

... Հաշիշ չեն ծխում,
Խմում են գինի,

Ապրում անթալան է առաքինի,
Չեն պահում հարեն,
Ոչ էլ ներքինի,
Եվ չունեն մոլլա,
Որ կապի չալմա.

Նրանց քեշիքը վեղարավոր է
— Եվ... մեղավոր են...

... Չեռքի հետքերը նրանց հայրերի
Կնիք են դրել այս նույն վայրերին՝
Իբրև սեպագիր
Կամ շաղախ ու կիր,
Իբրև շիրմաքար
Կամ որմնանկար,
Իբրև մազաղաթ
Կամ լեռձակ-ջրանցք...
— Եվ ո՞ւմն է մեղքը, —
Իհա՛րկե նրանք...

... Ինչպե՞ս չկտրել այն կոկորդը չար,
Որ ցավից հանկարծ կարող է ճչալ,
Կարող է հայցել փրկություն ու ճար...

... Պիտի ազատվել այն լիրք աչքից էլ,
Որ երազանքից ջողում է պայծառ
Եվ կամ մատնում է ապրած կսկիծը
Ու դրանով իսկ դառնում է պատճառ,
Որ օտարները... լացողին խղճան՝
Տեսնելով նրա աղի արցունքը...

... Ինչպե՞ս չջարդել հանցավոր ծունկը
Եվ այն մեղսակից համառ արմունկը,
Որոնց հենվելով՝ մարդը արնաքամ
— Եվ զազա՛նն անգամ—
Ուզում է դուրս գալ ծանտ գերությունից...
Ուրիշ ավելի հանցավոր բան կա՞:
— Դե եկ, մի՛ էլնի համբերությունից,
Դե եկ, թուրքօղի՛, ցավից մի՛ վնգա...

... Կյանքում կան բաներ, որոնք չեն քերվում,
Ինչպես չի քերվում արյունը սրտից
Կամ գույնը վարդից:
Կյանքում կան բաներ, որոնք չեն ներվում
Ինչպես դրացուն,
Այնպես էլ համայն մի ժողովրդի:
Չի ներվում և այն,
Ինչը կոչվում է առավելություն...
— Եվ այդ ահռելի հանցանքի դիմաց
Դեռ պահանջում եք ներման վեհություն՞ն...

... Նրանք գիտեին սիրել ու ատել,
Գիտեին խորհել ու համեմատել,
Խույս տալ ցավերից, դավերից ծպտյալ,
Ծարավել լուսին, արևին ծպտալ:
Թե անսահման էր նրանց տանջանքը,
Անծայր էր նույնքան և անրջանքը:
— Ահա՛ և նրանց ծանր հանցանքը...

... Ունեին նաև մեկ ուրիշ հանցանք,
Որ ահավոր էր:
— Գիտե՞ք, թե որը.

Երբ մարդ ոչ մի կերպ չի կարողանում
Ընդմիջտ մոռանալ մի հիմա՛ր անուն՝
Ի՛ր իսկ անունը և ազգանունը:
— Ի՛նչ հանդգնություն, դուք հասկանա՞նք...
Եվ նա ուզում է նույնիսկ չդատվե՛լ,
Խուսափել արդար կարգ ու կանոնի՞ց:
Ուրեմը... պիտի ա՛յլ կերպ ազատվել
Այդ լիրք անունից և ազգանունից:

Իսկ դա անունն էր մի ամբողջ երկրի,
Ո՛րը մի ազգ էր դա կրում ու պահում...

Եվ քաղաքակիրթ այն Եվրոպայում,
Ուր ով ծանոթ էր հայոց հին գրին,
Հայոց պատմությանն ու պատմագրի՞ն,
Դառնում էր դոկտոր ու պրոֆեսոր՝
Դեռ օրը նույնիսկ չդարձած կեսօր...
Եվ քաղաքակիրթ այն Եվրոպայում,
Ուր մարդկայնության փութանց նուպապա՞մ
Ծատերի համար դարձել էր փեշակ
Մեզ երկի՛նք հանել՝
Հային անվանել
Ասիական մթնում գիտության մշակ,
Է՛լ ջահ, է՛լ կերոն, է՛լ միակ փարոս,
Իսկ թուրքին կոչել բիրտ ու բարբառո՞ւ՝
Իրենց համեմատ այնքա՛ն վայրենի,
Որ պետք է նրա հողը հայրենի
Վաճառքի հանել
Կամ մեջ-մեջ անել,
Որպեսզի... հողը չմնա խոպան, —
Հիմա լուսավոր այդ նույն Եվրոպան

Ատանց ջիկնանցի այնտեղ էր հասել,
 Որ ժառանգներին Կարմիր սուլթանի
 Գասեր էր տալիս՝
 Եղեռնի՛ դասեր,
 Գասեր նախճիրի՛, բարբառոսությա՛ն,
 Իրեն պահելով... դերը բոզության:

Ազդ նո՛ւյն Եվրոպան
 Նման չէ՛ր հապա
 Հաքթած-արնախում այն թուրք զինվորին,
 Որ ճանճրանալով զաներից նարդու
 Կամ թուրք խաղալուց,
 Իր թուրք դրած հայ հղի կնոջ սուրբխորան փորին՝
 Պրազ էր գալիս, թե ի՛նչ կրերի.
 — Աղջի՛կ, թե տղա, —
 Եվ մանկաբարձի նշտարի տեղակ
 Թարն էր կատարում կեսարյան հատում...

Իսկ նա կին չէր, ո՛չ, այլ Մայր Հայաստան,
 Որի սրբազան ու տաջ արգանդում
 Մի լույս մանուկ էր սկսում խաղալ,
 Մի վանագնակերպ-դավթադեմ տղա,
 Որ հղացել էր փրկության լույսից
 Ու սնվել էր մեր անմոռուկ հոպսից՝
 Այն մանապարհին, որ դարավոր էր,
 Ծանր ու խորդուբորդ:

Քայց Եվրոպան էլ ուներ ճանապարհ
 Եվ, որպես ճամփորդ
 Նա... կովացըրեց իրար հետ շներ,
 Որ իր՝ ճամփորդի բանը հաջողի:
 Իրոք, ի՛նչ էլ որ լիներ-չլիներ,
 Քայց պակաս չկար շան պես հաջողի:
 Եվ այս շնային զգվոտուքի մեջ

Ծան թաթերի տակ քիչ մնաց կորչեր
 Մի ո՛ղջ ժողովուրդ՝
 Բնի՛կ,
 Տեղական.

Մագ մնաց դառնար թղթե տեղեկանք
 Մի ազգ, որ կուռքեր շատ էր ճանաչել,
 Բայց որի... նույնիսկ տոտե՛մը շուն չէր,
 Այլ եզը հերկող,
 Այլ ջուրը երգող
 Եվ ամպրոպաձին փողը՝ եղեգան...

Ու երկրագնդի այն ծանոթ մասում,
 Որին Հայաստան, Հայք էին ասում
 Փարավոններից մինչ Պուանկարեն,
 Հիմա Օսմանի թոռները բոի
 Վիլիելմ կայսեր հետ ուզեցին քերել
 Դարերով հնչող «Հայաստան» բառի
 Բոլո՛ր տառերը,
 Նրա ապագան,
 Մշահոտ ներկան
 Եվ մինչև անգամ... անցած դարերը:

Եվ համարյա թե իրոք քերեցին,
 Իսկ Գլաղըստոն — Ջորջ Լյուդները
 Չխանգարեցին...

ՂՈՂԱՆՋ ԵՂԵՌՆԱԿԱՆ

Խանգարե՛լ: Ինչի՞ համար...

Գարուն էր: Չեկած ամառ՝
Փոլ էկավ երկնակամար,
Չյուն մաղեց մեր բաց գլխին,
Չյուն մաղեց՝ կրակի՛ պես...
— Գարուն ա, ձուն ա արել...

Գետերը մեր երերման
Հոսեցին՝ երակի՛ պես...
— Արունը ջուր ա դառել...
Չորերը չիրիմ դարձան,
Վիհերը՝ գերեզմանոց.
— Ջուրը մեր տունն ա տարել...

Ամեն քար՝ լուռ մահարձան,
Ամեն տուն՝ վառման հնոց.
— Բնավեր հավք ենք դառել...

Ինչքան բառ՝ ո՛ղջը մրմունջ,
Ինչքան երգ՝ ո՛ղջը լալով.
— Ջուլում էր, զուլում, լառ'...

Թրի դեմ, սրի, հրի՛
Լոկ մանգաղ, լոկ բահ ու մած.
— Տապե՛ր-բնավե՛ր լաճ...

Մեր հողը, մեր հայրենին,
Մեր երկիրն ամայացավ.
— Ան՝ հագիր, սևսիրտ մարե...

Հինավուրց տոհմիկ մի ազգ
Չմեռա՛վ, այլ... մահացա՛վ.
— Գարուն ա, ձուն ա արել...

Գարուն էր: Ամառ եկավ,
Չագ հանեց ձորում կաքավ,
Իսկ հայը գրկվեց ձագից,
Իր պոռթկան թոնրի տաքից,
Իր մորից, հորից, լարից,
Իր բնից ու աշխարհից.
— Գարուն ա, ձուն ա արել...

...Ա՛խ, ինչպե՛ս, ո՛նց մոռանալ
Արհավիրքն այն օրերի.
— Աշխարհում ով մոռանա՛
Ջուխտ աչքով թող ջրոտանա...

Գառնարած-հովիվ-նախորդ
Ետ չեկան սար-ձորերից...
Կեսօրին էլ ո՛վ երգեր.
— Սարերը հով չեն անում,
Իմ դարդին դարման անում...
Հնձվորը արտում մորթվեց
Իր ձեռքի սուր մանգաղով...
Խեղճ հարսը էլ ո՛նց երգեր.
— Զաղվորին հաց եմ բերում...
Բերանը բաց եմ բերում...

Չկնորսը Վանա ծովում
Չփրկվեց ճարպիկ լողով...
Ա յշիկը գո՛ւր էր կանչում.
— Իմ ծամթել տամ լողվորչուն...
Երկրի մեջ մարդ չմնաց՝
Մարդ թաղեր մարդու նման...
Ա՛խ, մնար մե՛կը զոնե

Ու կանչեր.

— Դէ լաման...

Ա՛խ, ինչպե՛ս, ո՞նց մոռանալ
Արհավիրքն այն օրերի.

— Աշխարհում ով մոռանա՛
Ջուխտ աչքով թող քոռանա...

... Ջահերը վառ մնացին
Ժամերգվող եկեղեցում,
Ժամհարին կախ տվեցին
Պարանից զանգակատան...

Ջաղացից աղուն բերող
Ալրոտված խեղճ գյուղացուն
Իր սայլը դագաղ դարձավ,
Ալլուրը՝ արնոտ պատան...

Մայրն ընկավ՝ ծիծը թողած
Իր թմփլիկ մանկան բերնում,
Ծծի տեղ ցից խրելով՝
Խեղդեցին մի՛նումարին...

Տատն ընկավ՝ ձեռքը մեկնած
Կչկչան հավի թառին.
Իր հիվանդ թոռան համար
Խորոտիկ ճուտ էր բռնում...

Կալի մեջ պապիկն ընկավ,
Իր ոսկե թեղն էր երնում,
Որպեսզի տուրքը թուրքին
Օր առաջ շուտ վճարի...

Ով ծաղիկ հաց էր թխում՝
Խորովվեց թոնրի ծխում...

Ով հասել ուխտատեղի,
Վառել էր մոմը դեղին,
Մոմի դեմ իջել էր ծունր
Ու հայցում էր աստըծուն,
Որ բաշխի մի լաճ տղա,—
Իր արյամբ մոմը մարեց՝
Չավարտած «Տե՛ր, քեզ մեղա՛»-ն...

— Գարուն ա, ձուն ա արել...

... Խոցեցին ու ջնջեցին,
Հատեցին հաստ ու բարակ,
Հոշեցին ու տանջեցին,
Փշրեցին, տվին կրակ,
Վաթեցին արյուն-արցունք,
Ներկեցին ձոր ու բարձունք,
Քանդեցին երկինք մի լուրթ,
Մորթեցին մի ժողովուրդ,
Հացառատ մի ողջ աշխարհ
Սարքեցին փշրանք-նշխար,
Սո՛րբ նշխար՝ շա՛ն բերանում,—

Ուզեցին մեկ հայ թողնել,
Եվ այն էլ... թանգարանում...

— Գարուն ա, ձուն ա արել...

ՂՈՂԱՆՋ ԱՔՍՈՐԻ

Իզո՛ւր աստժուն պաղատեցին...

Այա՛ն-թալա՛ն,
Կեռ յաթաղան...

Ում որ պետք էր՝ փողոտեցին,
Գազանաբար ճղոտեցին,
Խողխողեցին սրածելով.
Քարափներից ջուրն ածելով՝
Դիակներով խեղդվողների
Ծանրացրին հոսք ու հոսանք.
Չհարցնելով մանուկ ու ծեր:

Եվ ո՛վ կոծեր,
Կուրծքը ծեծեր.

• Էս ի՛նչ քլաֆուր դարի հասանք...

Իզո՛ւր աստժուն աղաչեցին...

Թե բյուրերով հայ խաչեցին,
Հագարավոր այր ու կանանց
Անդող ձեռքով տեղահանած՝
Քշեցին... ո՛ւր,
Դեպի Դեր-Ջոր:

Մերկ ու բոբիկ, խեղճ ու անզոր՝
Անցան նրանք ավազներով արաբական անապատի,
Մի շիրմուղի, ուր ամեն քայլ դիակներով ուղենշվեց,

Եվ նորացավ նո՛ր Գողգոթան՝
Ահագնացած տասնապատի՛կ...

Մեր փրկության աղաղակներն անցան իզուր,
Իզո՛ւր հնչեց ողջ աշխարհով մի ահագանգ,
Որ լոկ դարձավ, վերջ ի վերջո, թառանչ մի սուր.
— Էս ի՛նչ քլաֆուր դարի հասանք...

...15 թիվ: Ապրիլի 10...

Ապրիլական արբշիռ բույրեր,
Գարնանային ծաղկածլում,
Կանաչների ջջահանդես, —
Եվ... ծաղկաբույր գիշերվա մեջ
Հեռուներից մոտենալով
Գաղտագողի-ծածուկ-անտես՝
Խորշակը նույն,

Որ ջատ ջուտով պիտի տաներ միլիոն հայեր,
Խորշակը նույն անցավ նաև
Պոլսո թուր՝ հայ թաղերով՝
Իր հրեղեն ոտների տակ
Խաջխշելով ու թաղելով
Վերջին հույսի շունչը մեր տաց...

Ահե՛ր գիշեր,

Որ բոբր ներկվեց ո՛չ արևով,

Այլ մեր արլա՛մբ,

Ու կողոպտեց խորանները հայ կամատի,
Խորանները հայ դպրության սուրբ տաճարի,
Բուրբ ճյուղերը կտրատեց
Հայ հանձարի
Ծաղկուն ծառի.

Ու մատյանից հայ մեղեդու
Ամենավա՛ռ էջը հատեց...

Եվ անուններ, որոնք երեկ
 Հնչում էին փառաքշական մասնիկներով
 Մերձավորի ու մտերիմ բարեկամի սիրող շրթից,
 Ու հիրավի հպարտության տրոփ պոկում
 Մի բովանդակ ժողովրդի լեցուն սրտից,—
 Թե կյանք էին՝ հիմա հանկարծ դարձան անգո՝
 Մի գիշերում, բարբարոսի կամք ու ջանքով
 Ու մղումով անզսպելի
 Փոխարկվեցին առասպելի.
 Ապրող մարդուց հանկարծ դարձան
 Մի մտովին կերտված արձան...

Ա՛խ, Բերայի Բանկայթի թաղ...
 Ա՛խ, Ղալաթիո եռատաճար եկեղեցի...
 Զո դարավոր զմբեթի տակ
 Իրիկնային ժամերգության սուրբ պահերին
 Պատարագիչ Կոմիտասին չէ՞ որ երեկ
 Լսում էին հիացմունքով Ջոհրապ... Սևակ...
 Զանքարալից հազար գլուխ՝
 Փոքր ու ավագ,
 Միահավաք

Հակվում էին հայ մեղեդու սրբության դեմ
 Ու հղանում նոր մեղեդիք՝
 Հնչյուններով, խոսքով, գրչով,
 Արձանակերտ նրբին մրճով՝,
 Երանգների պնակի՝ մեջ,
 Հետո, մեկտեղ ակըմբվելով
 Բանկայթի այնքա՛ն ծանոթ
 Ու սիրելի տնակի՝ մեջ՝
 Խնդրում էին Վարդապետին՝
 Երգել Կոունկ կամ Խնկի ծառ,
 Երգել Չինար ես...

— Չինար ես՝ կեռանալ մի...
 Մական ինչպե՛ս չկեռանաս,
 Երբ կացինն է բունըդ տաշում,
 Երբ սղոցն է ճյուղըդ մաշում,—
 Դե՛, արի և
 ... Կեռանա՛լ մի:

Ի՛նչ.

— Մեր դո՛ւնեն հեռանա՛լ մի...
 Ա՛խ, ո՛ր ջունք կհեռանար:
 Իսկ եթե ջուն, գալլ ու գագան
 Կամ անխնա սրի քաշում,
 Կամ աքսոր են բռնի քշում
 Ամբողջ մի ազգ՝ սասա՛ն-սասա՛ն,—
 Դե՛, արի և
 ... Հեռանա՛լ մի:

Ինչպե՛ս.

— Ասովա՛ծըդ կսիրես...
 Բայց ո՛ր է, ա՛խ, ո՛ր է ասոված:
 Եթե կույր ու խուլ է ասոված,
 Եթե «Գթա»-ն զուր է ասոված,
 Նման աստժուն ինչպե՛ս սիրես...

Ի՛նչ.

— Հեռու ես՝ մոռանա՛լ մի...
 Ո՛նց մոռանալ: Ե՛կ մոռացիր,
 Որ ապրիլյան այն ահավոր
 Ու ոճրապարտ լուսաբացին
 Բարբարոսի խուժողով ձեռքեր
 Սուրբ խորաններ կողոպտեցին՝
 Խորանները հայ կաճառի,
 Հայ դպրության սուրբ տաճարի.
 Հայ հանձարի

Ծաղկուն Ժառի

Բոլոր ոստերն անգթորեն կտրատվեցին,
 Սուրբ ժառայանից հայ մեղեդու
 Բոլոր եջերն ամենավառ
 Դարձան մուլի հողմին ավար,
 Մի գիջերում պոկոտվեցին ու գատվեցին,—
 Յեկ աջտորի սև փակուղուց չազատվեցին
 Ո՛չ մի հանձար,
 Ո՛չ մի տաղանդ,
 Ո՛չ մի քանքար՝
 Ով որ Պոլսում եղեռնական այդ գարնան կար...

Մարդիկ, որոնք կամքով վերին
 Անցնում էին և պիտի որ անցնեին դեռ
 Իրենց ժամփան անմահության ու սխրանքի,
 Բոլորը մեկ՝
 Հիմա արդեն կտրում էին ուղին մահվան,
 Ճանապարհը աջտորանքի...

Մի-մի քույրներ՝

Լեցուն բանիվ ու մեղեդով մեհենական,
 Հիմա պիտի ըմբռնվեն
 Թույնն ու լեղին գեհենական...

Դե՛, բերա՛ն բեր, որ չթքի,
 Եվ քարե սիրտ, որ չձաքի:

Ու ձգվում է ճանապարհը աջտորանքի:

Ձգվում էր նա հայ բրգացած դիակների ստորոտով,
 Միջահատված մանուկների թաղում հայցող բլրի մոտով...

Մարտիրոսված հայ մայրերի կոնքերը սուրբ
 Ուզում էին ամոթն իրենց անապատի փոշով ծածկել,

Դեղին փոշո՛վ,
 Ո՛չ թե փեշով,
 Որ և չկար,
 Ինչպես չկար ո՛չ սրբություն,
 Ո՛չ էլ աստված...

Լիկանքի մեջ նահատակված անմեղ կույսեր
 Ու լույս հարսեր
 Ջանում էին լանջերն իրենց ծածկել հողով անապատի,
 Դեղին հողո՛վ,
 Ո՛չ թե քողով,
 Որ և չկար,
 Ինչպես չկար ո՛չ սրբություն,
 Ո՛չ էլ աստված...

Դե՛, շրթո՛ւնք բեր, որ չանիծի,
 Դե՛, բեր բոո՛ւնք, պրկված կոո՛ւփ,
 Որ չդառնա քինահարույց կրքի խոյանք
 Ու մխրձվի երկնքի մեջ՝
 Իբրև նզո՛վք,
 Ո՛չ, ի՛նչ նզովք.
 Իբրև աստծու և երկնքի լիրբ հասցեին
 Մի առնական թունդ հայիտյանք...

Իսկ աջտորի ճանապարհը վախճան չուներ:

Ավերակված հայ շեներից,
 Իբրև նշան կենդանության,
 Ահագարհուր ոռնում էին անբուն շներ՝
 Հիմարաբար չըմբռնելով,
 Որ այսուհետ
 Շունը մարդուց ավելի է գերադասված
 Նրա՛նց կողմից,
 Որ կոչվում են մարդ ու աստված...
 13 Անլուելի զանգակատուն

Բեկված սնե՛ր,
 Այրված շենե՛ր,
 Եվ մարդկանցից գերադասված անտուն ջնե՛ր,
 Որ երեկվա իրենց տիրոջ
 Լուս դիակն են նախ հոտոտում,
 Ոռնում՝ կարծես այրող ցավից,
 Ոռնո՛ւմ, վնգո՛ւմ,
 Մե՛կ օր, երկո՛ւ,
 Հետո՝ մղված ծանր սովից՝
 Երեկ իրենց կերակրող ձեռն են ուտում,
 Գոմալու՛վ իրենց տիրոջ դին հոշոտում...

...Ճանապարհն այս դժոխային
 Կարող էր և անվերջ տևել,
 Բայց սարսափի օրն է մթնում,
 Եվ քարվանք արդա՛ր-արդա՛ր,
 Եվ քարվանք մահապարտյալ
 Չանկըրքի բանտն է մտնում:

Բանտ թուրքակա՛ն
 Եվ պատրաստված... հայի՛ համար.
 Զստմնելի լկանքների՛,
 Անպատվության՛,
 Ոչ թե արդեն երազելի մահի՛ համար,—
 Մի բախտ դժխեմ,
 Մի անողորմ ճակատագիր՝
 Հիմա արդեն ո՛չ անմարմին, ո՛չ էլ անգո,
 Այլ զնդանի դուան առաջ պահակացած
 Թուրք ասկյարի արյունկզակ կերպարանքով...

Եվ այդ պահին.
 — Տե՛ր, ողորմեա՛...

Առավել, քան երբևիցե,
 Եվ ավելի, քան այլուրեք,
 Այնքա՛ն տեղին, ժամանակի՛ն,
 Ա՛խ, Վարդապե՛տ, գուր է հայցում
 Տխրալալուկ ամբողջ մի ազգ
 Զո սևասուգ սուրբ բերանով.
 — Տե՛ր, ողորմեա՛...

Եվ զնդանում նեղ ու անձուկ
 Պղպըջում է մի լայն փղձուկ,
 Մի տաք փղձուկ տղամարդկա՛նց,
 Որ եղեգան իրենց փողով
 Թունդ են հանել սիրտը դողով.
 Որ սրտառուչ իրենց տողով
 Ու երգերով իրենց թովիչ՝
 Գարնա՛ն նման լուկ վրդովիչ,
 Ծայր են տվել շիթ արցունքի՝
 Ո՛չ թե ցավի կամ տրտմության,
 Այլ հուզառատ հիացմունքի՛...

— Յաղագըս հարց, եղբարց մերոց,
 Որք են տարեալ ի գերութիւն,
 — Տե՛ր, ողորմեա՛...

Իսկ հայրերը արդեն չկա՛ն,
 Եղբայրներին թուր ու ձգան
 Վերջ են տվել սար ու ձորում,
 Որ ջրի պես ու ջրի հետ
 Տաք արյունն է նրանց ծորում...

— Ծիջո՛ գիւր վառ հնոցի,
 Փրկեա՛ զմեզ, ամենագո՛ւթ...

Բայց աղոթքից այդ ի՞նչ օգուտ,
Թե հնոցի
Ահեղ բոցին

Կուլ է տրված հայոց աշխարհն,
Ա՛զգը հայոց՝ ցախի պես խառն...
— Հայցեմք ի քեն արտասուելով
Եվ պաղատիմք զայս ասելով.
Տե՛ր, ողորմեա՛...

Ի՞նչ էր պահում վաղը նրանց՝
Հանձարավոր այս մեծ արանց,
Ի՞նչ մի վախճան բարբարոսի.
Անշուշտ՝ զոհի՛, ո՛չ հերոսի...

— Ընկալ զմեր աղաչանքս,
Լո՛ւր, գթառատ, և ողորմեա՛...

Ա՛խ, թե լսեր ու գթառատ եթե լիներ՝
Փազանաղեմ այս խուժանին նա կզինե՞ր
Ու շա՞ղ կտար դաշտ ու սարին՝
Ակնից—Արձեշ,
Վանից—Կարին...

— Ցո՛յց մեզ զքո ողորմութիւն,
Տուր աշխարհիս խաղաղութիւն...

Խաղաղություն...
Եթե այսպես գնար քիչ է՛լ,
Մեկ էլ տեսար՝ խաղաղությունն իրո՞ք իջել,
Վեր է ածել չեն աշխարհը մի շիրմատան,
Ուր այլևքս չեն էլ ճարվի ապրող մարդիկ,
Որ բյուրավոր հանգչողներին երանի տան...

— Տե՛ր, ողորմեա՛...

Ո՛չ, Վարդապե՛տ, ո՛չ, չողորմա՛ց,
Իսկ քեզ պատժեց պատժով մի նոր՝
Չառավ հոգիդ,
Ինչպես առավ նրանց հոգին,
Որոնք մյուս օր՝

Թիկադեղին անապատի ավազի պես ծարա՛վ-ծարա՛վ,
Աստվածային աչքերում՝ սով,
Չսնվելով նույնիսկ հույսով,
Անգամ թրից կամ գնդակից չխոցվեցին,
Այլ պարզապես... այլ պարզապես... քարկոծվեցին...

...Ի՞նչ էր արդյոք այն պատճառը,
Որ քեզ զատեց
Եվ անջատեց

Քո բախտակից ու սրտամոտ ընկերների դժխեմ բախտից՝
Քարկոծվողի սուղ դրախտից
Քեզ նետելով մի լայն դժոխք,
Ուր ո՛չ մահ կար,
Ո՛չ կյանքի շողբ:

Ա՛խ, նրանցից ինչի՞ համար քեզ զատեցին,
Քեզ— այդքա՛ն ուշ— ինչի՞ համար ազատեցին:

Եթե դա՛ էր ազատելը...

ՂՈՂԱՆՋ ՄԹԱԳՆՈՒՄԻ

Ա՛խ, եթե դա էր...

Գթառատ Տերը

Թո՛ղ որ ազատի իր ազատելուց...

Ինչ է դաշնամուր և ինչ է ստեղ՝
Մոռացան նրա ճարտար մատերը...
Ինքը Բանկալթու իր տան մեջ, այստե՛ղ,
Եվ Չանկըրըզի բանտի պատերը
Արդեն նրանից շատ-շատ են հեռու,
Բայց ուղեղի մեջ... բայց ուղեղի մեջ,
Կարծես թե կպած նրա թաղանթից՝
Մթան մի քույա եռո՛ւմ էր-եռո՛ւմ,
Մերթ իբրև ինչ-որ անմարմին գեռուն,
Մերթ իբրև ջրի խաշող գոլորշի, —
Պտույտ էր տալիս ծանր ու բոլորշի,
Պտույտ էր տալիս
Ու պոկ չէր գալիս...

Երբ անցնում էր նա Բանկալթու մայթով՝

Մի ձայն էր հնչում

Հաճախ ականջում.

Թվում էր՝ ձայնեց իր Միամանթոն,

Թվում էր՝ իրեն Պանիելն է կանչում...

Իրիկնանալիս իր տան սրահում

Թվում էր՝ տեսավ գենք ու զրահում

Այն վարազադեմ տաճիկ ասկարին,

Որ ձեռքը տարավ շիկացող քարին,

Ո՛ւ... ճչում էր նա,

Ճչում սոսկալի

Եվ իսկույն վառում մոմեր ու կանթեղ:

Վառում էր, նըստում: Ու մեկ էլ հանկարծ

Աչքերն էր շրջում այստեղից այնտեղ.

Արյո՛ւն էր թվում բոցը կանթեղի...

Ու փչում էր նա մոմեր ու կանթեղ...

Վեր-վեր էր թռչում հաճախ անտեղի,

Ավելի հաճախ... լինում էր այնտե՛ղ,

Լինում էր... այնտեղ՝ իր Հայաստանում՝

Կարինում, Մուշում, Վանա ոստանում...

Ինքը՝ Պոլսո՛ւ մեջ,

Իսկ մի՛տքը՝ այնտե՛ղ...

...Ասում են՝

Այնտեղ՝

Հայաստան կոչված անհայ աշխարհում,

Կուժկոտրուկները, որոնց մոմագույն ծաղկաթերթերից

Փռվում էր չորս կողմ գինու թանձր բույր,

Հիմա

(Եվ ընդմի՛ջտ)

Կարմիր են հագել

Ու գինու բույրը փոխարկել արյան մի ծանրը հոտի,

Որ գրգռում է քոչվոր քրդերի նախրի պնչերը:

Իսկ գեղեցկապաշտ բաղեղը կանաչ,

Որ չի փխորժում տգեղություններ,

Լուռ մազլցում է քարափներն ի վեր,

Որ իր սեփական կանաչ թներով

Արյամբ ողողված ժայռերը ծածկի,

Շղարշի քերձեր,

Որոնց դուրս պրծած ցցերից քարե,

Ինչպես ժանիքից,

Թեպետ չուզելով, բայց ծածանվում է պատմաբան քամուց

Հայ հարս ու կանանց երբեմնի գունեղ տարազից մի մաս՝

Արևի՛ց արդյոք,

Թե՛ իրենց կրած անլուր սարսափից

Այժմ գունաթափ, այժմ ճերմակած, —

Թեպետ չուզելով, բայց ծածանվում է պատմաբան քամուց,

Էբրն պատվավոր ինքնասպանության սպիտակ դրոշ...

Իսկ այն ծերպերը,

Որտեղ մազլցել չի կարողանում բաղեղը նույնիսկ,

Ու տեղ չի գտնում քարաքոսն անգամ,

Կարմիր ծերպերը՝

Մեկ՝ երկար, մեկ՝ կարճ սյուներով ճերմա՛կ,

Նման վիթխարի քարե բացօթյա մի երգեհոնի

Հայոց լեռների ամֆիթատրոնում, —

Իսկ այդ ծերպերը տնջում են խեղճ-խեղճ

Լսողությունից բոլորովի՛ն զուրկ,

Երգ ու նվագից բա՛ն չհասկացող

Բարբարոս քամու պաղ մատների տակ,

Երգեհոնի պես նույն տակտն են տնջում.

— Այս ի՛նչ պատահեց...

Այս ի՛նչ պատահեց...

Իսկ հիմար կկուն,

Որ իր թռչնային անթռիչք խելքով

Ջգում է թեպետ, բայց չի հասկանում, թե ի՛նչ պատահեց,

Միամիտ կկուն

Ամեն զարնան հետ ընդմիջումներով եթեր կճամփի

Իր հայրենական շաղանջանը հեռագրային.

Կո՛ւ-կո՛ւ-կո՛ւ (լսե՛ք),

Կո՛ւ-կո՛ւ (ի՛նչ եղաք)...

Ա՛խ, իզո՛ւր կկուն կազդանջանի.

Ովքեր մեռել են՝ չեն լսի նրան,

Ովքեր կցրվեն աշխարհի վրա

Մի բուռ գարու պես՝ հավերի առաջ,

Մի կուց արյան պես՝ պղտոր ջրերում,

Թեկուզն որսան ազդանջանը՝ սրտերո՛վ իրենց,

Բայց չե՞ որ, ավա՛ղ, չե՞ որ կարող են լոկ պատասխանել

Կարոտից մարող սրտի բաբախմամբ,

Կսկիծից թացվող թարթումով կոպի,

Ջայրույթից ուռչող երակի զարկով,

Սակայն ո՛չ երբեք

Ուրախ ու զվարթ վերադարձողի քայլով կենսաթինդ.

— Դո՛ւ-դո՛ւ (գալի՛ս ենք),

Դը՛ւ-դը՛ւ-դը՛ւ (եկանք)...

— Դե ե՛կ, Վարդապե՛տ,

Մի՛ խելագարվիր...

...Այնտեղ՝

Երկնաչու Սասնա լեռներում,

Ժայռեր ու ծերպեր մազլցելու մեջ

Ընկուզենիներն անգամ մրցում են իշայծյամի հետ՝

Նրանց ճյուղավոր եղջյուրների պես

Բուսնելով ժայռի մազուտ ձակատին...

Եվ այնտեղ՝

Սասնա սարում ու ձորում՝

Ժառի տերևին,

Փշերի վրա,

Մանանայի պես զազպեն էր ծորում,

Որ շինականը գար ու հավաքեր:

Սակայն... երկնային մանանան փոխվեց

Երկրային ահեղ մի պատուհասով...

Եվ հիմա այնտեղ՝

Հին ծովասարի քարերի վրա
Գառնարած Դավթի երկաթ տրեխի թողած հետքերում,
Ինչպես խաղալիք-փոքրիկ գուռի մեջ,
Անձրևաջուրն է քմծիծաղ տալիս
Պաղ կիսայուսնի ներում ակնարկող բառերի վրա...

Սասնա վիպական Մարութա վանքում
Ուխտավորի տեղ բուերն են տնջում՝
Այս փուչ աշխարհի բանը խորհելով...
Ընկույզի վրա ընկույզն է փտում.

— Հավաքո՛ղ չկա...

Ոչխարներ վայրի ու վայրենացած
Բարձրիկ սարերից անվախ իջնում ցած,
Հասնում են մինչև Մշո բաց հովիտ.

— Կրակո՛ղ չկա,
Նույնիսկ գո՛ղ չկա...

Խմորի տաշտում ցնկնում է կատուն.

— Նկատո՛ղ չկա...

Եվ տանու կովեր,

Թեպետ մոռացած գոմեր ու մսուր,
Ըստ սովորության
Տանջվում են սաստիկ

Իրենց սափորված-լեփլեցուն կրծից.

— Որ կթո՛ղ չկա—

Եվ խոյ բառաչով քարերի չեչոտ ափին են քսում.

— Որ խտո՛ւտ չգա...

Արջերն են լիզում Սասնա մանանան
Եվ փորկապ ընկած՝

Թավալ են տալիս հին տաճարների սուրբ խորաններում՝
Իրենց ոռնոցով Ձենով Օհանի տնազն անելով.
Էլ չեն վախենում Սասնա ծռերի ուրվականներից...

— Դե ե՛կ, Վարդապե՛տ,
Եկ ու մի՛ ծովիր...

...Լուսաստղն այնպես պայծառ է շողում Նեմրուփի վրա,
Աես աստղը չէ,
Այլ մի պղնձե նոր կլայեկած թաս է հովվական,
Իսկ Կաթընծիրը

Օտարերկրացուն պարզապես ճերմակ մի ամպ է թվում...
Եվ հայի որդին,

Հրաջջո՛վ փրկված հայի խեղճ որդին
Օտար ճամփորդի իր անձնագրով
Եթե երբևէ ոտքով համբուրի փեջը Սիփանա,
Թերևս պիտի Վահագնի ճամփան
Նո՛ւյնպես շփոթի ճերմակ ամպի հետ...

— Դե ե՛կ, Վարդապե՛տ,
Ու մի՛ ցնորվիր...

...Իջել է այնտեղ մի ծուլ լոռություն սարդոստայնային,
Որ հորանջում է՝ ականջ դնելով,
Թե ե՛րբ կշտացած գայլերը գոնե պիտի գկրտան.
Ինչքան չլինի՝ ձայն է կենդանի:
Եվ որովհետև գայլը սակավ է հազեցած լինում,
Էլ ի՞նչ է մնում,
Թե ոչ մրափել

Քուն բերող «շարքու» նվագի ներքո,
Երբ բախտը բերի՝
Տարվա մեջ մի օր

Այս բնակագուրկ վիլայեթը գան
Ջաբիթ-ստիկան...

Տարին մեկ անգամ մրափ հարուցող նվոցը «շարքու».
Ո՛չ ծիրանի ծառ,
Ո՛չ Սոկաց Միրզա,
Եվ ո՛չ Փեսին գովք,
Չպիտի ծորա Հորովել-ն այստեղ,
Ո՛չ Լուսնակն անուշ,
Ո՛չ էլ Կալի երգ.

Հայաստան կոչված անհայ աշխարհում
 Չպիտի՛ հնչի հայ պարեղանակ,
 Հայ երգ
 Ու խաղիկ...

— Դե ե՛կ, Վարդապե՛տ,
 Եկ ու մի՛ ցնդիր...

...Եվ գեշ գոմշի պես
 Գիշերը պիտի ծանրորեն պառկի՝
 Իր եղջյուրներին երկինքը պահած,
 Ու լուռ որոճա մի կերպ կուլ տված նախճիր ու ոճիր,
 Որ հեշտ չի մարսում անասո՛ւնն անգամ...
 Մուտի թանաքը
 Պիտի ողջ գիշեր եղեռնի մասին եղերերգ գրի,
 Բայց առավոտյան թանճըր թանաքը կշնջվի այնպես,
 Ինչպես... արյունը և Հարցը Հայոց...

Իսկ առավոտը...
 Նա ամեն անգամ
 Երեխայի պես աչքը կբացի միամտորեն,
 Եվ ամեն անգամ այնպե՛ս կթվա,
 Թե ոչի՛նչ-ոչի՛նչ կյանքում չի փոխվել.
 Ուր որ է մայրը բակից ծայն կտա իր քնկոտ որդուն՝
 Տնփոր խնցուռ շրմփ-շրմփոցը մի պահ կտրելով...
 Եվ գլուղի վրա նորից կալիքվի նախրի բառաչը,
 Այգիների մեջ ծովի հառաչը ծաղիկ կթափի...
 Ջուրը՝
 Մարգերի փխրուն թմբերը մկան պես ծակած՝
 Լորտուի նման առաջ կտողա...
 Մոտիկ արտերից,
 Առը շուռ տալիս,
 Խոփը կփայլի հայելու նման,
 Եվ շողքը կընկնի դրացու հարսի շարմաղ երեսին՝

Նրան մի վայրկյան ահաբեկելով.

— Ամա՛ն, այ ամա՛ն,—
 Այդ ո՛ր ջահելն է սիրտ անում նրա դեմքին շողք գցել,
 Իսկ թե իր մարդը իմանա՞ հանկարծ՝
 — Ամա՛ն, այ ամա՛ն,—
 Իսկ թե իր մարդը իմանա՞ հանկարծ՝
 Արյուն կթափվի...
 Իսկ առավոտը,
 Երբ ամեն անգամ աչքերը բացի,
 Մի պահ խաբվելով երեխայի պես՝
 Զիչ հետո արդեն նա իրեն կզգա հայի որբ մանչուկ.
 Կուզենա կանչել,
 Բայց ծա՛յն չի ելնի,
 Կուզենա լացել՝
 Արցունքնե՛ր չկան,
 Կուզենա գոնե— վերջապես— մեռնել,
 Բայց... մա՛հ էլ չկա.
 Ձե՞ որ սերում է Փոքրը Միերի «անիծված» սերմից...

— Դե ե՛կ, Վարդապե՛տ,
 Ու մի՛ խենթանա...

Մշո լայն դաշտում,
 Թայրից մինչև Թայր,
 Անվերջ կտուրա կարոտյալ քամին
 Եվ մեն-մի հատիկ երդիկ չի գտնի,
 Որ դուրս պոռթկացող ծովից խլելով՝
 Վայրի կատվի պես քինոտ գզգզի կծիկը նրա...

— Դե ե՛կ, Վարդապե՛տ,
 Եկ ու մի՛ գծվիր...

Բյուրակն էր կանչում,
 Օսմանցին եկավ

Եվ, թարգմանելով, Բինգյոլ անվանեց.

Տաս հազար աղբյուր,

Տաս հազար լճակ:

Եվ հիմա... հիմա

Այդ տաս հազարն էլ մարդ են երազում,

Որ գա ու թեքվի իրենց ակունքին,

Իրենց փունքին,

Իրենց հայելում իրեն տեսնելով՝

Ծարավը կտորի՝

«Օխա՛յ» ասելով, —

Թե չէ ի՛նչ աղբյուր,

Թե չէ ի՛նչ լճակ,

Թե չէ աղբյուր ես՝ լճակ կդառնաս,

Թե չէ լճակ ես՝ կդառնաս ճահիճ,

Կդառնաս տանը պատաված օրիորդ,

Մինչդեռ հարսնության առողջ բնագոյը խառտ է տալիս,

Մինչդեռ մայրական սուրբ հիվանդության

Նույնիսկ ծաղիկը թեժելուց հետո

Ջորը չի՛ անցնում...

Եփրատ էր կոչվում

Եվ... Մուրադ ասվեց.

Ջհանդամի գյո՛ղը, թող կոչվեր Մուրադ,

Միայն թե գետը գետություն աներ՝

Գերաններ տաներ

Եվ ոչ թե դիակ,

Աովուտի խրճեր, կոճղեր փի հաներ,

Եվ ոչ թե գանգեր, ուներ ու թիակ...

Միայն թե գետը գետություն աներ.

Գեղջուկը բաներ,

Տակեր ու ցաներ,

Գետն էլ իր ջրով մեկը տասն աներ,

Խոր քարափների ամայության մեջ

Նրա ջրերով աղորիք բաներ...

Բայց հիմա... հիմա

Էլ ի՛նչ վար ու ցանք,

Էլ ի՛նչ բան ու ջանք

Եվ էլ ի՛նչ ջրտուրք,

Էլ ի՛նչ ջրաղաց:

Ինչպես մտքի մեջ հասուն աղջիկն է տեսնում մատանի,

Գետն էլ կամուրջ է միայն երազում:

Ու... խեղճ եփրատը կամուրջ է տեսնում... լոկ երազի մեջ...

— Դե ե՛կ, Վարդապե՛տ,

Մի՛ խելագրկվիր...

— Զանի՞ ժողովուրդ Վանա լիճ ունի,—

Օտար գրքերում և օտար լեզվով

Օտար մարդիկ են այս հարցը տալիս,

Եվ ոչ թե Վանից գրկված վանեցիկն,

Որ հա՛րց չի տալիս, այլ հաստա՛տ ասում.

— Էս կյանքում՝ մեր Վան,

Էն կյանքում՝ դրախտ...

Ա՛խ, Բիայնայի ու Բզնունիքի,

Տուշպա և Վանա սրտաճև՛ ծովակ:

Վարագա սուրբ սար,

Սիփան ու Նեմրուք

Իրենց ստվերը— ոտկանի նման— նետում են այնտեղ

Եվ տառեխի տեղ

Որսում են գույներ, որ անո՛ւն չունեն,

Որ անո՛ւն չունեն...

Իսկ Այգեստանի բույրերից արբշիռ

Եվ Արտամետի հոտերից գինով՝

Խոր քուն է մտնում քամին Ոստանում,

Այն խնձորենու հոժ սաղարթի մեջ,

Որի պտուղը թափահարելիս

Լսում ես ներսից
 Չույլ կորիզների իրար զարնումը՝
 Դեղին սաթերի հատիկների պես:
 Փրկված վանեցին այսուհետ միայն իր երազի մեջ
 Կարող է լսել այդ ձայնը ծանոթ և օտարոտի...

— Եթե խելք ունես՝
 Եվ մի՛ թոցըրու...

Նույն Այգեստանում
 Ու նույն Ոստանում
 Եթե զարթնում է գինովցած քամին,
 Ապա զարթնում է ծոցվոր ծառերից կաթող մրգերի
 Թմփոցից միայն,
 Եվ գինովցածի մոլոր քայլվածքով լճափ է նետվում,
 Որ նրա ջրով քիչ զգաստանա:
 Ու տաքուկ քամու մոտիկությունից
 Լիճը — կնոջ պես — սրսըփում է լուռ
 Եվ, ամաչելով սուրբ Աղթամարից,
 Մեղա է գալիս՝
 Իր ալիքները ձեռքի պես մեկնած...

Ա՛յս, ալիքներն այդ,
 Այդ ալիքները...
 Հիգ ամիսներով ջուր ու օձառի երես չտեսած
 Տավարածն անգամ
 Թե մերկանալով մտնի Վանա ծով,
 Իրեն լավ թրջի ու դուրս գա ջրից՝
 Կեղտի ո՛չ մի հետք,
 Եվ մաշկը մեկեն թավիշ է դառնում՝
 Անցով երինջի կոնակի նման...
 Վանեցին ուրեմն օձառ չէր առնում
 Եվ հարստացավ ա՛յդ դրամներով,
 Թե՛ Ծամիրամի դարավոր առուն

Այգիների մեջ,
 Արտերի վրա,
 Հանդում ու ճորում
 Ոսկի էր փռում...

Ա՛յս, Վանա ծովակ...
 Երբ մուրթն էր թառում Սիփանա գլխին,
 Նեմրութի լանջին
 Եվ ուղղահայաց քարափին Վանա, —
 Ջնջելով անջինջ սեպագրերը, —
 Ծովակի վրա երբ մուրթն էր թառում՝
 Երկինքը համակ հեզ շուռ էր գալիս ջրերում ծավի,
 Եվ ալիքների աշխույժ խայտանքը չէր թվում ծփանք.
 Կարծես թե ջուրը
 Իր կաթսան ընկած շեկլիկ աստղերի հրից էր եռում:
 Բայց աստղե՛րն էին բոցկլտում այնտեղ,
 Թե՛ ազատվելու հուսահատ ճիգով
 Լող էին տալիս հազա՛ր ու հազա՛ր Վանա կատուներ՝
 Վառվող աչքերով,
 Թե՛ ցոլում էին հազա՛ր ու հազա՛ր քարեր թանկագին՝
 Ծարժելով Վանա ակնագործների նախանձը անկուշտ...
 Իսկ ամենից վերջ՝
 Երկնի ջատագով Մեծ Արջը իր մեծ փլավքամիչով
 Ցած էր կռանում,
 Անձայն ճողփյունով թաքուն ներսուզվում Վանա լճի մեջ,
 Որ... թարմացրնի նրա լազուրով
 Գոռոզ երկընթի գույները խամրած,
 Սակայն... քամիչի ծակոտիքներից
 Լազուրը նորից թափվում էր ներքև,
 Եվ Վանա լճի համեմատությամբ
 Երկինքը դարձյալ խամրած էր մնում
 Ու մի՛շտ կըմնա...

Ա՛յս, Վանա ծովակ,
 Բայց այն քե՛զ ինչ երկնքի խամրելն ու չխամրելը,
 Եթե քո շուրջը և քո քաղաքում
 Ծնդադըրել է խավարը խոժոռ՝
 Աղաթարարի ջերմեռանդությամբ,
 Որ չհամենա՛, այլ հարատևի՛
 Իր շողահալած իշխանությունը:
 Իսկ քո հեռավոր-մոտավոր քույրը՝
 Լիճը Սևանա՛...

Վարդապետ իմ խե՛ղճ,
 Բայց և բախտավո՛ր,
 Բայց և բախտավոր, որ չգիտեիր,
 Թե իր սեփական արյունի գևով
 Սևանա լիճը լույսեր պիտի տա ծերպերի՛ն անգամ՝
 Հարուցանելով քարայծյամների դժգոհությունը և փոշտոցը,
 Բայց և ո՛չ մի կերպ չկարողանա
 Լույս տալ մթնախեղդ քաղաքին Վանա,
 Վանա ծովակի խավար ափերին, —
 Նրա հեռավոր-մոտավոր քույրը՝
 Իր թանկ արյունը լույսի վերածած լիճը Սևանա...

— Դե ե՛կ, Վարդապե՛տ խեղճ ու բախտավոր,
 Եթե կարող ես՝ եկ մի՛ խևանա...

— Համայն աշխարհում
 Այդ քանի՞ երկիր Արարատ ունի, —
 Ո՛վ էլ որ չասի՝
 Աստվածաշունչը իր մագաղաթե դեմքը դեմ կանի
 Ու կասի՝ կարդա՛:
 Այդ քանի՞ երկիր Արարատ ունի:
 Իսկ Արարա՛տը...
 Է՛հ, անունը կա — ամանում չկա...

Վարդապետ իմ խե՛ղճ,
 Բայց և բախտավո՛ր,
 Բայց և բախտավո՛ր, որ չգիտեիր,
 Թե հայ կորովի երիտասարդներ՝
 Լեռնագնացներ բարձունքներ սիրող,
 Մասիսի դիմաց կնստեն գնացք,
 Որ գնան Վազբեկ,
 Էլբըրուս գնան,
 Լեռներ մագլցեն
 Նույնիսկ հեռավոր սահմանի վրա հնդկառուսական,
 Մինչդեռ Մասիսի լանջը կուսական
 Մատնե՛ր է տենչում՝
 Հայի տա՛ք մատներ,
 Որ հպվե՛ն իրեն,
 Իրեն զուրգուրե՛ն,
 Իրեն ունենա՛ն...

Ու դեռ կան հայեր,
 Որ հավատում են գոյությանն աստծո:
 Թող գիտությունը նույնիսկ պապանձվի՛.
 Աստծուն ժխտում է Արարա՛տն անգամ՝
 Աստվածաշնչի սրբազան լեռը՝
 Բախտո՛վ իր դժխեն...

— Դե՛, մի՛ թոցըրու խելքըդ, Վարդապե՛տ...

Վարդապետ թշվա՛ռ, բայց և բախտավո՛ր.
 Քո մտքով անցա՛վ, որ Մասիսն, այո՛,
 Մեր նոր ու վերջին ոստանի առաջ,
 Մեր հայրենաքաղց աչքերի հանդեպ,
 Վարժես թե դիտմամբ ու միտումնորեն
 Մեզ անխղճաբար պիտի գրգռի՛.
 Մեր փակված վերքը նորից-նոր բանա,

Մագնիսի նման անվերջ ձգելով՝
Գեթ մոտիկանալ թույլ չտա բնավ...

— Դե ե՛կ, Վարդապե՛տ,
Ու մի՛ խենթանա...

Ի՞նչ կա ավելի ծանր ու խղճալի,
Քան թե կսկիծը որդեկորույս մոր:
Իսկ եթե դա էլ քիչ են համարո՞ւմ
Եվ սպանվածի դիակը, դիտմա՛մբ,
Տնկում են թշվառ մոր աչքի առջև՝
Ո՛չ թե մի շաբաթ,
Այլ ձի՛գ տարիներ...

— Դե՛, եթե մայր ես, եկ մի՛ ցնորվիր...

Մեզ լավ է ծանոթ ծաղրուծանակը այս հոգեխարտիչ,
Դա ծանոթ է մեզ քանի՛ դար արդեն:
Մեր հայրենասեր թագավորներին ու հերոսներին
Այսպես պարսկական դահիճներն էին մորթազերծ անում,
Մեջը լցնելով դարման ու չոր խոտ՝
Խրտվիլակ շինում
Ու բռնի դնում
Մորթազերծվածին պաշտողի առաջ,
Որ... սքանչանան իրենք իրենցով...

Արարատն — այսպե՛ս — դրել են ահա Երևանի դեմ...

— Դե ե՛կ, Վարդապե՛տ...

ՂՈՂԱՆՋ ՅՆՈՐՄԱՆ

Եվ պատկերներից այս ահագարհուր, բայց և իրական,
Նախ ցնորվեցին աչքե՛րը նրա
Եվ ապա մի՛տքը, մի՛տքը տիրական...

Վայրի աղմուկի,
Խոլ աղաղակի,
Ժխտրի տեղակ

Մի գերեզմանվող լուռություն տիրեց նրա հոգու մեջ. —

Գլուխը նրա,

Որ մի երկնային լուսատու էր ցարդ,
Հիմա փոխարկվեց մի մոլորակի.

Նույնն էր արտաքուստ,

Բայց ինչպե՛ս, ինչպե՛ս, ինչպե՛ս էր նույնը,
Եթե լուսատուն... էլ լո՛ւս չէր տալիս...

...Նա չհասցըրեց զոհել Վարդանին
Գոռ Ավարայրի ծակատամարտում,
Եվ ինքը զոհվեց.

Ա՛խ, ո՛ր էր զոհն Վարդանի նման:
Մեր խաղ ու տաղի գորավարն ուժեղ
Վախճան ընդունեց՝ որպես նոր Մուշեղ,
Ում վերջին խոսքը նա գիտեր անգիր
Դեռ ձե՛մարանի առաջին տարուց.

— Բայց իբրև եհաս ինձ մահս վատթար,
Ո՛հ, թե՛ դիպեալ էր ի վերայ ձիոյ...

Մեր խարդախ բախտից՝
Նա չընկավ մարտում ու ձիու վրա.

Այլ զոհվեց անլուր դավաճանությամբ...

Մեր դժխեմ բախտից՝

Նա չհասցըրեց իր օսերայում

Թշվառ Անուշին խելացընորել,

Եվ ի՛նքը, ի՛նքը, ի՛նքը ցնորվեց...

Մեր դաժան բախտից՝

Սասնա ծռերին երգել չտված,

Նա ինքը դարձավ նոր Փոքրը Միեր

Ու դեռ կենդանի՛, ո՛ղջ-ո՛ղջ զնդանվեց

Հոգեբուժարան-Ազոավաքարում...

...Ով մազապուրծ էր մահից, Վարդապե՛տ,

Քեզ կորցընելու ցավից ահավոր

Աչքերս լիքը լաց ա... մրմնջաց,

Առանց խոսքերի և անեղանակ

Էրվում եմ, էրվում այրվելով երգեց,

Սակայն... անօգուտ:

Ով առուփախով, գաղթով էր փրկվել,

Անզորությունից կրկին մոռացած

Հայի անարդար աստըծո հանդեպ

Իր քենը արդար՝

Երկնքին նայեց լուռ պաղատանքով,

Սակայն... ապարդյուն:

Ինչ եկեղեցի, որ չէր ավիրվել,

Եվ ամեն տաճար,

Որ ժամերգվում էր դեռ հայ աշխարհում,

Պատարագիչի դողդոջ շուրթերով

Պահպանիչ ասաց՝ կյանքիդ ի խնդիր,

Սակայն... չփրկե՛ց.

Հայացքը կրկին անկենդան մնաց,

Գլուխըդ, որ ցարդ լուսատու էր մի,

Դարձավ մոլորակ՝ պաղած ու անլույս...

ՂՈՂԱՆՋ ԱՆԱՆՑ ՍՈՒԳԻ

Պուսին մոտիկ, Շիշլի դաշտում,

Երկու տարի զնդանվեց նա,

Որին մի ողջ ազգ էր պաշտում:

Բժշկո՛ւմ են...

Ի՛նչ են բուժում.

Ուղեղի՛ վերջ,

Մթազնած մի՛տք,

Որ մնում է թանձրը մուժում...

Ովքեր նրա միտքը պաշտում

Եվ կորստին դեռ չեն հաշտվում,

Ուղարկում են նրան Փարիզ:

Փարի՛զ, Փարի՛զ...

Երկու տարի դեռ չի անցել,

Ինչ նա այդպես քեզ էր գալիս,

Որ իր ձայնով, սրինգ-փողով,

Որ իր մտքով, խելքով պայծառ

Գերեր մի ողջ Համաժողով:

Փարի՛զ, Փարի՛զ...

Հիմա դարձյա՛լ,

Վերստին է նա քեզ գալիս՝

Ո՛չ երգելու, նվագելու,
 Ո՛չ հիացմունք հավաքելու.
 Նա՛ մարմրող ու վիրավոր՝
 էլ թև չունի, որ հաղթ սուրա,
 էլ սուր չունի, որ հուրհուրա...

Ո՛չ «բռավո»,
 Ժափուն «ուռա»,
 Եվ ո՛չ էլ «բիս»:

Փարի՛գ, Փարի՛գ,
 Գալիս է նա, որ մի՛տք մուրա...

Փարի՛գ, Փարի՛գ,
 Եղիր բարի՛,
 Ի սեր աստծո՛ գթա՛ծ եղիր,
 Այս ծուռ ճամփից նրան շեղի՛ր
 Ու բեր շիտակ ճանապարհի.
 Այնպե՛ս արա, որ նա դարձյալ
 Զեզ ողողի մտքով պայծառ,
 Որ երգերով սիրտդ վառի,
 Նվագի փող,
 Ծորոր պարի...

Բայց խեղճ Փարիզն ի՛նչ դեղ ճարի,
 Ինչպե՛ս փրկի քո հանձարին,
 Թե մեկնելիս, նավի վրա,
 Աշակերտներն իր սիրասուն
 Ժաղկեփունջ են տալիս նրան,
 Իսկ նա... նրանց բառ չի ասում,
 Ոչ էլ ժպտում բարի՛-բարի՛,
 Իսկ նա... փունջը չի հոտոտում,

Այլ— անտարբեր— ծովն է նետում՝
 Պաղ հայացքը՝ սար ու քարին...

...Տարվա հետքով սողաց տարին,—
 Բուժում չկա՛ քո հանձարին...

Տարվա հետքով տարին գնաց,—
 Եվ խազերը մեր հինավուրց,
 Որոնց ամբողջ տաժանակիր քսան տարի
 Նա մայրական իր շանքերով
 Անխոնջորեն ոտքի հանած՝
 Զայլելու էր վարժեցրել,
 Պրել ուղիղ ճանապարհի,—
 Նույն խազերը հիմա դարձյալ
 Զար կտրեցին ու կոնդացան.
 Ինչ արված էր երկար ու ձիգ քսան տարում՝
 Զար մի հողմով ցրիվ եկավ քար ու սարում...

Տարիների ոտնահետքով
 Նոր տարիներ վրա հասան.
 Մեկ-տասնըմեկ՝ դարձան քսա՛ն:

Տարվա հետքով տարին գնաց,
 Իսկ նա՛ մեռած անթաղ մնաց:
 Զսա՛ն տարի անթաղ մնաց
 Մի սո՛ւրբ դիակ,
 Սուրբ ու միա՛կ...

Տարվա շունչը տարվա հեքին՝
 Մեկը մեկից սկիզբ առան,
 Իսկ նա՛ նման Ջմրուխտ հավքին,
 Նման հավքին մեր Հազարան՝
 Ո՛չ գնդակված,
 Ո՛չ էլ մորթված,

Այլ ճակատի բուֆ հարվածից ուշակորույս,
Քսան տարի լուռ թայրտաց՝

Գոնե...

Գոնե չթողնելով հնարք ու հույս
Փարատելու մեր ցավը խոր,
Ավարտելու կոծն ու սուգը,
Մեր հոգու մեջ չորացնելու
Սանդեր փորոզ արտասուքը...

Քսան տարի մեռած-անթաղ,
Ե՛վ մահացած, և՛ ողջանդամ
Մի սո՛ւրբ դիակ,
Սուրբ ու միակ...

Ա Հ Ա Գ Ն Ա Յ Ո Ղ Ա Ր Զ Ա Գ Ա Ն Ք

ՂՈՂԱՆԶ ՎԵՐԱԾՆՄԱՆ

Ա՛խ, Վարդապե՛տ,
Մեռած դանդաղ,
Մեռած թեպետ,
Բայց և անթաղ,
Բայց և անփուտ մեր սրբություն.
Կարելի էր լաթադառնով,
Զարդով,
Խարտով,
Դավով-անդավ
Բնաջնջել մի ո՛ղջ անտառ, —
Անմարդկային մի լրբություն, —
Եվ այդ մտքից զարհուրելի
Զխենթանալ չե՛ր կարելի:

Սակայն չարի խոփը դիպավ ժեռ քարերի,
Եվ ժանգոտած խոփը նրա չդիմացավ:

Դու՛ փարիզյան Վիլ-ժուիֆում,
Այդ չիմացար...

Դու չիմացար, որ աշխարհով
Կայծակեցին անեղ շանթեր,

Եվ ազգը քո՝ որք ու անտեր,

Բզի՛կ-բզի՛կ,

Ծվա՛տ-ծվա՛տ,

Լքված աստծուց և մարդկանցից,

Ջրկված անգամ հուսո գանձից,

Ի դեմս ամեն բարեկամի

Լոկ տեսնելով ծախու կավատ,

Մինչև մրուր դատարկելով

Վհատության գավ ու գավաթ,—

Նույն ազգը քո հանկարծ-մեկեն

Վերստացավ նոր մի հավատ.

Հոգեվարքի իր մահիճում

Հոգեդարձը վերածնվեց,

Մի նոր կյանքի հույսով զինվեց...

Իմ ժողովո՛րդ հնամենի,

Ինչպե՛ս գտնել դեռ չստեղծված

Բառն այն, որով հնար լինի

Քեզ ճշտորեն անվանելու:

Դու՛

Պատմության մութ առեղծված,

Դու՛

Մարդկության բարդ հանելուկ,

Տեղն ու տեղդ՝ զարմանալի...

Քեզ որտեղի՞ց այն բանալին,

Որով կյանքի դուռն ես բացել,

Այն դարավոր

Հաստ դուռը, որ

Ծակատի դեմ քո լուսավոր

Փակվել է միշտ, շրխկացել:

Քեզ դարեդար հալածելով,

Խուժդուժորեն սրածելով՝

Սպանեցին,

Խաչ հանեցին,

Սակայն մնաց դեռ հայությունն.

Առանք կրկին մենք հարություն,

Եվ ո՛չ իբրև մի նոր Հիսուս,

Այլ... հայի՛ պես:

Դարեր ի վեր վառում են մեզ,

Այրում են մեզ,

Դարձնում մոխիր

Հնոցի մեջ խուլ չարության,

Խարուկի մեջ քեն ու ոխի,

Ու տաք մոխիրն անգամ թրջո՛ւմ...

Սակայն ոգին մեր հայության

Թե այրվեց էլ, ո՛չ, չի՛ կորչում.

Ելք է ճարում նո՛ր հարության,

Եվ... ո՛չ որպես փյունիկ թռչուն.

Այլ... հայի՛ պես...

Սակայն ոգին մեր հայության

Ավելի ծիշտ՝ չի՛ մոխրանում,—

Միննույնն է, թե չարության

Հուրը թե՛ժ է կամ մարմանդ է.

Չի մոխրանում,

Այլ ճախր անում

Սավառնում է ոգին հայի,

Եվ... ո՛չ իբրև հեքիաթալին

Կախարդական սալամանդը,

Այլ... ի՛ր նման՝

Հայ ոգո՛ւ պես...

Դիակներով ձորն է լցվում,

Դիակներով վիհն է խցվում,

Արյուն հագնում սարավանդը...

Հարվածում են մեզ մահացու,

Վերքի վրա նոր վերք բացում...
 Ջարդեր հայտնի, դավեր ծածուկ,
 Կործանումներ գունակ-գունակ...
 Դժխեմ բախտի մատյանի մեջ
 Սպառումի հազար սյունակ...
 Իսկ մենք՝ տոկուն ու կենսունակ,
 Ինչի՞ նման, — դե եկ ասա...
 Իսկ մենք՝ տոկուն ու կենսունակ
 Հենց... որպես հա՛յ,
 Հենց... որպես հայ...

Արցունքն՝ աչքին,
 Վերքը՝ կրծքին,
 Պատահ-պատահ՝, ծվատ թեպետ,
 Զո ժողովուրդը, Վարդապե՛տ,
 Ջնդանումիդ քսան տարում
 Ջանաց ասել մնաս բարև
 Ամեն բանտի ու զնդանի,
 Մտավ հզոր մի ընտանիք,
 Ուր հույսը նույն
 Դարձել էր սյուն,
 Նույն երազը՝ ծածկող տանիք...

Մեր կեղեքման ու մեր տանջման,
 Մեր վերահաս բնաջնջման
 Ահեղ մտքից ցնորվելով,
 Դու շիմացար, որ հորվելով՝
 Հանձնվելով խավար հողին,
 Չփտեցինք մենք հողի տակ,
 Այլ վազի պես մեր խաղողի,
 Երբ որ հասավ գարունը տաք,
 Հողի մեջ էլ մեզ ուղղեցինք,
 Գարնան շնչով ընծուղեցինք
 Ու կանգնեցինք՝ նորի՛ց շիտակ:

Իսկ գարո՛ւն էր,
 Ի՛նչ գարուն էր...

Եվ դարավոր մեր արյունը
 Պատանորեն տաք պղպջաց,
 Հին ավիշը, նոր ավյունը
 Կրկին եռաց մեր բնի մեջ,
 Անցավ ջարդված ճյուղքի միջով, —
 Ու մեր ծերուկ հոգին ճչաց
 Նորածինի զնգուն ծիչով:

Չլիացանք փրկված քիչով.
 Թե պաղ էինք, շուտ հալվեցինք
 Ու շատացանք, ծավալվեցինք.
 Եվ ուր կուզես՝ հայ մի անուն,
 Որ մեր պատիվն է պահպանում,
 Մեր մեծությունն է վեր հանում,
 Դոներ բանում պանծացումի,
 Հեռու տանում համբավը մեր...

Երեկ դեռ որբ ու սովագար՝
 Մենք շողացինք անբավ գանձով.
 Ծովից զրկված, մի ազգ անծով՝
 Եվ տվեցինք մենք... Ծովակալ...

Արդեն վաղուց, վաղո՛ւց թեպետ
 Կորցրած զորք, սպարապետ,
 Ոտնահարված՝ բանակներից,
 Ապրած գրոհ, ջարդ ու արշավ,
 Եվ... քո ավեր տնակներից
 Ծնունդ առան բյուր զորապետ,
 Գեներալներ ու հայ... մարշալ...

Դարեր ի վեր
 Մարմինը մեր,
 Մարմինը մեր խեղճ ու տոկուն
 Հիսուսի պես չարչարեցին,
 Բայց քիչ էր դա.
 Հասան հոգուն,

Նաև հոգուց մեզ զրկելու
 Մի անհոգի ծար ծարեցին.
 — Ո՛չ մի երգիչ՝ մեզ երգելու,
 Մեր մահն անգամ ողբերգելու:
 Ո՛չ մի երգիչ...
 Եվ չարեցի՞ն:

Այն էլ ինչպե՛ս, ի՛նչ արեցին...
 Բայց— ո՛վ հրաշք— պետք չէր մի դար,
 Ոչ էլ կես դար, որպեսզի մենք
 Ժնունդ տայինք մեր... Չարենցին,
 Որ... չծնվեց մորից արդար
 Եվ ուժ չառավ նրա կաթից,
 Այլ... դուրս թռավ մեր հեքիաթից՝
 Իբրև եղբայր մի արժանի
 Սիամանթո-Վարուժանի,
 Կրտսեր եղբայր, կրտսեր զավակ,
 Որ պիտի գա և այն անի,
 Ինչ չարեցին միջնեկ-ավագ...

Մենք՝ մատնըված ջարդ ու գաղթի,
 Անբախտներից անբախտ՝ կյանքում,
 Բազմաստեղյան հոծ երկնքում
 Մենք՝ զուրկ նույնիսկ աստղից բախտի,—
 Հիմա փրկված չար ու անգութ
 Սամում-խորշակ-ուրագանից,
 Ողջ աշխարհին երեկ անհայտ
 Մեր երկնասեր Բյուրականից
 Ոչ թե անհայտ կամ դեռ հեռու

Աստղի ծինն ենք ազգարարում,
 Այլն գտնում հազարաբայր
 Աստեղարույլ—
 Աստղասղփյուռ,—
 Եվ գիտության հոգնած դեմքով
 Անց է կենում թարմ մի զեփյուռ...

Նույն երկնի տակ, նորից այնտեղ՝
 Արագածի ծնոտ լանջին,
 Ուր չէր վառվել Լուսավորչի
 Առասպելյա ոչ մի կանթեղ,
 Վերին կամքով ոչ արարչի,
 Այլ հայրողու
 Մտքով արթուն
 Փնջվում են արդ,
 Դառնում կանթեղ
 Կոսմիկական ճառագայթներ...

Դու մեր անթաղ, բայց և անփուտ,
 Տրոփասիրտ մեր սուրբ մումիա,
 Թեկուզ մարած, բայց վառվելիք
 Մեր հոգու ջահ հազարմոյա,
 Դու չիմացար և որտեղի՞ց իմանալիր,
 Թե Մասիսի սուրբ փեշերից
 Մինչև լանջը Հիմալայի,
 Անունովդ հպարտացող մի կվարտես՝
 Զեզ յուրովի կրկնելով,
 Զո հարկադիր կաշկանդումն է, որ կավարտեք՝
 Սկիզբ տալով ջո վերահաս արձակ կյանքին,
 Հետզհետե ահագնացող անլուելի արձագանքին՝
 Երկրից երկիր,
 Սրտերից սիրտ,
 Ծուրթերից շուրթ՝

Արևաշատ հայրենիքից երկնքից լուրժ
Մինչև Կարպատ ու լանջերը Հիմալայի...

Դու՛ երազկոտ, և չիմացար,
Ախ, որտեղի՛ց իմանայիր.
Որ այն, ինչ քո ազգամեծար
Ու մեծ հոգով դո՛ւ կամեցար՝
Որպես երա՛գ, մտքի շշո՛ւնջ,
Քիտի մի օր ստանա շո՛ւնջ,
Ստանա ձև՛...

Դու չիմացար,
Եվ որտեղի՛ց իմանայիր:

Մինչդեռ հիմա, հիմա... Նայի՛ր...

ՂՈՂԱՆՋ ՄԱՐՄԵԱՎՈՐՎԱԾ ԵՐԱՋԻ

Քանի՛ աչիկներ, մանչուկներ՝ քանի,
Քանի՛ նորաստի, պարման-պատանի
Աչքները սևաթ, դեմքները սուսակ,
Չեղքներին սրինգ, ջեփոք ու ջուփակ,
Դպրոցից գալիս-դպրոց են գնում՝
Պայուսակներում ու թևերի տակ
Քո երգ ու տաղի սյրակները տաք...

— Դե ե՛կ, Կարդապե՛տ, եկ ու հավատա՛ր՝

Որպես նորորակ հոյակապ տաճար
Եվ մեր պատմության ու մեր ջերքության
Օջախ մի անշեշ ու սուրբ մի կաճառ,
Մատենադարանն ահա, Խազազե՛տ,
Մի շենք փառակազմ ու հրաշակեթո՛ղ,
Ամենապարփակ մի շտեմարան,
Որտեղ պահվում է հունձքը մեր հոգո՛ւ՝
Մեսրոպյան տառի կնիքը վրան,
Եվ նրա կողքին՝ մեկ այլ շինություն
Անցողարձողի ուշք ու միտք գեթո՛ջ,
Հայոց Առաջի՛ն Կոնսերվատորիան՝
Քո ամենատարբ անունը կրող...

— Դե ե՛կ, Կարդապե՛տ, ու խոսքեր անո՛ր...

Մկրտված ոգով քո սուրբ հանձարի՛
Քանի՛ երգչուհի, քանի՛ հայ երգիչ,

Եվ քանի՛-քանի՛ հայ երամիշտներ՝
 Տոյասիրտաբ ու ջեզապաշտներ,
 Ելած ջո ազգի ընդուն ընդերքից՝
 Բեմերքի վրա համայն աշխարհի
 Մեր տաղ ու պարի
 Քովչանքն են ցրում,
 Բուրմունքը փռում
 Մեր բան ու բառի

— Դե ե՛կ, Վարդապե՛տ, մի՛ ժպտա բարի...

Մեր երգի հունը լայնացնելով,
 Համարվազի ջարքեր Ֆեելով,
 Մախրում են Նորքից մինչևիսկ Նյու-Յորք,
 Մեանից մինչև գոռ Նիազարա
 Քանի՛ երգաստեղծ ու նվագարար:
 Ու նրանց ամեն նոր համերգի մեջ,
 Ու նրանց իրե՛նց — և ամենքի՛ մեջ —
 Դո՛ւ ես. հոր նման արյուն ես դարձել,
 Փոխարկվել ջղի, նոր ձև ստացել:
 Դո՛ւ ես, Նահապե՛տ, դու ես այն լան-ը,
 Որ հայություն է հաղորդում նրանց
 Իսկույն ճանաչվող հայ ազգանվանը.
 Հայկական ջունչն ու անտես այն ոգին,
 Որ համակում է նրանց ամենքին,
 Եվ որ աշխարհն է զգում-հասկանում,
 Ինչպես Եվրոպա՛ն, այնպես էլ Ասիա՛ն,
 Այն ջունչն ազգային, ճշտառկա ոգին,
 Որ կյանքում նո՛ւյնպես ունի ազգանուն՝
 Քո՛ անունը սուրբ, ջո՛՛ Կոմիտասյա՛ն...

— Դե ե՛կ, մահացա՛ծ, ու մի՛ համբառնա,
 Դե արի՛, պանդո՛ւխտ, երկիր մի դառնա...

ՂՈՂԱՆՋ ՎԵՐԱԴԱՐՁԻ

Ու վերադարձա՛վ...

Նրանից առաջ

Աշխարհասփյուռ-մազապուրծ հայեր,
 Դիպվածն էր որոնց չար մահից պահել,
 Որպեսզի հետո տա լաց ու հառաչ
 Եվ — ի տրիստուր — իր հերթին տանջի՛, —
 Աշխարհասփյուռ-մազապուրծ հայեր,
 Կրկին հայրենի հողն էին դառնում,
 Մարած շեների կրակը խառնում,
 Որ ծովսը փնչի,
 Երդիկը շնչի
 Մեզ Մասիսների աչքի հանդիման,
 Փեջերի վրա Արագածների՝
 Ի հանգստություն բյուր ընկածների:

Վերադառնում էր, գալիս էր հիմա
 Նա՛ անթաղ գողը նույն առուփախի,
 Խելարորոքը նույն սառ ու պաղի,
 Մեր պար ու խաղի,
 Մեր երգ ու տաղի
 Այն միակ հույսը և ապավենը,
 Մեր հինն ու նորը իրար շաղկապող
 Ծիածանակերպ այն ժապավենը,
 Որ հատվեց մի օր դանակով չարի,
 Եվ որին ահա քսա՛ն ձիգ տարի
 Նախ՝ վերափոխման ականկալիքով,

Եվ ապա՝ տենչով հանգստանալու,
 Սպասում էինք՝
 Միրով բանալու
 Մեր վերջն՝ սպիով, ներկան՝ գալիքով.
 — Գալուտի՛դ մեռնի թա կարոտ լարք,
 Ախպե՛ք ջան, արի՛, դե արի երթա՛նք...

Նա՛
 Ճեռագնաց մեր կարոտյալը,
 Նա՛
 Մշնամարը, զավակը մեր թանկ,
 Նա՛
 Հեզ պանդուխտը մեր քսանամյա,
 Վերադառնում էր, գալիս էր հիմա.
 — ...Զո գալո՛ւն մեռնեմ,
 ...Կարո՛տըս առնեմ...

Սև էր գնացել՝ բեղ-ճորտըը սև,
 Վարդապետական սև սքեմ հագած:
 Սև էր գնացել՝ եկավ ճերմակած...
 — Ա՛խ, շատը կույ տամ, զո՛նե քի՛ջն ասեմ,
 Անասովա՛ծ ասոված, բա չո ինչն ասեմ...

Գնացել էր նա,
 Հիմա բերեցին.
 Գնաց՝ սեփական ոտքերի վրա,
 Իսկ հիմա նրան՝
 Մեր տաղերեցին
 Ահա բերեցին... ձեռքերի՛ վրա...
 — Վա՛խ, մերըդ մեռնի,
 Ծաղկաթափ նոնի...

Գնաց այն պահին,
 Երբ ահի՛,
 Մահի՛

Ծունչն էր մոլեգնում որպես չար խորշակ,
 Երբ կույ էր գնում ողջ ցեղը հայի,
 Ու դեռ չէր փակվել մի գազանային
 Մարդակերական անկուշտ ախորժակ, —
 Եվ հիմա հեռվից դառնում էր նա տուն,
 Մի տուն,
 Որ փրկված ամեհի հողմից՝
 Ծինվել էր կրկին և ամեն կողմից
 Խաղողի վազով երեսն էր պատում
 — Գարուն է, արի՛,
 Վա՛խ, քեզ ի՛նչ արին...

Ու վերադարձավ հողն իր հայրենի,
 Որին առհավետ կորցրած կարժեց,
 Եվ հենց ա՛յդ, հենց ա՛յդ միտքը վայրենց՝
 Որդի պես նրա ուղեղը կրժեց...

Ու վերադարձավ Արարատներին,
 Արագածներին իր քառակատար,
 Իր հող ու ջրին՝ անարատներին,
 Իր տաճարներին ու պալատներին,
 Իր արտին, այգուն և արոտներին, —

Անցյալ,

Ապառնի

Ու հարակատար
 Բոլորանվեր ա՛յն կարոտներին,
 Որ մնում էին հավետ անվտար,
 Որ կիսվել էին քսանհի՛նգ տարի
 Իր մթաթ սրտում,
 Վթաթ մտքի մեջ՝
 Ա՛յն դժբախտ օրից, երբ Մայր տաճարի
 Գավիթը թողած, ցաված ու խռով
 Նա գնաց Դոլիս
 Եվ ապա... Փարիզ...

— Ա՛խ, գալըդ լինէր,
Գնա՛լ չլինէր...

Ու վերադարձավ մեր սուրբ հեռական...

Ահավոր մտքից ինքը խելագար՝
Չգիտեր թեկուզ, որ քսան տարում
Վառ դողանջումը իր գնգուն գանգի
Արձագանքել էր խելագար թափով՝
 Լացով հիացման,
 Որոտուն ծափով
Ելել էր, հորդել և նոր մի ափով
Հասել, խառնըվել ուրիշ հոսանքի:
— Ումո՛ւդ ջան, նանին
Քո ցավը տանի...

Ու վերադարձավ,
Որ էլ չգնա՛,
Որ մրսած հոգին նորից տաքանա
Ժողովրդական սիրո տաք օդով,
Որ, չիմանալով, դառնա սեզ կոթող՝
Ողորկ գրանիտ ու բրոնզ հագած,
Եվ այնտեղ... նրա հերքը ձերմակած
Առաջվա նման— ընդմիջտ— մզանա,
Հայացքի մուծը այնտեղ չքանա,
Աչքերը փայլեն իրենց հին ցուլքով
 Ու նորից ցրեն
 Ու փոեն
 Չորս կողմ
Մարդեղացումը աստվածայնության,
Եվ սուրբ բերանի մնջախաղ-երգով,
 Շարժումով ձեռքի
 Կրկին տա դասեր՝
 Դասեր մեներգի՛,

Բազմաձայնությա՛ն...

— Աչքերըդ՝ պայծառ,
Բերանըդ՝ տաճար...

Նա վերադարձավ.
Եվ ո՛ղջ մի երկիր,
Ժողովո՛ւրդ մի ողջ սրտով վշտառու
Ելավ հերթ ի հերթ,
Եկավ շար ի շար՝
Իր խաղ ու պարի, իր տաղ ու երգի
Կախարդիչ մոգին հրաժեշտ տալու...
— Իմ կանաչ արև,
Ի՛նչ մնաս բարև...

ՂՈՂԱՆՋ ՀՐԱԺԵՅՏԻ

Արագածի, Արարատի
 Հայացքի դեմ սգավոր,
 Սև տուֆակերտ մի պալատի
 Տրտմահանդես դահլիճում
 Պառկած էր նա՝
 Որպես անթագ, բայց հիրավի թագավոր,
 Որ ունի գահ,
 Բայց ոչ երբեք իր սեզ գահից վարիջում:

Եվ գահագուրկ մի ժողովուրդ,
 Որ, իբր արդար հատուցում,
 Հեղափոխել մի ողջ աշխարհ
 Ու ջարդել էր հին գահեր,
 Հիմա ուրիշ մի արքայի
 Ծով հարգանք է մատուցում, —
 Ու փղծուկն են հազիվ պահել
 Կին, տղամարդ, ծեր, ջահել:
 Քարացել են ականաժանքից
 Սև երիզով դրոշներ,
 Հա՛յ պետական դրոշները,
 Լսո՛ւմ ես դու, Վարդապե՛տ:
 Եվ մի ամբողջ մայրաքաղաք,
 Մայրաքաղա՛ք, ո՛չ գաղութ,
 Իր հոգու մեջ — վերջի՛ն անգամ —
 Աշխատում է դրոշմել
 Կերպարանքը քո սիրելի,

Քո դեմքը թանկ, որ թեպետ
 Երգերիդ պես չի շողշողում,
 Որ ցուլուն չէ ու ջղուտ,
 Բայց գունատ է ո՛չ որբի պես,
 Այլ մի արդար սրբի՛ պես...

Ու կանգնում են պատվո պահակ
 Մասիս,
 Սիփան,
 Արագած՝

Ճերմակահեր գլուխն իրենց անյունիդ դեմ վար հակած...

Ու կանգնում են պատվո պահակ
 Հայոց պետեր,
 Վարպետներ,
 Հայ աշխարհի մեծերն ամեն,
 Ամեն երեց ու ավագ...

Եվ քեզ ծնած մի ժողովուրդ՝
 Հիմա դարձած քեզ զավակ,
 Հրածեշտի խոր տրտմությամբ միաժողով ու հավաք,
 Կքված ցավից հայրակորոյս,
 Կիզված վշտի խոր տապից՝
 Գալիս է լուռ, գալիս հերթով,
 Որ հոգու մեջ խոր տպի
 Մասունքներիդ սրբազան տեսքն ու դեմքը քո,
 Դեմքը սուրբ...

ՂՈՂԱՆՁ ԹԱՂՄԱՆ ԵՎ ՀԱՐՈՒԹՅԱՆ

Թաղման թափորն անվերջ ձգվեց
Արովանից մինչև Պանթեոն,
Որտեղ արդեն, ամենից վաղ,
Հրազդանն էր նրան կոծում՝
Եղերամոր եղանակով:
Եվ մարդկային ծովի վրա հանդարտ ճոճվեց
Պսակներով առագաստված մի սուրբ նավակ...

Դարձել էին հուղարկավոր
Բազմահազար երևանցիք,
Եվ... ո՛չ միայն վերջին ու նոր մեր ոստանի
Բնակիչներն արտասավաթոր,
Եվ ո՛չ միայն մի ժողովուրդ,
Որ ապրում էր իր պետության սահմաններում,
Եվ ո՛չ միայն մի ժողովուրդ,
Որ փոված էր ողջ աշխարհի լայնքի վրա,
Այլև... բոլոր մեր գոհե՛րը միլիոնավոր,
Մեր բյուրավոր մեռելնե՛րը,
Որ մինչևիսկ չարժանացան... թաղման ծեսի, —
Բոլո՛ր նրանք, որոնց բախտից ահագարհուր
Կորավ և սա՛,
Սա՛՝ զոհը մեր ամենամե՛ծ...

Հայաստանյան լեռներն էին հուղարկավոր
Եվ գերեվար լեռները մեր՝ Կարսից-Ջեյթուն...
Բուրվառում էր հայրենաշունչ բուրիչ քամին...

Ջանգակաձայն իր դուստրերից
Նա՛, որ ուներ Հայկից առած անուշ անուն,
Ծիրիմ կոչված այն փոսի մոտ,
Որ հիրավի պիտի կոչվեր նոր Խոր Վիրապ,
Անմարդկային լուռության մեջ սկիզբ տվեց
Պահիպատջաճ Չինար ես-ին.

— Կեռանա՛լ մի...

Ու կեռացան-խոնարհվեցին բյուր գլուխներ...
Արցունք կաթեց պսակներին,
Լսվեց փղծուկ համատարած՝
Իբրև երգի մի յուրատիպ նվագակցում...
Եվ չէր ճարվի բոլորի մեջ մի անձ գոնե,
Որ ականա և մեկուսի չմտածեր.

— «Չի՛ կեռանա».

Վկան, նաև առհավատչյան՝
Արարատն էր՝ երկնաձիգը,
Արագածն էր՝
Իր չորս անկոր կատարներով,
Ինչպես նաև այս երգը նույն,
Որ հայցում էր.
— ...Հեռանա՛լ մի:

Հեռանում էր:

Բայց հեռանում

Ահավասիկ այս իրիկվա արևի պես,
Որ բնավ էլ մայր չի մտնում,
Այլ իր լուսով ողողելու
Ուրիշ ու նոր կողմեր գտնում:

Հեռանում եր:

Բայց հեռանում, որ մոտիկից հեռանալով՝
Հեռուներում լայն ծավալվի ու տարածվի,
Որ կիսատը նոր լրացվի
Եվ տարածված ու լրացված՝
Երբևիցե չմոռացվի:
Եվ իզո՛ւր եր երգը խընդրում.

— Մոռանա՛լ մի...

...Երբ սկսեց ածյունն իջնել
Յիրիմ կոչված այն փոսի մեջ,
Որ հիրավի պիտի կոչվեր նոր Խոր Վիրապ,
Նույն այդ պահին հայ երկնքից
Հանկարծակի անձրև՝ տեղաց.
Ջարմանալի զուգադիպո՛ւմ,
Թե՛ իսկապես երկինքն անգամ
Ողբում էր քեզ՝
Խաղա՛ղ-տրտո՛ւմ-հանգըստարա՛ր իր անձրևով...

...Երբ սկսեց ածյունն իջնել
Յիրիմ կոչված այն փոսի մեջ,
Որ հիրավի պիտի կոչվեր նոր Խոր Վիրապ,
Այդ վայրկյանին ո՛վ չլսեց,
Որ բովանդակ աշխարհով մեկ
Փոված բոլոր եկեղեցիք հայահավատ
Իրենց բոլոր զանգակներով ու զանգերով
Դեպի երկինք դողանջեցին.

— Դուներըդ բա՛ց...

Եվ հայկական տաճարների բյուր բեմերից
Կոմիտասյան Պատարագ-ով
Ժամերգեցին քե՛զ, Կոմիտա՛ս:
— Երբեմն էի լոյս, և այժմ
Խավար եմ և ստվեր մահու...

Ո՛չ, այս անգամ սխալվեցի՛ր, պատարագի՛չ,
Նա լույս էր վառ ու լույս է արդ,
Ու կմնա միջտ լույս զվարթ,
Լույս՝ աչքերում հայ մանուկի,
Լույս՝ մտքի մեջ հայ պարմանու,
Հայ հարսների պտղած ծոցում,
Հայ թոռնորոր նանիների
Ինքնամոռաց ժպիտի մեջ,—
Հայ պրերի ու հայ կանանց
Ջերմ սրտերում սիրատրոբի

Ջեզ, Վարդապե՛տ,
Անփոստ հողին ի պահ տալիս
Իզո՛ւր էին պատարագում թաղման երգով.
— Ի վերինըն Երուսաղեմ...

Ո՛չ թե թաղման երգն էր պատռեա՛մ,
Այլ հարություն վառ մեղեդի՛ն.
— Փառք ի բարձո՛ւնս...
Օրհնեա՛լ ես դու...

Օրհնյա՛լ ես դու,
Եվ չես թաղվում ու հող դառնում,
Այլ թաղվելիս հարություն ես կրկին առնում...

— Օրհնեա՛լ ես դու,
Գա՛ոն աստուծոյ...

Ա՛խ, գա՛ոն արդար, որ զոն գնաց
Եվ անդանա՛կ գոհվեց չարին՝
Արհավիրքի այն սև տարին,
Երբ հայ երկրում հայ չմնաց...

— Ելն ի բարձունս... էառ աւար
Բաշխեալ պարզեալ... որդոց մարդկան...

Պարզև բաշխեց
Որդիներին իր տարաբախտ ժողովրդի
Եվ... մարդկության

Պարզև բաշխեց
Աստժո՛ւ նման՝ ջուպլորե՛ն,
Եվ բաշխելով՝ հարստացա՛վ...
— Գովե՛մք զքեզ,
Բարեբանե՛մք...

Բայց դրվատման ի՞նչ խոսքերով
Բարեբանենք և քեզ գովենք,
Թե աղքատ է հանկարծ թվում
Բառարանը մեր հայկազյան:
Ի՞նչ խոսքերով բարեբանենք
Քե՛զ, Վարդապե՛տ...

Դու՛ւ— Վարդապե՛տ
Դու Ամենայն Հայոց Երգի Վեհափառն ես,
Դու՛ մեր երգի Մերոպ Մաշտոց,
Գիրն ու տառն ես Հայոց երգի
Հայոց երգի
Անձիր հերկի
Ե՛վ ակոսն ու խորունկ առն ես,
Ե՛վ մատնընտիր սերմը Նրա,
Ե՛վ խոստումը գալիք բերքի...

Եվ ծիրանի մեր այն ծառն ես,
Որ ինչքան էլ ճղակոտոր՝

Ծակըվել է և թաք տվե՛լ,
Ու... մեր դարդը իրաք տվե՛լ...

Եվ հայրենի այն ծիծառը,
Որ հավիտյան թռչն է դրել
Մեր հոգու մեջ,
Մեր կիսավեր ու դեռ կանգուն առձարների
Ու մեր երկնի զմբեթի տակ...

Դու՛ մեր տավիդ,
Եվ քո լարը
Մինչև անգամ և հատվելիս
Հայերեն է նորից ճնգում:

Դու՛ մեր սրտի ծայնալարը,
Մինչև անգամ վիատվելիս
Հայերեն ես դարձյալ տնջում...

Դու ես քարը
Է՛վ սրբատաշ մեր պատշարը,
Հացը օրվա
Եվ նեղ ժամի մեր պաշարը,
Մեր փակ հոգին, բաց աշխարհը,
Սրբագործված մեր նշխարը,
Եվ մեր ճարը՝
Օտարամուտ այստի դիմաց,
Խնկաժավալ մեր տաճարը՝
Օտարահոտ աղտի դիմաց,
Վերադարձի մեր պատճառը՝
Մեր հարկադիր գաղթի դիմաց,
Համահավաք մեր հանճարը՝
Ազգասըփյուռ բախտի դիմաց...

Դու մեր հաստատ Մասիս սարը՝
 Վասահեղի թիկունքն ես մեր,
 Մեր երգերի Յովասարը
 Ռս բյուրակյան ակունքն ես մեր,
 Մեր արևոտված հավքի լեզուն,
 Մեր կարոտած ֆիդան լարը,
 Մեր լեփլեցուն հոգիների Ճայնատարը,
 Մեր երգերի խա՛ղը-նոտա՛ն-ձայնատա՛ոց,
 Ձայնասըփյո՛ւտը կենդանի
 Ռս ձայների թանգարա՛նը, —
 Մեր հայկական երգարա՛նը...

Արտը մեզնից՝ դու ես մաճկալ,
 Հարող մեզնից՝ ցորենը դու,
 Հարթը մեզնից՝ կատար դու սեզ,
 Լուրթը մեզնից՝ երկինքը դու,
 Յուրթը մեզնից՝ դու համբույրը,
 Յուրտը մեզնից՝ իսկ դու՛ կրակ,
 Իսկ դու՛ օջախ,
 Իսկ դու՛ թոնիր...

Եվ մեզանից արդ ընդունիր
 Երախտիքի այս խաչքո՛ւտը,
 Այս խաչքուտը՝ քո՛ իսկ հերկի:

Ընդունիր դո՛ւ, դո՛ւ՛ մեր երգի
 Մշտահնչուն նվագարան.
 Ընդունիր դո՛ւ՛ մեր ցաքուցիր
 Մասունքների հավաքարա՛ր.
 Դու՛ խազերի մեր քերական,
 Դու՛ հոգևոր մեր շարական.
 Դու՛ սրբազան մի ավազան,

Որ մեր հոգին ախտահանեց.
 Դու՛ բիրչիական մի գավազան,
 Որ ուր դիպավ՝ աղբյուր հանեց.
 Դու մեր կարոտ ու մեր մորթոց,
 Մեր տաղի ջուրմ,
 Մեր խաղի մոգ,
 Մեր մշտահունչ ու մշտարթո՞նն,
 Անլուելի զանգակատո՛ւն...

11. IX. 57—23. XI. 58

Մոսկվա

ՊԻՍԱՆԿԱՐԻ ԱՍԲՈՂՋԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

1

Կան մեծություններ, որոնց դիմանկարը սպասում է իր հաճապատասխան կերտողին. գալիս է սրատես ու խորաթափանց նկարիչ-արվեստագետը, որսում է ամենաեականը նրա բնավորության ու գործի— և դիմանկարը պատրաստ է՝ կտավի վրա կամ քարի:

Կան մեծություններ էլ, որոնց դիմանկարի կերտումը վեր է ամեն մի՝ թեկուզ և հանձարեղ նկարչի հնարավորություններից. մի պատկեր կամ քանդակ չի պարփակում նրանց որքանությունը: Որանց փոքրիշատե լրիվ պատկերելու համար հարկավոր է պատկերների ու քանդակների մի ամբողջ շարք:

Մեզ համար այսպիսի մեծություն է Կոմիտասը:

Կյանքում՝ դժբախտ, վախճանով՝ ողբերգական, նա բարեբախտ էր մի բանում. և՛ նրա ժամանակակիցները, որ նրա մեծ բարեկամներն էին, և՛ հետնորդները, որ նրա մեծ սիրահարներն են, նրան պատկերել ու պատկերում են կտավի վրա՝ ամեն մեկը յուրովի, ըստ իր ընկալման ու հնարավորության. յուրաքանչյուրը վերակենդանացրել ու վերամարմնավորում է ի՛ր Կոմիտասին:

Կոմիտասին պատկերել են նաև գրչով, և շատերին դա հաջողվել է ոչ պակաս, քան այդ արվել է վրձնով:

Ահա դրանցից մեկը.

«Գեղեցիկ չէր: Նույնիսկ պիտի ըսեմ հակառակը՝ իր սև երկայն ուղտենկոթին բռնազբոսիկ պաշտոնականությանը մեջ: Իր ոսկրոտ դեմքով ինձի կիիջեցներ Սոկրատի ինչ-ինչ դիմաքանդակները:

Պահ մը վերջը, սակայն, երբ տրվեցավ ինձի լսել իր մատներուն տակ հառնող առաջին ներդաշնակությունները դաշնամուրին ու մանավանդ իր արձակած առաջին երկարաձիգ կանչերը մեր ամեհի ու քաղցր լեռներեն կարծես փրթած՝ խորհեցա վերստին Սոկրատին, բայց այս անգամ Պղատոնի այն էջին վերհիշումով, ուր Պղատոն զայն կնամանեցնե արթնացի քանդակագործներու աշխատանոցներուն մեջ տեսնվող այն խոշոր, տգեղ ու տարօրինակ «իլեն»-ներու քանդակներուն, որոնք պահոցներ են սակայն, կըսե, որ երբ բացվին, աստվածներու վեհորեն գեղեցիկ արձանիկներ հայտ կբերեն»:

Բազմաշնորհ Ծահան Ռեթեոս Բերբերյանն է այս: Նա էլ, ինչպես տեսնում եք, իր կոմիտասյան դիմաքանդակն է կերտել:

Այսպիսի դիմապատկերներ ստեղծել են շատերը՝ բոլոր նրանք, ովքեր ունեցել են բախտ՝ Կոմիտասի հետ աշխատելու կամ ապրելու, հնարավորություն՝ իրենց ըմբռնած-զգացածի թարգմանը լինելու:

Ավելի քան շնորհակալ գործ է կատարել Գ. Գասպարյանը՝ կազմելով «Ժամանակակիցները Կոմիտասի մասին» ժողովածուն: Գիրքը բացվում է Դ. Դեմիրճյանի «Երկու խոսքով», որին հետևում են Կոմիտասի քիչ թե շատ հանգամանակից կենսագրությունը, որ շարադրել է Գ. Գասպարյանը, և ապա՝ Ավետից Իսահակյանի, Թովմաս Գարտմանի, Մանուկ Աբեղյանի, Հրաչյա Աճառյանի, Տիգրան Կամսարականի, Մարգարիտ Բաբայանի, Գարեգին Լևոնյանի, Ծարա Տալյանի, Աղավնի Մեսրոպյանի և ուրիշների, մասամբ հրատարակված, հիշողությունները:

Ռժվարանում եմ ասել, թե ինչ սկզբունքով է կազմված հավաքածուն: Հուշագրություններին առընթեր կան մեկնաբանական ու գնահատական հոդվածներ: Կոմիտասասերներին հայտնի են անտիպ և տպագիր ոչ սակավ նյութեր էլ (ինչպես Հայաստանում, այնպես էլ գաղթաշխարհի պարբերական մամուլում), որ չեն մտել այս ժողովածուի մեջ: Բայց ավելի կարևոր է այն, որ իր տեսակի մեջ այս հավաքածուն անհամեմատ

հարուստ է նախորդներից: Հարուստ է, բայց ոչ սպառիչ: Ղեռ շատ կան քիրապարակված հիշողություններ Կոմիտասի մասին, որոնցից, հուսով եմ, լավագույնները Գ. Գասպարյանն հավաքել է, պատրաստել մի այսպիսի հատոր ևս: Այդ հատորն էլ պետք է հրատարակել, և ինչքան ջուտ, այնքան լավ:

Գրքին անվանապես հեղինակցել են քսան հոգի, գրեթե բոլորն էլ՝ հայտնի անուններ, վաստակավոր և հարգարժան: Բայց այդ թիվն ըստ էության կրկնապատկվում է՝ հաշվի առնելով նաև նրանց, ովքեր իրենց կարծիքներով ու վերաբերմունքով մասնակցում են հուշերին ու գնահատականներին: Եվ նրանք բոլորն էլ, ամեն մեկն իր կողմից դիմանկարում է իր Կոմիտասին:

Բայց կա նաև Մեր Կոմիտասը, որ սակայն չի կարող լինել առանց այդ կոմիտասների: Եվ այս գրքի բնիկ արժեքն էլ հենց այդտեղ է՝ հավաքական Կոմիտասի վերհանունը հուշագիրների «սեփական» կոմիտասներից:

2

Ճիշտ է, որ «ամեն համեմատություն կաղում է»:

Բայց կան համեմատություններ էլ, որ ուղղակի աղերսվում են:

Կոմիտասին շատերի հետ են համեմատել՝ Նարեկացու և Աբովյանի, Թումանյանի և Թորամանյանի:

Ճշմարտության մեծ պատառ կա այդ բաղդատությունների մեջ, թեպետ չհամընկնող եզրերը նույնպես որոշակի են:

Սակայն ամենից ավելի ճիշտ է, ըստ իս, այն համեմատությունը, որը նոր չէ, բայց տակավին չի գիտակցվել խորապես:

Եվ ահա ժամանակը չի ուշացնում իր օգնությունը, որպեսզի քիչ կրկնելով շատ հասկանանք, թե Կոմիտասի գործը ամենից ավելի հիշեցնում է Մաշտոցի գործը:

Ընթերցելով կամ վերընթերցելով այս ժողովածուի նյութերը՝ խելամիտ ընթերցողը չի կարող չզգալ ու չհասկանալ, որ Կոմիտասը մի «հերթական» դեմք չէր հայ մշակույթի պատ-

մության մեջ: Հայ մշակույթի պատմության մատյանում նա չի գրադեցնի միայն մի դրվագ: Նա միայն երգահան չէր, թեկուզ դարագլխային՝ մի ամբողջ դպրոցի հիմնադիր: Միաժամանակ նա մեծ գիտնական էր, մեկը այն երջանիկ հայտնագործողներից, որոնց հավաքական անունը Կոլումբոս է: Նաև հայ երգի լավագույն կատարողը՝ նույնպես սկզբնավորող և ոչ շարունակող: Իսկ խմբավարը, ուսուցիչը, բանասերը...

Այս ամենը հայտնի է՝ եթե ոչ բոլորին, ապա շատերին:

Այսպիսին էր մեկ էլ Մաշտոցը: Էինելով մեր առաջին լեզվաբանը՝ ցայսօր նա մնում է նաև խոշորագույնը՝ անցած տասնհինգ դարերի ընթացքում մի այնպիսի դուրաշարժ ու մշտափոփոխ լեզու, ինչպիսին է հայերենը, չկարողացավ շեղվել նրա կարգադրած հնչյունական համակարգից. «Ֆ»-ն այն բացառությունն է, որ հաստատում է օրենքը:

Նա բառացիորեն մեր առաջին քերականն է և առաջին դասագիրքը, մեր դպրոցների առաջին տնօրենը և առաջին ուսուցիչը: Առաջին գրողն էր նա և առաջին գրիչը: Առաջին թարգմանն էր և առաջին մեկնիչը: Այս հայտնի է համարյա բոլորիս:

Բայց Մաշտոցի դիմաքանդակը ավարտուն չէր այնքան ժամանակ, քանի չէր գիտակցված, որ նաև մեր մեծագույն քաղաքագետն էր նա: Մեր տիգրաններից ու երվանդներից, արշակներից ու վաղարշակներից ոչ ոք այնպես չզգաց ժամանակի զարկերակը, ինչպես հացեկացցի դպիրը, որ իր կոչմամբ շատ էր հեռու քաղաքականությունից:

Այժմ գտնված է Մաշտոցի այս ամենաբնորոշ դիմագիծն էլ, և նրա դիմաքանդակը ավարտված է:

Ժամանակը, տասնհինգ դար հետո, վար դրեց արձանագործի իր մուրճն ու տաշիչը:

Առաջին պահ արտաոռց կթվա, անշուշտ, եթե զուգահեռը շարունակվի՝ Կոմիտասը կոչվի նաև քաղաքագետ:

Բայց հանկարծակիի եկածի լուության մեջ, նվազագույն ճիգի գործադրմամբ, անհնար է չտեսնել քաղաքագետ-Կոմի-

տասին, որ կյանքում, ինչ ասել կուզի, շատ էր հեռու քաղաքականությունից:

Պատմական իրադարձությունները չեն կրկնվում, բայց իրադրությունները կրկնվում են հաճախ: Հայ ժողովրդի բախտը 19-րդ դարում շատ բանով էր հիշեցնում 4-րդ դարը:

Ամենից առաջ՝ երկփեղկված ազգ և բնաջնջվելու վտանգի ահազնություն:

Տագնապում էր ոչ միայն Արևմտյան Հայաստանը, ուր օսմանական աննախադեպ բարբարոսությունը բյուզանդական երբեմնի կայսրությունից վտարել էր բյուզանդական հայտնի քաղաքականությունը, և սա՛ այս բյուզանդականությունը, կերպարանափոխված գործում էր Արևելյան Հայաստանում, գործում «ոչ այնքան սրով, որքան սիրով»: Օգնության ձիջեր էին հնչում ոչ միայն Արևմտյան Հայաստանից՝ հազարավոր բերաններով: Տագնապ էր ահազանգվում նաև Արևելյան Հայաստանում. Վ. Տերյանը մտմտում էր իր «Հայ գրականության գալիք օրը» դասախոսությունը, Ստ. Մալխասյանցը՝ «Մեծ վտանգի առաջ» հոդվածը:

Մեծ վտանգը ունենում է և իր մեծ հակազդեցությունը: Հայ ժողովուրդը ազգային ինքնագիտակցության էր հասնում, և այստեղ էլ շատ բանով նոր ժամանակը նման էր 4-րդ դարին: Դյուրին չէր ի մի բերել երկատված ազգը, հասնել ազգային անկախության, ինչպես որ դա անհնարին եղավ 4-րդ դարում: Հարկավոր էր ինչ-որ հրաշքով գլուխ բերել այդ «ի մի»-ն, ինչ-որ հնարագիտությամբ ջնջել ազգը երկատող սահմանները, տարտղնված սրտերն իրար կամրջել, հոգիներն իրար կապակցել: Անհրաժեշտ էր մի գլուտ, որ նույնքան պարզ լիներ, որքան հանձարեղ:

Պատմական անհրաժեշտությունը չի կարող չկատարվել: Եթե նոր զենք է հարկավոր՝ անպատճառ ստեղծվում է: Մաշտոցի զենքը չէր անպետքացել, բայց նոր ծակատամարտում նոր զենք էլ էր անհրաժեշտ: Պիտի ծնվեր մի նոր Մաշտոց: Եվ նա ծնվեց: Եվ նա արեց իր գլուտը՝ նույնպես «նորոգ և սքանչելի»:

Մաշտոցից առաջ էլ կար հայոց լեզու՝ իր հնչյունական համակարգով ու քերականությամբ: Բայց այդ համակարգը տարաբաժանելու և վերամիավորելու, այդ քերականության օրենքները ծանաչելու և սահմանելու համար հարկավոր էր հանձարեղ լինել:

Այս վերապահմամբ էլ՝ Մաշտոցն էր, որ հայերին հայոց լեզու տվեց:

Կոմիտասից առաջ էլ կար հայ երգ ու նվագ, հայն ուներ իր երգային համակարգն ու երաժշտական «քերականությունը»: Բայց այդ համակարգը տարբերելու և համադրելու, այդ «քերականությունը» ուսումնասիրելու և օրինավորելու համար հարկավոր էր հանձարեղ լինել:

Այս վերապահմամբ էլ՝ Կոմիտասն էր, որ հայերին հայոց երգ ու նվագ տվեց...

Նայելով ահա այս բարձունքից՝ Կոմիտասին չի կարելի համեմատել իր մեծ ժամանակակիցներից ու նախորդներից և ոչ մեկի հետ: Ըստ իր գործի և դրա հետևանքների՝ նրան հայր կարող էր դառնալ միմիայն Մաշտոցը:

3

Մի դար իսկ չի անցել Կոմիտասի ծննդից, բայց ժամանակն արդեն կերպաձևում է այն վեմը, որը պիտի արձանացնի նրան: Այս ուղղությամբ առանձնապես շատ գործ է արված վերջին տասնամյակներիս՝ ինչպես Հայաստանում, այնպես էլ գաղթաշխարհում:

Անցել է ընդամենը երեսուն տարի, և արդեն տարօրինակ է հնչում, օրինակ. Սպ. Մելիքյանի այն տեսակետը, թե Կոմիտասն իր գործով չի բարձրացել ազգագրագետի աստիճանից:

Մնացած բոլոր հուշագրությունների հեղինակները, ամեն մեկը յուրովի, բայց բոլորն էլ սրտի թելադրանքով են խոսում իրենց ընկերոջ կամ ուսուցչի մասին: Խոսում են իրենց տեսաձից և պատմում զգացածն իրենց: Եվ գրքի սև տողերի միջից,

տողերի սպիտակ արանքներում հառնում է Կոմիտասի պայծառ կերպարը:

Համեմատաբար սակավ են մասնագիտական գնահատականները, քանի որ գրքի հեղինակներից քչերն են երաժիշտ: Այստեղ առաջին հերթին պիտի հիշել Շ. Ռ. Բերբերյանին, Թ. Գարտմանին, Վ. Սարգսյանին: Բայց ինչպես հուշագիրները (հատկապես Մ. Բարսյանը), այնպես էլ առաջաբանի հեղինակ Գ. Գասպարյանը, հաճույքով են քաղում կարծիքներն ու գնահատականները նաև օտարների, և այնպիսի հեղինակությունների, որպիսիք են աշխարհահռչակ ջութակահար-երաժիշտագետ Յոխիմն ու պրոֆ. Ծմիդուրը, Վելեշ Եգոն ու Ֆոլոմանին, Ֆրանց Էնտրեսն ու Ֆ. Մակլերը, Գարտմանն ու Չերեպսին, Ռոմեն Ռոլանն ու Լուի Լալուան, Գնեսինն ու Դեբյուսին:

Հարկ չկա քաղել նրանց հիացագին կարծիքներն ու գնահատականները. թող գրքի ընթերցողին մնա այդ բավականությունը, որ պիտի վերածի ազնիվ հպարտության: Իսկ բուն հուշագրումները վերապատմելու համար պետք կլիներ արտագրել ժողովածուի մեծ մասը: Ընթերցողին սպասում են նորություններ, որոնք պիտի լրացեն նրա պատկերացումը Կոմիտասի մասին՝ իբրև առինքնող մարդու և անկրկնելի երգահանի, անբաղդատելի երգչի ու մեծ գիտնականի, ուսուցչի և դասախոսի, բանասերի և բանաստեղծի, խմբավարի և պատարագիչի:

Այս ամենից հետո դժվար թե չանհետանա արտահոցության այն փութանցիկ զգացումը, որ թերևս ծնված լինի Մաշտոցի և Կոմիտասի բաղդատությունից: Մտովին մասնակցելով այն անսխալեպ ներգործությանը, որ ունեցել են Կոմիտասի համերգները հայկական գաղութներում՝ Անգլիայից մինչև Եգիպտոս, ընթերցողը չի կարող չզգալ, օրինակ, Տիգրան Կամսարականի իրավացիությունը՝ նրա խոսքն ընդունելով ոչ թե իբրև հիացագին չափազանցություն, այլ իբրև իրական փաստագրություն:

Ահա թե ինչպես է դիմել նա Կոմիտասին՝ 1911 թ. Ադեբասևորիայում տված մի համերգի առթիվ.

«Անցյալ գիշեր... երգելով ու բարբառելով, զվարճաբանելով, երբեմն ալ միշտ հանկուցանելով՝ Հայաստան ուխտագնացության տարաք զմեզ, կամ լավ ես է ըսել՝ քիչ մը Հայաստան թերից Եգիպտոսի հայերուս. մենք կկարծեինք, թե հայ կրոնավորը, որ էջմիածնեն կուգա, մյուտոն միայն կբերե, դուք Մասիսն ու Արագածը փոխադրեցիք հոս պահ մը, ո՞վ ըսավ, թե լեռները չեն ցալնր...»:

Կոմիտասն իսկապես որ լեռներ ցայլեցրեց, «քիչ մը Հայաստան» տարավ ամենուրեք, որտեղ Հայաստան չկար, թայց կար հայ, իսկ բուն Հայաստանում էլ «եկավ սիրեցնել մեզ, ինչ որ մերն էր, բացավ մեր վարագուրված աչքերը մեր սեփական արժեքներուն առջև, վերադարձուց մեզի դեպի մեր հայրենի բնագավառն ու օջախը, մեր անդն ու անդաստանը, բառին առարկայական թե այլաբանական իմաստով»:

Սա խոստովանությունն է ոչ թե Վ. Սարգսյանի՝ Կոմիտասի տաղանդավոր սաներից մեկի, այլ մի ամբողջ սերունդի, խոստովանություն ու վկայություն ոչ միայն «առաջի աստուծու և մարդկան», այլ «յանդիման փորձութեան և փրկութեան»:

4

Հիվանդ Կոմիտասին այցելողները վկայում են, որ նրա մըթազուլ ուղեղն ունենում էր նաև լուսավորյալ վայրկյաններ: Այսպիսի մի պահի Փ. Թերլեմեզյանի «Կերգե՛ս» հարցին պատասխանել է. «Ես հիմա ինձ համար եմ երգում, և այն էլ ջատ կամաց»:

Դժվար չէ երևակայել ցավը Թերլեմեզյանի, որ հնարավորություն չի ունեցել Կոմիտասին հայտնելու, թե որքան բարձր ու վսեմ է զողանջում նա՝ ջրթերից մի ամբողջ ազգի, հոգիների մեջ մի ամբողջ ժողովրդի:

Եվ սա սկիզբն է միայն, որ պիտի հարատևի:

...Բայց դեռ կան, ի ցավ մեր, ոչ սակավ մարդիկ, որ կարող են կոմիտասյան նշողմանը: Ցակավին հունձ է անում այն էժան երգը, որի միակ արժանիքը անձաշակ զարդուրումներն

են և չպատճառաբանված այս ու վախը: Քիչ չեն այն բաց պատուհանները, որոնցից դուրս է հորդում ռադիոընդունիչի բողոցը և մեզ ակամա ունկնդիր դարձնում «հարեմական հառաչանքներին ու վավաշոտ թղրտոցներին, շատ սուտ-աշուղական երգերի, ավելացրած դրան սեփական երգերի ցիգանական ինտոնացիաներն իրենց հաճախ գռեհիկ ձգտումներով ու նվոցներով» (Դ. Դեմիրձյան):

Կոմիտասի դիմաքանդակի վրա շարունակում է աշխատել ժամանակը, և նրա մուրճի հարվածների տակ բեկոր առ բեկոր կանհետանան նաև այս կարգի երևույթները: Միայն թե շուտ...

...Հայտնի է, թե կղերական մթին միջավայրում ինչ խլրտում գցեց և ինչ ամբաստանությունների տեղիք տվեց Կոմիտասի ծայնագրվելը սկավառակների վրա: Հիմա անհավատալիության չափ արտառոց է թվում այդ: Բայց մի՞թե պակաս անհավատալի չէ, որ մինչև այսօր էլ մենք չունենք այդ սկավառակների մասսայական թողարկումը և գրկված ենք Կոմիտասին մեր տանն ունենալու, ցանկացած պահին նրան ունկնդրելու անկրկնելի հաճույքից:

Չգիտեմ ովքեր պիտի կարմրեն սրա համար, բայց պիտի որ կարմրեն, վատ չէր լինի նաև, որ քրտնեին, որովհետև այս արդեն ժամանակի բան չէ. պարզապես պետք է ունենալ եթե ոչ վսեմ նկրտում, գոնե... առևտրական շիղ...

...Հայ ժողովրդի երաժշտական ընդունակությունները հայտնի են ամբողջ աշխարհին, և օտարներն էլ գիտեն, որ Երևանը Սովետական Միության երաժշտասեր քաղաքներից մեկն է:

Նետամնաց ժողովուրդ կլինեինք, եթե տապակվեինք մեր ազգային երաժշտության սիրո ձենձերում միայն և անհաղորդ մնայինք համաշխարհային երաժշտության գլուխգործոցներին: Այս բանում, բարեբախտաբար, հանդիմանություն չենք հարուցում: Հայֆիլհարմոնիայի Մեծ ու Փոքր դահլիճները մշտապես լեփլեցուն են լինում, երբ նրանց բեմերից հնչում են եվրոպական և ռուսական հսկաները: Ոչ միայն Մոցարտ ու Գլինկա, Բեթհովեն ու Չայկովսկի, Շուման ու Գրիգ...

ժուկեն ող Պրե, Պալեստրինա, Օրլանդո Լասուս, Պախելբել, Ջեզերո, Ցիպելի...

«Մորալներ», «մեսսաներ», «ավե Մարիաներ», «օրատորիաներ»...

Էլ չեմ հիշում երաժշտական այնպիսի երկեր, ինչպիսիք են Վերդիի և Մոցարտի «ոնջվիեմները», Բախի «Չարլաբանց Մատթեոսին» և ինչու միայն դա — բովանդակ Բախը...

Եվ ամեն անգամ ըմբռնելով օտար ազգերի այդպես կոչված հոգևոր երաժշտությունը՝ չես կարողանում չունենալ մի զգացում, որի մեջ չգիտես, թե ինչն է գերիշխում՝ ցա՛վը, թե զարմանքը:

Եվ ինչպես չցավես կամ չզարմանաս:

Ոչ մի երկրում այնքան հարգի չեն դասականները, որքան մեր աշխարհում: Այդ բանում մենք իսկապես որ կարող ենք մատնանշվել ողջ աշխարհից: Դժվար է երևակայել որևէ սիմֆոնիկ համերգ, որի ծրագրում չլինի հոգևոր երաժշտության մեկ կամ մի քանի համար: Իսկ երգեհոնային համերգները — համարյա թե ամբողջությամբ: Ոչ թե մեր բարության, այլ մեր խելքի ջճնորհիվ երկրորդ կլանք են ապրում 15-16-17-18-րդ դարերի եվրոպական պոլիֆոնիստները՝ գերազանցապես հոգևոր երաժշտության հեղինակները: Եվ «խորալ», «մեսսա», «ոնջվիեմ» բառերը չեն ահաբեկում ոչ մեկիս:

Այսքան խելացի լինելով օտար ժառանգության վերագնահատման ու յուրացման հարցում՝ ինչո՞ւ ենք թիկունք շուտ տալիս մեր ժառանգությունից, — այս հարցն է ահա լեյտմոտիվի պես հնչում շատերիս ականջին:

Չէ՞ որ Կոմիտասի մեծագույն ծառայություններից մեկն էլ ապացուցում էր այն խնդրի, որ հայ հոգևոր երաժշտության ատաղձը ժողովրդականն է:

Ուրեմն ինչ տրամաբանությամբ է ժողովրդականը խլվում ժողովրդից:

Ժողովրդինը պիտի վերադարձնել ժողովրդին:

Դրանով Կոմիտասի դիմաքանդակն էլ կմոտենա ամբողջացման...

ժողովուրդ կոչվածը, ինչ խոսք, կոպր չէ, բայց նաև ինքնատես չէ ու չի էլ կարող լինել, քանի որ ժողովուրդը մի անձ չէ, որ կանգնի հայելու առաջ ու տեսնի իր կան ու չկան: Ժողովուրդն ինքն իրեն տեսնում է՝ նայելով իր այն զավակներին, որ սերել են նրա ոսկրից ու ծուծից, կաղապարվել ըստ նրա հավաքական կերպարի ու ժառանգել ամենայն հայրականը: Ժողովուրդն է ստեղծում նրանց՝ ի մի հավաքելով իր ամբողջ ցանուցի բազմանիստությունը, բայց հենց որ ծնեց՝ ինքը ժողովուրդն էլ լուսավորվում է այդ բազմանիստի ներքին ճառագումից: Այս վերառումով էլ՝ ոչ միայն ժողովուրդն է նրանց ծնում, այլև նրանք են ժողովուրդ վերածնում:

Կոմիտասն այդպիսի ծնունդ էր, և նրա պարզևած լուսը դեռ երկար պիտի անդրադառնա պարզևողի դեմքին և արտացոլվի նրա հոգու մեջ:

Պատմում են, որ «երբ իր (Կոմիտասի— Պ. Ա.) ներկայության ընդունած հայրենակից մը բաժանվելու ատեն փափագ կհայտնե կրկին այցելել, ան կհարե սրտառուչ կերպով. «Վեքադարձին ինձ այլևս չեք գտներ, ես ճամփորդ եմ»:

Ե՛վ սխալվում էր հիվանդ Կոմիտասը, և՛ իրավ էր:

Սխալվում էր, թե իրեն երբևէ կարելի է «հոս չգտնել»— նա հավերժական ներկայություն է:

Իրավ էր, թե՛ «ճամփորդ եմ»:

Իրոք որ նա ճամփորդ է, մի ճամփորդ մշտնջենական, որ ելել է դարերից ու դեպի դարերն է գնում:

Կոմիտասները ծնունդ են հազարամյակների: Նրանց դիմաքանդակը կերտում է ժամանակն ինքը, կերտում է դանդաղ ու անշտապ, ու դեռ վար չի դրել իր մուրճն ու տաշիչը:

Աշխարհակենց պոկոտված քարատաշեղները հավաքելն ու հեռացնելն էլ գործ է՝ արդեն համապատասխան բոլորիս համեստ ուժերին:

Առիթ կա, որ պատճառ արժե: Չփախցնենք այդ առիթները:

24, 26, 27. IX. 61

Ձանախչի

ԲՈՎԱՆՈՎԱԿՈՒԹՅՈՒՆ
Ցայգալուսի համազանգ

Ղողանց	աճետիսի	. . . 8	Ղողանց	արթնության	. . . 18
Ղողանց	որբության	. . . 6	Ղողանց	հպկման	. . . 22
Ղողանց	ցնծության	. . . 9	Ղողանց	մեղապատ	. . . 25
Ղողանց	հուստ	. . . 13	Ղողանց	հայտնության	. . . 33
Ղողանց	ներման	. . . 15	Ղողանց	օծման	. . . 36

Արևագալի համազանգ

Ղողանց	ամառնօրյա	. . . 39	Ղողանց	կոտորածի	. . . 76
Ղողանց	աշնանաշունչ	. . . 46	Ղողանց	զարթոնքի և կենսատման	. . . 78
Ղողանց	ահագնացող	. . . 51	Ղողանց	զարմանքի	. . . 79
Ղողանց	բնաշխարհիկ	. . . 54	Ղողանց	հերոսական	. . . 84
Ղողանց	ցավի և բողոքի	. . . 60			
Ղողանց	պանդխտական	. . . 64			

Միջօրեի համազանգ

Ղողանց	ուխտագնացության	91	Ղողանց	հարսանեկան	. . . 109
Ղողանց	խաղկապի	. . . 95	Ղողանց	մրմոտի	. . . 127
Ղողանց	ձմեռնամոտի	. . . 104			

Ճավալուղ համազանգ

Ղողանց	հրաշագործման	. . . 131	Ղողանց	վայրատման	. . . 163
Ղողանց	հաղթության	. . . 134	Ղողանց	պոլսական	. . . 155
Ղողանց	միջակության	. . . 140	Ղողանց	նվաճման	. . . 159
Ղողանց	հարցման	. . . 147	Ղողանց	մրցավարտի	. . . 167

Եղեռնի համազանգ

Ղողանց	ընդհատված	. . . 169	Ղողանց	աջտրի	. . . 188
Ղողանց	տագնապի	. . . 171	Ղողանց	մթազնումի	. . . 198
Ղողանց	նախճիրի	. . . 173	Ղողանց	ցնորման	. . . 213
Ղողանց	եղեռնական	. . . 184	Ղողանց	անանց սուգի	. . . 215

Ահագնացող արձազանգ

Ղողանց	վերածնման	. . . 219	Ղողանց	թաղման և հարության	. . . 236
Ղողանց	մարմնավորված երազի	. . . 227	Ղիմանկարի ամբողջացման		
Ղողանց	վերադարձի	. . . 229	համար	244
Ղողանց	հրաժեշտի	. . . 234			

Գրական-գեղարվեստական հրատարակություն

Պարույր Ռաֆայելի Սևակ

ԱՆԼՈՒՆԻ ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ

պոեմ

Литературно-художественное издание

Паруйр Рафаелович Севак

НЕСМОЛКАЕМАЯ КОЛОКОЛЬНЯ

Поэма

Ереван, издательство «Хорурдаин грох»
На армянском языке

Խմբ. վարիչ՝ Ստ. Էդ. Թոփչյան

Խմբագիր՝ Ռ. Մ. Մուրադյան

Նկարիչ՝ Լ. Մ. Ծատուրյան

Գեղ. խմբագիր՝ Լ. Ս. Մալխասյան

Տեխ. խմբագիր՝ Մ. Է. Ճանճապանյան

Վերստուգող սրբագրիչ՝ Ռ. Մ. Մուրադյան

ИБ № 6728

Հանձնված է շարվածքի 9. 01. 1990 թ.: Ստորագրված է տպագրության
23. 03. 90: Ֆորմատ 84×108¹/₃₂: Թուղթ՝ տպագր. № 1: Տառատեսակ
«Արմենուիի»: Տպագրություն՝ բարձր, 13,44 պալմ. տպ. մամ., 10,
հրատ մամ.: Տպաքանակ՝ 100.000 (II թողարկում 50001—100000)

Պատվեր 13: Գինը՝ 3 ռ.:

«Խորհրդային գրող» հրատարակչություն, Երևան-9, Տերյան 91:

Издательство «Хорурдаин грох», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀԽՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործեր
պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան-10, Ալավերդյան փող. № 6/
Типография № 1 Госкомитета по делам издательств, полиграфии
книжной торговли Арм. ССР, Ереван, ул. Алавердяна, 65.